ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ ապրիլի 2010 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

6/14.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N Մ-107-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Սի Օ Էյ Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի -ի N 3/3.8-1/-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի -ի N /3-4 եզրակացությունները, ու հաշվի առնելով «Սի Օ Էյ Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամի 2010 թվականի մարտի 25-ի N COAF 1149 գրությունը, ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի մարտի 28-ի N Մ-192-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-107-Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «3000000 դրամ» բառերը փոխարինել «5000000 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

09.04.10թ. № 3/3.8-1/1837-10

Ձեր №

6/14.2

12.04.10.

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 02.04.10.թ. N 174-320 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. մարտի 5-ի N Ս-107-Ա («Սի Օ Էյ Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամ) որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

1730

կատարող՝ Ն. Հարությունյան 595-229

174-541
10.04.10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«09» 04 2010թ.

N 10558/3-4

6.4.

12.04.10.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահի՝
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 02.04.10թ. N174-320 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 5-ի NՍ-107-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սի Օ Էյ Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝ Անուղղակի հարկերի
բնիպագակարգերի բաժին, հեռ.594652

1306

...ՒԹՅԱՆ
174-551
10.04.2010թ.

0015, ք. Երևան, Խորենացի 7
7,M. Khorenatsu str., Yerevan, 0015
0015, Ереван, ул. М. Хоренаци 7
Հեռ.՝ /374-10/ 594 60
Fax: /374-10/ 537 12

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 6)

30 ապրիլի 2010թ. ժամը 15[00]

1. «Առողջապահության համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին:
(Զարուհի Բեգլարյան)

2. «Առաջինը՝ երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն» ծրագրի մասին:
(Լիլիթ Աթաջանյան)

3. «Վորլդ վիժն ինքերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թիվ 11 նախակրթարանի մասնակի վերանորոգում և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում» ծրագրի մասին:
(Քրիստինե Միխաիլիդի)

4. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի մասին:
(Լարիսա Սինասյան)

5. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Ա. Բարխուդարյան)

5.1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 5):

5.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԱԿ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 20-ի N Ս-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ):

5.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Ս-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):

5.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 10-ի N Ս-489-Ա և Ս-490-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Փարոս» բարեգործական հիմնադրամ):

5.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 12-ի N Ս-40-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ):

6. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին
(Ա. Բարխուդարյան)

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի N Ս-851-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ):

7. Այլ հարցեր

7.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Ս-442-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի և բեռի ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):

Հավելված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԴՈՒՍԵՆԼՅԱՆՏՈՒ» ՓԲԸ-ԻՆ ԳՈՐԾԸՆԿԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Գ Իր

_____ թվականի N - Ն

գրանցման թիվ

Գործընկալման որակի գործընթացի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դուսենլյանտու» ՓԲԸ-ի հետ կնքված 2010 թվականի ապրիլի 2-ի N128-ՏՕ-2027 գործարքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի N3/3.8-1/2099-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի ապրիլի 15-ի N 542-10, Հայաստանի Հանրապետության կոմիտեի 2010 թվականի ապրիլի 16-ի N 114083/3-6, եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

1. Բարեգործական որակման ծրագրերի Հայաստանյան Հանրապետության առողջապահության նախարարության «Դուսենլյանտու» ՓԲԸ-ի հետ կնքվող գործարքի հաստատման մասին հավելվածին համաձայն գործարքի գումարը 3 ՀՀԴ՝ 02507171 (հիսունհազար հարյուր յոթանասուն մեկ) ամերիկյան դոլարի համարժեքով «ընտրություն գործարքի գումարի» (գնի) (գնի) ներկայացնելու առաջարկի գործընթաց:

2. Առաջարկվող գործընթացի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի կողմից 1-ին տարվա ընթացքում 2010թվականի ապրիլի 1-ից մինչև 2012 թվականի մարտի 31-ը ընդգրկված ծրագրերի իրականացման տևողությունը (գնի) (գնի) ընտրության գործընթացում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման օրվանից:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Հ. Ասատրյան

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Սայադյանի կողմից «27» Մարտ 2010թ.

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ է

«Առողջապահական համակարգի հզորացում»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Առողջապահական համակարգի հզորացում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է, ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» համաձայն օգտվել ԱԱՀ-ի և մաքսային արտոնություններից
3.	Բարեգործը	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամ 1214 Վերներ – ժմն, Շվեցարիա
4.	Ծրագիրը կատարողը	ՀՀ առողջապահության նախարարության, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակարգող խումբ Կառավարության 3 շենք ՀՎՀՀ 02507171
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրով նախատեսվում է կազմակերպել միջոցառումներ ք. Երևանում և ՀՀ բոլոր մարզերում: Ծրագրի հիմնական բնագավառը Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգն է:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 1 174 082.2 Եվրո:
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներ են հանդիսանում ՀՀ-ում պալիատիվ խնամք ստացող ՄԻԱՎ-ով ապրող հիվանդները, դոնորական արյուն ստացողները, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժմամբ և կանխարգելմամբ զբաղվող բժշկական հաստատությունները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի իրականացման տևողությունն է 2010 թվականի ապրիլի 1-ից մինչև 2012 թվականի մարտի 31-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Համաձայն 2009 թվականի հոկտեմբերի 29-ին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի և ՀՀ առողջապահության նախարարության միջև կնքված պայմանագրի, նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.	
		Նպատակ 1	**Մշակել Ազգային առողջապահական համակարգի աշխատուժի ռազմավարություն**
		Նկարագրությունը	Քարտեզավորել ներկայիս առողջապահական աշխատուժի տեղակայումը, հայտնաբերել առողջապահական համակարգի կարիքները բուժ.աշխատողների քանակի, մասնագիտության և հմտությունների վերաբերյալ, նորացնել տեղեկատվական համակարգը բուժաշխատուժի հոսքի վերաբերյալ, մշակել գումարային և ոչգումարային խրախուսման մեթոդներ հեռավոր տարածքներում բուժաշխատողներին գրավելու ու պահելու նպատակով, մշակել շարունակական մասնագիտական զարգացման քաղաքականություն բոլոր տեսակի բուժաշխատողների համար, վերանայել Պետական բժշկական կրթական հաստատություններում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի առկա ուսուցողական ծրագրերը և մշակել նոր ծրագիր բուժքույրերի ու բժիշկների համար:
		Եռամսյակ II	18 365 Եվրո
		Եռամսյակ III	7 705 Եվրո
		Եռամսյակ IV	20 930 Եվրո
		Ընդհանուր 1 Տարի	**47 000 Եվրո**
		Եռամսյակ V	15 950 Եվրո
		Եռամսյակ VI	9 010 Եվրո
		Եռամսյակ VII	14 781.3Եվրո
		Եռամսյակ VIII	53 799.6 Եվրո
		Ընդհանուր 2 Տարի	**93 541 Եվրո**
		Ընդամենը 1 և 2 Տարիներ	**140 541 Եվրո**
		Նպատակ 2	**Մշակել Պալիատիվ խնամքի ծեռնարկները և ներդնել ազգային առողջապահական համակարգում**
		Նկարագրությունը	Վերանայել պալիատիվ խնամքի ներկայիս ծառայությունները, վերլուծել օպիոիդների ներկայիս քաղաքականությունը, փորձարկել պալիատիվ խնամքի տարբեր մոդելները, ուսումնասիրել հնարավոր ֆինանսական մեխանիզմները և մշակել հաստատման առաջարկություններ, վերանայել պալիատիվ խնամքի առկա կրթական ծրագրերը և մշակել նոր ուսուցողական մոդուլներ:
		Եռամսյակ II	15 322.5 Եվրո
		Եռամսյակ III	3 292.5 Եվրո
		Եռամսյակ IV	20 522.5 Եվրո
		Ընդհանուր 1 Տարի	**39 147.5 Եվրո**
		Եռամսյակ V	19 622.5 Եվրո
		Եռամսյակ VI	33 232.5 Եվրո
		Եռամսյակ VII	17 792.5 Եվրո

		Եռամսյակ VIII	68 075 Եվրո
		Ընդհանուր 2 Տարի	**138 722.5 Եվրո**
		Ընդամենը 1 և 2 Տարիներ	**177 870 Եվրո**
		Նպատակ 3	**Հզորացնել Ազգային առողջապահական տեղեկատվական համակարգը և ազգային առողջապահական տեղեկատվական համակարգում ներդնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ, ՏԲ և մալարիա ծրագրերի տեղեկատվական համակարգերը**
		Նկարագրությունը	Վերանայել տվյալների աղբյուրները, տեղեկատվության ներկայիս հոսքը և մշակել առաջարկություններ նոր ինտեգրված համակարգի համար, մշակել ազգային ցուցանիշներ և տվյալների հաշվետվական ձևեր, մշակել և նորացնել տվյալերի հավաքագրման ու կառավարման ծեռնարկները, գործիքները և ձեւերը, հարմարեցնել Միջազգայնորեն ընդունված հիվանդությունների դասակարգումը, նորացնել առողջապահական վիճակագրությանը վերաբերվող օրենսդրությունը, հզորացնել առողջապահական տեղեկատվության կենտրոնական եւ մարզային կարողությունները:
		Եռամսյակ II	2 960 Եվրո
		Եռամսյակ III	17 305 Եվրո
		Եռամսյակ IV	6 410 Եվրո
		Ընդհանուր 1 Տարի	**26 675 Եվրո**
		Եռամսյակ V	44 895 Եվրո
		Եռամսյակ VI	28 820 Եվրո
		Եռամսյակ VII	3 300 Եվրո
		Եռամսյակ VIII	19 780 Եվրո
		Ընդհանուր 2 Տարի	**96 795 Եվրո**
		Ընդամենը 1 և 2 Տարիներ	**123 470 Եվրո**
		Նպատակ 4	**Մշակել և իրականացնել Արյան անվտանգության ազգային ռազմավարություն**
		Նկարագրությունը	Մշակել և վերահսկել արյան անվտանգության ռազմավարության իրականացումը, մշակել ու բաժանել արյան չվճարվող դոնորությունը խրախուսող նյութեր, վերակառուցել արյան անվտանգության կենտրոնները, ապահովել արյան փոխներարկման կայանները բուժ. սարքավորումներով եւ համապատասխան ախտորոշիչ թեսթերի հավաքածուներով, կրթել աշխատիկցներին, հիմնել արկա արյան դոնորների միասնական գրանցամատյան:
		Եռամսյակ II	3 770 Եվրո
		Եռամսյակ III	8 770 Եվրո
		Եռամսյակ IV	445 215.7 Եվրո
		Ընդհանուր 1 Տարի	**457 755.7 Եվրո**
		Եռամսյակ V	19 243 Եվրո
		Եռամսյակ VI	96 045.5 Եվրո
		Եռամսյակ VII	9 575 Եվրո
		Եռամսյակ VIII	10 365 Եվրո

		Ընդհանուր 2 Տարի	135 228.5 Եվրո
		Ընդամենը 1 և 2 Տարիներ	592 984.2 Եվրո
		Նպատակ 5	Զարգացնել գերակայող հիվանդությունների համար դեղորայքի և պարագաների գնման ու մատակարարման ներուժը
		Նկարագրությունը	Վերանայել դեղորայքի գնման ներկայիս մեխանիզմները և մշակել մեխանիզմներ շահառուների միջև գնման և մատակարարման գործընթացը լավ համակարգելու նպատակով, մշակել բուժման ուղեցույցներին համապատասխան դեղորայքի նոր ցանկ, գրանցել դեղորայքը «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ում, մշակել բուժհաստատություններում դեղորայքի օգտագործման մոնիթորինգի համար ստանդարտ ձև, օգտագործել հավաքված տվյալները հետագա գնումները պլանավորելիս:
		Եռամսյակ II	2 720 Եվրո
		Եռամսյակ III	8 060 Եվրո
		Եռամսյակ IV	8 098 Եվրո
		Ընդհանուր 1 Տարի	18 878 Եվրո
		Եռամսյակ V	33 680 Եվրո
		Եռամսյակ VI	6003 Եվրո
		Եռամսյակ VII	1 430 Եվրո
		Եռամսյակ VIII	10 630 Եվրո
		Ընդհանուր 2 Տարի	51 743 Եվրո
		Ընդամենը 1 և 2 Տարիներ	70 621 Եվրո
10.	Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների հպմառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել (ներմուծել) հետևյալ ապրանքները ու ծառայությունները (տվյալ գործարքների շրջանակներում ակընկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում). 1. Արյան փոխներարկման կայանների հզորացում (բժշկական սարքավորումներ, պահպանման ծախսեր, ախտորոշիչ թեստեր և այլն) – 517 966.2 Եվրո, որից ախտորոշիչ թեսթ հավաքածուների ներմուծման համար նախատեսվում է - 112 459.2 Եվրո (առաջին տարին – 46 330.6 Եվրո, երկրորդ տարին – 66 128.6 Եվրո): 2. Ռազմավարությունների և կրթական նյութերի մշակում, փորձարարական ծրագրի մշակում և փորձարկում – 169 100 Եվրո: 3. Դասընթացների կազմակերպում, հանդիպումներ, թարգմանություն, տեխնիկական աջակցություն – 293 370 Եվրո: 4. Հետազոտություններ, մոնիթորինգային այցեր – 69 570 Եվրո: 5. Համակարգիչների ձեռք բերում, պահպանման ծախսեր, գրենական պարագաներ – 9 180 Եվրո: 6. Տեղեկատվական նյութերի մշակում, տպագրություն, համակարգչային ծրագրի մշակում և ներդնում – 46 300 Եվրո:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր, որոնք ներառում են համակարգող խմբի աշխատավարձերը, հարկերը և այլ վճարները, համակարգող խմբի գրենական պիտույքներ, կապի և սուրհանդակային ծառայություններ, ադմինիստրատիվ պահպանման ծախսեր – 68 596.6 Եվրո:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Խ.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ»-ի, ՀՀ ԱՆ «Պրոֆեսոր Ռ.Օ.Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն»-ի, ՀՀ ԱՆ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն»-ի, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի և այլ կազմակերպությունների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամին, Հիմանդրամի տեղային գործակալին, ՀՀ առողջապահության նախարարությանը, ՀՀ ֆինանսների նախարարությանը, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

15.04.10թ. № 2/3.8-1/2083-1

Ձեր № ____

ԱՐ. 6/1

16.04.10.

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 08.04.10թ. N 171-356 գրության՝ «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ որոշման նախագծից և կից ներկայացված ծրագրից պարզ չէ արդյոք ծրագրի շրջանակներում բեռների ներմուծում նախատեսվում է, թե ոչ: Եթե այդպիսիք նախատեսված են, ապա անհրաժեշտ է ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում առանձին պարբերությամբ արտացոլել նաև ներմուծվող ապրանքների համառոտ նկարագիրը, տեսականին, ծավալները և նախատեսվող գումարը:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

Կատարող՝ Ն.Հարությունյան 595229

1332

ՀՀ ... ԱՐՈՒԹՅԱՆ
171-42
«16» 04 2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078 Երևան, Հալաբյան 41ա, հեռ. 380385
էլ. փոստ malkhasyan@justice.am

542-10 15042010

ԱՐ. 6/1

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
Պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

16.04.10

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի կողմից իրականացվող «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ հայտնում ենք, որ

Ծրագրի 5-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել և հստակ նշել Հայաստանի Հանրապետության այն մարզերը, որտեղ իրականացվելու է այդ բարեգործությունը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ծրագրի 7-րդ կետից անհրաժեշտ է հանել «բժիշկների, բուժքույրերի» վերաբերյալ դրույթները, քանի որ ծրագրով վերջիններիս վերաբերյալ որևէ բան նախատեսված չէ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

1334

Կատարող՝ իրավական ակտերի փորձաքննության վարչություն
Հ. Նիկողոսյան

Ա 171-356

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
171-410
Մուտք «16» 04 2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«16» 04 2010թ. N 11408/3-4

16.04.10.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 08.04.10թ. N171-356 գրությանը կից ներկայացված «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝ Անուղղակի հարկերի ընթացակարգերի բաժին, հեռ.594652

1393

ՀՀ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
171-211
16 04

0015, ք. Երևան, Խորենացի 7
7,M. Khorenatsu str., Yerevan, 0015
0015, Ереван, ул. М. Хоренаци 7

Հեռ.՝ /374-10/ 594 605
Fax: /374-10/ 537 125

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունում գործող «Ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն Լուսինե Բեգլարյանի կողմից ներկայացված «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին կարծիքի մասին

Դիտողություն կամ առաջարկություն բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարության դիտողություններ և առաջարկություններ	
Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ որոշման նախագծից և կից ներկայացված ծրագրից պարզ չէ արդյոք ծրագրի շրջանակներում բեռների մերձավոր նախատեսվում է, թե ոչ: Եթե այդպիսիք նախատեսված են, ապա պետք է սահմանել ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում առանձին պարբերությամբ արտացոլել նաև մերձավոր ապրանքների հասանելիության ցանկը, ծախսերը և նախատեսվող գումարը:	Կառավարությունը մերժում է տարբերությունները:
ՀՀ արդարադատության նախարարության դիտողություններ և առաջարկություններ	
Որոշման նախագծի վերաբերյալ, հայտնում ենք, որ ծրագրի 5-րդ կետում սահմանված է խմբագրել և հստակ նշել Հայաստանի Հանրապետության այն մարմինը, որտեղ իրականացվելու է այդ բարեգործությունը: Միաժամանակ հայտնում ենք, որ ծրագրի 7-րդ կետից անհրաժեշտ է հանել «բժիշկների, բուժքույրերի» վերաբերյալ դրույթները, քանի որ ծրագրով վերջիններս վերաբերյալ որևէ թաք նախատեսված չէ:	Կառավարությունը ներկայացրել է ծրագրի լրամշակված տարբերակը (կցվում է): Ուշադրություն է դարձվել տարբերակում

ԱՐ.6/1

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

———— 2010 թվականի ՆՄ- -Ա Հր.6/2
քաղ. Երևան

«ԱՌԱՋԻՆԸ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆՀՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի փետրվարի 26-ի N 3/3.8-1/775-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի հունվարի 26-ի N Ե281, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի փետրվարի 26-ի N Ե2010-1875, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի հունվարի 22-ի N 04/07.2/292-10, Հայաստանի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի փետրվարի 3-ի N 12/8-22-345, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2010 թվականի փետրվարի 11-ի N ՊՆ/510-ԱՊ-69, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մարտի 2-ի N 5917/3-4, Երևանի քաղաքապետի 2010 թվականի հունվարի 27-ի N02/34-720h ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի փետրվարի 4-ի N19/122-10 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Բարեգործական որակել «Առաջինը՝ երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2010 թվականին իրականացվող՝ 17000000 դրամ ընդհանուր արժողությամբ «Անհոգ մանկություն» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Առաջինը՝ երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին ու Դիլիջանի քաղաքապետին:

Հր.6/2

«ԱՌԱՋԻՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2010թ. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆՀՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1.	*Ծրագրի նպատակը*	Օժանդակություն աղքատ, բազմազավակ երեխաներին և ծերերին: Աջակցություն աղքատության մեջ գտնվող սոցիալապես անապահով ընտանիքներին, միայնակ և կարիքավոր ծերերին, Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքներին և երեխաներին:
2.	*Ծրագրի բարեգործական որակման նպատակը.*	ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը:
3.	*Բարեգործը.*	Ծրագիրը ֆինանսավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների «Հայրենիք» միության, Պոլսահայ բարերար Ա. Էոգանի, անհատ բարերարներ Պերճ Քարքալ-օղլու և Ժիլբեր Մոմջյանի կողմից:
4.	*Ծրագիրը կատարողը*	Ծրագիրն իրականացնում է «ԱՌԱՋԻՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» բարեգործական հասարակական կազմակերպությունը ՀՎՀՀ՝ 02560514: ՀՀ ք. Երևան Հանրապետության հրապարակ, կառավարական տուն N2
5.	*Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը.*	Ծրագիրն առընչվում է սոցիալական, առողջապահական և կրթական բնագավառին ընդգրկելով է Հայաստանի Հանրապետության ք.Երևանը, Տավուշի մարզի ք. Դիլիջանը, Արագածոտնի և Կոտայքի մարզերը, Լոռի մարզի Վանաձորի քաղաքապետարանը, Լոռու մարզի Սպիտակի մանկատունը, Գեղարքունիքի մարզի Վարդենիսի հիվանդանոցը::
6.	*Ծրագրի բյուջեն.*	Ծրագրի կողմնորոշիչ արժեքն է 17000000դրամ
7.	*Բարեգործություն ստացողը.*	Ծրագրում ընդգրկված են Դիլիջան քաղաքի Կաղնի Խաչի քաղամասի, թիվ 1 մանկապարտեզի, ինչպես նաև Երևան քաղաքի / Արեւ և Մոնիկ Երկանյանների / թիվ 53 դպրոցի մի մասնաշենքի 3 րդ հարկը 6-16 տարեկան երեխաներ, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, ընտանիքներում: Երեխաների մեծ մասը հաշմանդամ ծնողներ ունեն, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ են: Ծրագրում ընդգրկված են նաև Երեխաների զարգացման կենտրոնը /որտեղ հաճախում են աուտիզմով հիվանդ երեխաներ/: Շահառուների ցուցակները կազմվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին՝ ընտանիքների սոցիալական նկարագրերի մանրամասն ուսումնասիրությունների հիման վրա: Ծրագրի շահառուներ են հանդիսանում 300-ից ավելի ընտանիքներ Ծրագրի շահառուներն են նաև բեռների մանվազ ներմուծման դեպքում՝ Սպիտակի մանկատունը, Արագածոտնի, Կոտայքի մարզերը, Վարդենիսի հիվանդանոցը, Նորքի տուն ինտերնատը, Վանաձորի մանկատունը և ըստ դիմումների բարեգործական հասարակական կազմակերպությունները:
8.	*Ծրագրի իրականացման տևողությունը*	Ծրագիրն սկսել է 2004 թվականի ապրիլին ՆՄ-151-Ա և այն շարունակական է:Սույն ծրագիրը իրականացվելու է 2010 թվականի ընթացքում:
9.	*Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը.*	• Դիլիջանի /50 երեխաներ/ և Երևանի /50 երեխաներ • / կենտրոններ հաճախող երեխաներին փետամիններով և հանքային ջրերով հարուստ /չաքարը 5օր/ տաք սննդի մատուցում կողմնորոշիչ արժեքը 5000000 դրամ • առաջին եռամսյակ՝ 1250000 դրամ • երկրորդ եռամսյակ 1250000 դրամ • երրորդ եռամսյակ 1250000 դրամ • չորրորդ եռամսյակ 1250000 դրամ • դպրոցահասակ երեխաների [illegible]

1

Հր.6/2

		պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո /շաբաթը 5օր/ Երեխաներին գրենական պիտույքների, ուսումնական նյութերի պայուսակների ապահովում կողմնորոշիչ արժեքը .2000000դրամ ▪ առաջին եռամսյակ 500000դրամ ▪ երկրորդ եռամսյակ 500000դրամ ▪ երրորդ եռամսյակ 500000 դրամ ▪ չորրորդ եռամսյակ 500000դրամ ▪ բժշկական ծառայություններ / ակնաբուժի, ատամնաբուժի/ բժշկական վերահսկողություն /շաբաթը 5օր/ Ծառայությունները իրականացվում են անհատույց: ▪ հոգեբանական ծառայություններ՝ հոգեբանական աջակցության կազմակերպում , անհատական և խմբային թերապիաներ Ծառայությունները իրականացվում են անհատույց: ▪ սոցիալական ծառայություններ՝ Ծառայությունները իրականացվում են անհատույց: ▪ կրթական ծառայություններ՝ կենտրոնի երեխաների համար անվճար մաթեմատիկայի, հայոց լեզվի, ռուսաց լեզվի, օտար լեզվի, համակարգչի, պարի, ասեղնագործության, հայ եկեղեցու պատմության /կրոնի/ անվճար դասընթացների կազմակերպում Ծառայությունները իրականացվում են անհատույց: ▪ 6-16 տարեկան երեխաների ամառային հանգստի կազմակերպում բակային և ամառային ճամբարներում Ճամբար հաճախելու են Երևան քաղաքի / Արետ և Մոնիկ Երկանյանների / թիվ 53 դպրոցի 6-16 տարեկան երեխաները նաև թիվ 162 մանկապարտեզի երեխաներ: ▪ պատմա - մշակութային արժեքների հետ շփում ամիսը 1 անգամ սպորտային և մշակութային ծրագրերի կազմակերպում Ծառայությունները իրականացվում են անհատույց: ▪ արտասահմանից բեռների ներմուծում կողմնորոշիչ արժեքը 10 000000 դրամ ▪ առաջին եռամսյակ 2500000դրամ ▪ երկրորդ եռամսյակ 2500000 ▪ երրորդ եռամսյակ 2500000 ▪ չորրորդ եռամսյակ 2500000 Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 17000000 դրամ
10.	*Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, , ծավալները, նախատեսվող գինը*	Ներմուծումներ բարերարների կողմից /հագուստ, կենցաղային տեխնիկա, հիգիենիկ և բժշկական պարագաներ, գրենական պիտույքներ, կահույք սենդամբերք, կողմորոշիչ արժեքը 10000000դրամ
11	*Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը*	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում
12	*Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ .*	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ շահառուների ցուցակների ճշտման կապակցությամբ: Ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի. ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության , ՀՀ պաշտպանության նախարարությունների հետ:

13.	*Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը,*	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ▪ Ամերիկայի Միացյալ Նահանգների բարերարների ▪ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից:

«ԱՌԱՋԻՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԲՀԿ
Նախագահ՝ Ն. ՕՍԿԱՆՅԱՆ

Հր.6/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

26.02.10թ № 3/3.8-1/775-10

Ձեր №

ԴՐ.6/2

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

1.02.10

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ուսումնասիրելով «Առաջինը երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպության 23.02.10.թ. գրությունը և ի լրումն մեր 01.02.10թ. N 3/3.8-1/285-10 գրության՝ հայտնում ենք որ «Անհոգ մանկություն» ծրագրի լրամշակված տարբերակի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

կատարող՝ Ն. Յարությունյան
հեռ. 595-229

ՀՀ ... ՈՒԹՅԱՆ
174-342
01 03 10

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, ք. Երևան, Հալաբյան 41/ա, հեռ. 380-227

«26» 01 2009 թ. N 281

ԴՐ.6/2

29.01.10

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
Պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 2010թ. հունվարի 20-ի թիվ 174-40 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

«ԱՌԱՋԻՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2010թ. իրականացվող «ԱՆՀՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ» բարեգործական ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

174-88
28 01 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

26 Փետրվար 2010թ.

No Ե2010-1875

Ձեր 20.01.2010
N 174-40

ԶՐ·6/2

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

2.03.10.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն Նախարարության թիվ Ե2010-436 գրության՝ <<<<Առաջինը՝ երեխաներին>> բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող <<Անհոգ մանկություն>> բարեգործական ծրագրի մասին>> ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի կապակցությամբ ներկայացված կարծիքի, հայտնում եմ, որ հաշվի առնելով 25.02.2010թ-ին կազմակերպության կողմից ներկայացված գրավոր պարզաբանումները, ներկայացված ծրագիրը բարեգործական որակելու կապակցությամբ առաջարկություններ եւ դիտողություններ չունենք:

Հարգանքներով՝ Ա. Ասատրյան

Կատ՝ Բարեգործական ծրագրերի համակարգման բաժին
010 52 58 93

0010, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Կառավարական շենք թիվ 3
հեռ. (374 10) 526831, Ֆաքս. (374 10) 563791
http://www.mss.am

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
174-348
02 03 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

HEAD OF STAFF

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ерван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: headofstaff@edu.am, www.edu.am

N04/07.2/292-10.22 01 2010

ԶՐ·6/2

27.01.10

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 20.01.10, թիվ 174-40 գրության, հայտնում ենք, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Առաջինը երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Անհոգ մանկություն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

Ս.ՄԻՆԱՍՅԱՆ

Կատ.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777

174-76
27 01 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարության շենք N3
Հեռ.՝ (+374 10) 58 24 13
Ֆաքս՝ (+374 10) 56 27 83
Էլ. փոստ՝ minister@moh.am

03.02.10. N 02/3-22-345

Ձեր N ________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 20.01.2010թ. թիվ 174-40 գրության կապակցությամբ՝ «Առաջինը՝ երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ, հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող՝ Գ. Մաղակյան
Հեռ. 52-27-21

174-135
05. 02. 10.

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան 0044, Բագրևանդի փ. 5
Հեռ. (+37410)29-44-01
Ֆաքս. (+37410)29-43-12

«11» 02 2010թ.
ԳԱ/51ՏՐ-ԱԿ-69

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

2010 թվականի հունվարի 20-ի Ձեր N 174-40 գրության առնչությամբ հայտնում եմ, որ «Առաջինը՝ երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Անհոգ մանկություն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավար Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 174-195
12 02 2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«02» 03 2010թ. N 5917/3-4

ԱՐ·6/2

2.03.10.

«Առաջինը երեխաներին» բարեգործական
հասարակական կազմակերպության տնօրեն՝
Լ. Աթաջանյանին

✓ *պատճենը՝* ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Ի լրումն ՀՀ ԿԱ ՊԵԿ 30.01.09թ. N 2196/3-4 գրության հայտնում եմ, որ Ձեր 23.02.10թ.-ի գրությանը կից ներկայացված «Անհոգ մանկություն» ծրագրի լրամշակված տարբերակի վերաբերյալ լրացուցիչ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

*Կատարող՝ Անուղղակի հարկերի
ընթացակարգերի բաժին, հեռ.594652*

174-323
02 03 10

0015, ք. Երևան, Խորենացի 7
7,M. Khorenatsu str., Yerevan, 0015
0015, Ереван, ул. М. Хоренаци 7

Հեռ.՝ /374-10/ 594 605
Fax: /374-10/ 537 125

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան 15, Արգիշտիի փողոց №1

№ 02/34-7204 «27» 01 2010 թ.

Ձեր _____

ԱՐ·6/2

1.02.10

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 15.01.2010թ. հ.174-40 գրության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Առաջինը երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Անհոգ մանկություն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ այն քննարկվել է Երևանի քաղաքապետարանում: Պարզվել է, որ հիշյալ կազմակերպությունը զբաղեցնում է նաև Երևանի թիվ 53 դպրոցի մի մասնաշենքի 3-րդ հարկը, թիվ 162 մանկապարտեզ Երևան քաղաքում գոյություն չունի և 10 տարեկան երեխաները մանկապարտեզ չեն հաճախում /7-րդ կետ/: Անհրաժեշտ է հստակ մեկնաբանել 8-րդ կետի «սոցիալական ծառայություններ՝ ծառայությունները իրականացվում են անհատույց» տողը:

Ծրագիրը թերի է /մասնավորապես 7-րդ և 8-րդ կետերը/ և վերանայման է արժանի, որից հետո միայն կարող ենք կարծիք ներկայացնել:

Հարգանքով՝ Կ. ԱՐԵՅԱՆ

Կատ. Ռ. Զաքարյան
հեռ. 51 41 79

174-98
01 03 10

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

4001, ՀՀ, ք. Իջևան
4001, PA, г, Иджеван
Ijevan, RA, 4001

հեռ. /0263/ 3-23-56, 4-00-45
Ֆաքս՝ /факс, fax / /0263/ 4-00-45

N 19/122-16 « 04 » փետրվարի 2010 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ
Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ա/ր-6/2

9.02.10.

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ձեր 20.01.2010թ. թիվ 174-40 գրության կապակցությամբ հայտնում եմ, որ «Առաջինը՝ երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպությունը դեռևս 2007թվականին «Անհոգ մանկություն» ծրագրի սահմաններում վերանորոգել է Դիլիջանի թիվ 11 մանկապարտեզի մեկ մասնաշենքը: Ներկայումս առաջարկվող ծրագրով նախատեսվում է Դիլիջանի թիվ 11 մանկապարտեզ հաճախող 50 երեխաներին վիտամիններով և հանքային նյութերով հարուստ / շաբաթը 5 օր / տաք սննդի մատուցում, դպրոցահասակ երեխաների դպրոցական, տնային պարապմունքների կազմակերպում, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների տրամադրում, բժշկական, սոցիալական, կրթական ծառայությունների անհատույց իրականացում:

Ծրագիրը քննարկվել է մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում և Դիլիջանի քաղաքապետարանում:

Ծրագրի նկատմամբ առարկությունների չկան: Գտնում եմ, որ այն կարելի է որակել բարեգործական:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

Կատարող Ա. Մարկոսյան

174-148
08 02 10

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Առաջինը երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2009-2010 թվականներին իրականացվող «Անհոգ մանկություն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
Երևանի քաղաքապետարանի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ	
Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են, որ թիվ 162 մանկապարտեզ Երևան քաղաքում գոյություն չունի և 10 տարեկան երեխաները մանկապարտեզ չեն հաճախում (7-րդ կետ): Անհրաժեշտ է հստակ մեկնաբանել 8-րդ կետի «սոցիալական ծառայություններ՝ ծառայությունները իրականացվում են անհատույց» տողը:	Կազմակերպությունը ներկայացրել է ծրագրի լրամշակված տարբերակը (կցվում է):

Ա/ր-6/2

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ ապրիլի 2010 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

ԶՐ. 6/3

«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԲԱԹՈՒՄ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 11 ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԳԵՂԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի -ի N 3/3.8-1/, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի -ի N ե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի -ի N /3-4 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի ապրիլի -ի N եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող՝ 3439200 դրամ ընդհանուր արժողությամբ «Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թիվ 11 նախակրթարանի մասնակի վերանորոգում և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երիցվանք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09405726) 2010 թվականի մարտի 22-ին կնքված՝ N WVA/KAP ADP/CW-10/002 պայմանագրերում նշված գործարքն, որով նախատեսվում է մասնակի վերանորոգման և խաղահրապարակի կառուցման աշխատանքների իրականացում՝ 3439200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպությանը ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Գրեհեմ Սթրոնգ

29 ապրիլի, 2010թ

Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թիվ 11 նախակրթարանի մասնակի վերանորոգում և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում

ԶՐ. 6/3

Ծ Ր Ա Գ Ի Ր

1	Ծրագրի նպատակը	Բարելավել երեխաների զարգացմանը նպաստող պայմանները՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թ. 11 նախակրթարանի մասնակի վերանորոգման և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցման միջոցով:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ազատել Ավելացված արժեքի հարկից՝ ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքների իրականացնող «Երիցվանք» ՍՊԸ-ին, համաձայն ՍՊԸ-ի հետ կնքված՝ WVA/KAP ADP/CW-10/002 պայմանագրի *(պատճենը կցվում է):*
3	Բարեգործը	Ծրագիրը ֆինանսավորվում է «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի գրասենյակի կողմից:
4	Ծրագիրը կատարողը	Ծրագրի անմիջական կազմակերպողը, իրականացնողը և պատվիրատուն հանդիսանում է Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը՝ այսուհետ Վորլդ Վիժն Հայաստան *(հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755).*
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թ. 11 նախակրթարան և Գեղանուշ համայնք: Բանագավառը՝ սոցիալական:
6	Ծրագրի բյուջեն	Խաղահրապարակի կառուցման և նախակրթարանի մասնակի վերանորոգման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 3,439,200 ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Սյունիքի մարզի Կապանի քաղաքապետարանը և Գեղանուշ համայնքի գյուղապետարանը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	փետրվար, 2010 թ. – հունիս, 2010թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	

Միջոցառումների նկարագրությունը	ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ
բաց մրցույթի կազմակերպում, շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուի ընտրություն	փետրվար-մարտ, 2010թ.	չի պահանջվում
Կապալառու կազմակերպության հետ պայմանագրի կնքում՝	մարտ, 2010թ.	չի պահանջվում
Կապանի (Բարաբաթում թաղամասի) թ.11 նախակրթարանի մասնակի վերանորոգում	ապրիլ-հունիս	1,738,412 ՀՀ դրամ
Գեղանուշ համայնքի խաղահրապարակի կառուցում	ապրիլ-մայիս	1,700,788 ՀՀ դրամ

10	Ձեր բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսված աշխատանքների մանրամասն նկարագիրը, ծավալները և գինը ներկայացված են կցված պայմանագրի նախահաշվի մեջ: (տե՛ս ստորև ներդրված աղյուսակը)
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Վորլդ Վիժն Հայաստանը այս ծրագիրն իրականացնելու է տեղական իշխանության /համայնքի ղեկավարի/, մանկապարտեզի տնօրինության և համայնքի բնակիչների հետ համագործակցությամբ: Համայնքը կաջակցի կապալառու կազմակերպությանը շինանյութերի պահետի տրամադրմամբ և հնարավոր չնախատեսված աշխատանքների իրականացման գործում: Վորլդ Վիժն Հայաստանը կկատարի վերանորոգման ընթացքի կանոնավոր մոնիտորինգ: Գեղանուշ համայնքի ղեկավարի և Բարաբաթումի մանկապարտեզի տնօրենի հետ կկնքվեն գրավոր համաձայնագրեր, որտեղ կորոշվեն ծրագրի իրականացման հետ կապված կողմերի ներդրումները և պարտավորությունները ծրագրի ավարտից հետո:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Իրականացման ընթացքի վերահսկողությունը կիրականացվի համայնքի ղեկավարի, մանկապարտեզի տնօրինության և Կապանի Տարածքային Զարգացման ծրագրի (Կապանի ՏԶԾ) շրջանակներում ստեղծված Համայնքային Ակտիվ Խմբի կողմից: Կանոնավոր մոնիտորինգ կիրականացվի նաև Վորլդ Վիժն Հայաստանի տեխնիկական պատասխանատու անձանց կողմից: Ծրագրի ընթացքը կներկայացվի Կապանի ՏԶԾ-ի ծրագրային հաշվետվություններում: Աշխատանքների համար վճարումը կկատարվի փաստացի կատարած աշխատանքի դիմաց՝ համաձայն կատարողական ակտերի՝ բոլոր շահագրգիռ կողմերի ստորագրությամբ: Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:

Row 10, nested table (handwritten across the header: ԺՐ.6/3):

ծառայությունների նկարագրությունը	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ ՀՀ դրամ
թ.11 նախակրթարանի ապամոնտաժման աշխատանքներ և խոհանոցի վերանորոգում	1,461,764
թ.11 նախակրթարանի պահեստամասի վերանորոգում	226,015
թ.11 նախակրթարանում չնախատեսված աշխատանքներ	50,633
խաղահրապարակի հողային աշխատանքներ և խճի նախապատրաստական շերտ	209,850
խաղահրապարակի երկաթբետոնե կոնստրուկցիաներ և բետոնապատման աշխատանքներ	1,141,500
խաղահրապարակի մոնտաժման աշխատանքներ	299,900
խաղահրապարակի չնախատեսված աշխատանքներ	49,538

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

22.04.10թ. № 3/3.8-1/2309-10

Ձեր № ____________

ԺՐ.6/3

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 15.04.10թ. N 173-385 գրության՝ «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թիվ 11 նախակրթարանի մասնակի վերանորոգում և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

կատարող՝ Ն. Հարությունյան 595-229

ՀՀ ... ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ... 173-285 ... 23.04 ... 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078 Երևան, Դավթաշեն 41^а, հեռ. 380385
Էլ. փոստ malkhasyan@justice.am

658-10 20 04 2010

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեփոխումների ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 2010թ. ապրիլի 15-ի 173-385 թվակիր նամակի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից ներկայացված «Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում քաղամասի թիվ 11 նախակրթարանի մասնակի վերանորոգում և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում» ծրագրի 7-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ բարեգործություն ստացող հանդիսանում են ոչ թե Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում քաղամասում և Գեղանուշ համայնքում բնակվող մինչև 12 տարեկան երեխաները և նրանց ընտանիքները, այլ համապատասխան նախակրթարանի սեփականատերը և համայնքը:

Հարգանքով՝ Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Կատ.՝ Իրավական ակտերի փորձաքննության վարչություն
Ա. Մարտիրոսյան հեռ.380.227

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ... ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 173-301
23 04 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«22» 04 2010թ. N 18238/3-1

ՀՀ կառավարության բարեփոխումների ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.04.10թ. N173-385 գրությանը կից ներկայացված «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում քաղամասի թիվ 11 նախակրթարանի մասնակի վերանորոգում և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝ Անտոնյակի հարկերի ընթացակարգերի բաժին, հեռ.594652

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ... ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 173-305
26 04 2010

0015, ք. Երևան, Խորենացի 7
7,M. Khorenatsu str., Yerevan, 0015
0015, Ереван, ул. М. Хоренаци 7
Հեռ.՝ /374-10/ 594 605
Fax: /374-10/ 537 125

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

3301թ.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

"23" ապրիլի 2010թ. № 01/05/776-10 Հր. 6/3

Ձեր 15 ապրիլի 2010 թ. № 173-385

28.04.10.

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Սյունիքի մարզպետարանը հավանություն է տալիս կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի <<Վորլդ վիժն ինթերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող <<Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թիվ 11 նախակրթարանի մասնակի վերանորոգում և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում>> ծրագրի մասին>> որոշման նախագծին:

Այն բարեգործական որակելու վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չկան:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ... ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
173-310
28.04

Կատարող՝ Ա. Ռստաքյան
Հեռ. /0285/ 2-42-10

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թիվ 11 նախակրթարանի մասնակի վերանորոգում և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ	
ծրագրի 7-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ բարեգործությունն ստացող հանդիսանում են ոչ թե Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասում և Գեղանուշ համայնքում բնակվող մինչև 12 տարեկան երեխաները և նրանց ընտանիքները, այլ համապատասխան նախակրթարանի սեփականատերը և համայնքը:	Հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է:

Հր. 6/3

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ապրիլի 2010 թվականի N Մ - Ա 21.6/4
քաղ. Երևան

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԼՈԲԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 20-ի N 3/3.8-1/2205-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի 12-ի N 471-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի փետրվարի 16-ի N Ե2010-1338, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի փետրվարի 15-ի N 03/07.2/829-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի մարտի 26-ի N 12/8-22-1797, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 19-ի N 11585/3-6, Երևանի քաղաքապետարանի 2010 թվականի փետրվարի 11-ի N 02/50-1894հ, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի , ՀՀ Արարատի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 16-ի N 030/203, ՀՀ Արմավիրի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 15-ի N 365, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 19-ի N Ս-1-137, ՀՀ Լոռու մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 17-ի N 004/387-01, ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 16-ի N 01/14.2/392-10, ՀՀ Շիրակի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 18-ի N 01/433-10, ՀՀ Սյունիքի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 11-ի N 09-201, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 15-ի N 01/07.3/243-10 և ՀՀ Տավուշի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 16-ի N 17.4/18910 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Թումանյան 2-րդ փակ., տուն 7/1, ՀՎՀՀ՝ 02535097) իրականացվող՝ մոտ 2000000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային արտոնությունները կարող են տրամադրվել սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրով նախատեսվող ծրագրերի շրջանակներում գործարքների կապակցությամբ՝ այդ ծրագրերը բարեգործական որակելու դեպքում :

21.6/4

3. Առաջարկել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարան, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարան և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի
գործադիր տնօրեն Լարիսա Մինասյանի կողմից

«27» ապրիլի 2010թ.

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի
կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման»

ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	«Բաց հասարակության ինստիտուտ»-ը նախաձեռնել և իրականացնում է «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման ծրագիր» նախկին Խորհրդային Միության, Արևելյան Եվրոպայի և Բալկանյան մի շարք երկրներում: Այս ծրագրի համար հատկացվել է 100 մլն. ԱՄՆ դոլար, որն ուղղված է աջակցելու 20 երկրում, այդ թվում և Հայաստանում, գլոբալ ֆինանսական ճգնաժամի արդյունքում սոցիալական ոլորտում, ինչպես նաև խոցելի խավերի մոտ առաջացած հրատապ խնդիրների հաղթահարմանը: Երկրներում ֆինանսավորումը կատարվելու է «Բաց հասարակության ինստիտուտ»-ի տեղական հիմնադրամների միջոցով՝ հատուկ ընթացակարգի համաձայն: Հայաստանին նախատեսվում է տրամադրել մինչև 2 մլն ԱՄՆ դոլար՝ երկու տարվա ընթացքում – 2010 – 2012թթ: Ծրագրի նպատակն է տրամադրել մարդասիրական օգնություն հասարակության սոցիալապես անապահով և խոցելի անդամներին և նրանց համար ապահովել կենսական նշանակության հիմնական ծառայությունների մատչելիությունը: Ծրագիրն աշխատում է ճկուն մեխանիզմով: Այն կարող է ֆինանսավորել ամենատարբեր նախաձեռնություններ, ինչպես օրինակ՝ օժանդակություն միայնակ ծերերին ձմռան ամիսներին բնակարանների ջեռուցման ապահովման խնդրում, աջակցություն դպրոցներում սննդի կազմակերպման հարցում, իրավաբանական աջակցություն և վերապատրաստման դասընթացներ նոր գործազուրկների համար, և այլն: Ֆինանսավորման պարտադիր պայման է հանդիսանում համաֆինանսավորման առկայությունը՝ պահանջվող

	գումարի 30-50% չափով: «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի իրականացման վերաբերյալ որոշումը կայացվել է 2009թ. հունիսին: 2009թ. հունիս - դեկտեմբեր ամիսների ընթացքում Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղը (ԲՀԻՕՀՀՄ) իրականացրել է կարիքների գնահատում՝ խորհրդակցելով ՀՀ գործադիր մարմինների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր ոլորտներում ակտիվ գործունեություն ծավալող բարեգործական հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների հետ: Մինչ այժմ պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ հատուկ դպրոցների աշակերտների տրանսպորտային կարիքների հետ կապված միջոցների տրամադրման վերաբերյալ: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ սահմանամերձ շրջաններում անապահով ընտանիքների բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների կրթության մատչելիությունը ապահովելու վերաբերյալ (ուսման վարձ, ուսումնական նյութեր,տրանսպորտային ծախսեր): Վորլդ Վիժըն միջազգային կազմակերպության հետ համատեղ իրականացվում է կարիքների գնահատում ՀՀ մարզերի նախադպրոցական հաստատություններին օժանդակություն ցուցաբերելու վերաբերյալ: «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն» կազմակերպության հետ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ մարզերում միայնակ ծերերի խնամքին և կարիքավոր երեխաներին անվճար բուժօգնության տրամադրմանն ուղղված համատեղ ծրագրի իրականացման վերաբերյալ: Կարիքների գնահատման գործընթացը կրելու է շարունակական բնույթ:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է հարկային արտոնությունների ստացում՝ սննդամթերքի, վառելիքի, էլեկտրաէներգիայի, ուսումնական միջոցների, տրանսպորտային ծախսերի վճարման ԱԱՀ-ից ազատում ապրանքների, սարքավորումների ներմուծման և ձեռքբերման դեպքում մաքսային վճարներից և ԱԱՀ-ից ազատում, հեռահաղորդակցման կապի ծառայությունների վարձավճարների ԱԱՀ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱԱՀ-ից ազատում, ավտոմեքենայի և պահեստամասերի ձեռքբերման հետ կապված՝ մաքսավճարների և ԱԱՀ-ից ազատում :

3. Բարեգործը	Ֆինանսավորումը կատարվում է Բուդապեշտի (Հունգարիա) Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի կողմից տրամադրած միջոցների հաշվին:
4. Ծրագիրը կատարողը	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ Գործող հասցե՝ Թումանյան 2-րդ փակուղի, տ. 7/1, Երևան 0002, հեռ. 533862, 536758 Իրավաբանական հասցե՝ Արամի 44 ՀՎՀՀ՝ 02535097
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրագործվում է Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում՝ կրթության, առողջապահության, սոցիալական ոլորտներում:
6. Ծրագրի բյուջեն	ԲՀԻՕՀՀՄ-ի «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի գումարը կազմում է մոտ 2,000,000 ԱՄՆ դոլար՝ երկու տարվա կտրվածքով: Ֆինանսավորումը կատարվում է Բուդապեշտի (Հունգարիա) Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով: Գումարների տրամադրումը ԲՀԻՕՀՀՄ-ին կատարվելու է ըստ ծրագրերի նպատակայնության և կարիքի հիմնավորվածության:
7. Բարեգործություն ստացողը	Երևանի և Հայաստանի բոլոր մարզերի խոցելի խմբերի ներկայացուցիչներ՝ սոցիալապես անապահով երեխաներ, ծերեր, հաշմանդամներ, գործազուրկներ, փախստականներ, անապահով բազմազավակ ընտանիքներ, սոցիալապես խոցելի ուսանողներ, սահմանամերձ համայնքի բնակիչներ, սոցիալապես խոցելի վիճակում գտնվող ընտանիքներ, դպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաներ: Շահառուների ցուցակները կտրամադրվեն տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոլորտում ծրագրեր իրականացնող միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը կիրականացվի 2010 թվականի հունվարի 1-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. «Սնունդ և հիմնական դեղամիջոցներ Արմավիր մարզի սոցիալապես խոցելի գյուղացիներին» ծրագիրն անմիջական օգնություն է տրամադրում 104 սոցիալապես անապահով ընտանիքների (566 անձ): Ծրագրի գումարը կազմում է 24,500 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը՝ հունվար, 2010 թ. – մայիս, 2010թ. 2. «Ձանգակատուն» ծրագրի Երևանի և Վանաձորի սոցիալ-հոգեբանական, կրթական աջակցության կենտրոնները ընդլայնում են իրենց շահառուների շրջանակը՝ յուրաքանչյուրը

	մատուցելով ծառայություններ 75 ընտանիքի (ընդամենը 150 ընտանիք, նախկին 92 ընտանիքի փոխարեն): «Ձանգակատուն»-ն աջակցում է համայնքների զարգացմանը՝ հզորացնելով ընտանիքը և հատկապես հոգալով երեխաների կարիքները: Ծրագիրն ուղղված է աղքատ և խոցելի ընտանիքներին վերականգնողական ծառայություններ մատուցելուն: Ծրագրի գումարը կազմում է 90,478 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը՝ հունվար, 2010թ. – հունվար, 2011թ. 3. «Ամառային ճամբար-Զեռուցման համակարգի տեղադրում», ծրագրի նպատակն է ճամբար հաճախող տարեկան ավելի քան 800 կարիքավոր, միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխայի ապահովել հանգստի առավել լավ պայմաններով ամառվա ամիսներին, ինչպես նաև հնարավոր դարձնել ճամբարի հարմարությունների օգտագործումը ամբողջ տարվա ընթացքում: Ծրագրի գումարը կազմում է 66,824 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը՝ փետրվար, 2010թ. – հունիս, 2010թ. 4. Ծրագիր ուղղված սահմանամերձ Տավուշ մարզի 50 կարիքավոր ուսանողներին, որոնք ցուցաբերում են բարձր առաջադիմություն: Ծրագրի նպատակն է ապահովել կրթության մատչելիությունը կարիքավոր ուսանողների համար՝ հոգալով ուսման հետ կապված ծախսերը (ուսման վարձ, ուսումնական նյութեր և տրանսպորտ): Ծրագրի գումարը կազմում է 13,108 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը՝ մարտ, 2010 թ. – դեկտեմբեր, 2011թ. 5. Ջինիշյան հիշատակի հիմնադրամի ծրագիրն, որն ուղղված է ցուցաբերելու աջակցություն Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Վայոց Ձորի և Լոռու մարզերում գործող տաս գյուղատնտեսական ֆերմերային միավորումներին՝ հաղթահարելու գլոբալ ֆինանսական ճգնաժամի բացասական հետևանքները իրենց գործունեության վրա: Ծրագրի գումարը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը մարտ 2010 թ - դեկտեմբեր 2010 թ:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք են բերվելու վառելիք և տրանսպորտային միջոցներ 100,000 ԱՄՆ դոլարի չափով, սննդամթերք 240,000 ԱՄՆ դոլարի չափով, տարածքի վարձակալում 130,000 ԱՄՆ դոլարի չափով, հաղորդակցման միջոցներ՝ հեռախոս, ինտերնետ – 10,000 ԱՄՆ դոլարի չափով, ուսումնական միջոցներ – 50,000 ԱՄՆ դոլարի չափով, առաջին անհրաժեշտության կենցաղային պարագաներ 30,000 ԱՄՆ դոլար, սահմանամերձ գյուղերի սոցիալապես անապահով ընտանիքների նորածին երեխաներին կտրամադրվեն առաջին անհրաժեշտության պարագաներ՝ 25,000 ԱՄՆ դոլարի չափով: Նախատեսվում է ներմուծել ավտոմեքենա և պահեստամասեր՝ 25,000 ԱՄՆ դոլարի չափով ծրագրի հսկողությունը առավել արդյունավետ իրականացնելու նպատակով (մանրամասները տես

	հաջորդ կետում):
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	2010 – 2012 թթ. ԲՀԻՕՀՀՄ-ն «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի շրջանակներում նախատեսում է կազմակերպչական ծախսեր, այն է՝ աշխատավարձ, գնահատման հետազոտական աշխատանքների վարձատրում 70,000 ԱՄՆ դոլարի չափով, որը կազմում է ԲՀԻՕՀՀՄ-ի «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի 3,5%: Ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ձեռք բերվող ավտոմեքենայի և պահեստամասերի գինը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Կազմակերպությունը և երկիրը, որտեղից կներմուծվի ավտոմեքենան պարզ կդառնա անցկացված մրցույթի և ստացված հայտերի արդյունքում: Մեքենայի անհրաժեշտությունը պայմանավորված է «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի հատկացված միջոցների բաշխման, մոնիտորինգի համար կատարվող աշխատանքների, ինչպես նաև Երևան և մարզեր շրջայցեր կատարելու համար:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ԲՀԻՕՀՀՄ-ն ծրագրի իրականացման շրջանակներում համագործակցում է՝ • ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ՝ հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներին տրանսպորտի/վառելիքի տրամադրման ծրագրում • ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, տեղական իշխանությունների և ԱՄՆ-ի Միջազգային զարգացման կազմակերպության հետ, «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի՝ «Սննդի, սոցիալական և առողջապահական ծառայությունների տրամադրում ք. Երևանի և Հայաստանի 7 մարզերի 6,000 շահառուներին» ծրագրի շրջանակներում • Սի. Օ. էյ. էֆ. Մանուկների բարեգործական հիմնադրամի հետ, «Սնունդ և հիմնական դեղամիջոցներ Արմավիր մարզի սոցիալապես խոցելի գյուղացիներին» ծրագրի շրջանակներում • Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի հետ՝ «Զանգակատուն» ծրագրի իրականացման շրջանակներում • ԱՄՆ-ի Միջազգային զարգացման կազմակերպության հետ՝ «Ամառային ճամբար-Ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագրի շրջանակներում • ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ՝ կրթության մատչելիությունը կարիքավոր ուսանողների համար ապահովելուն ուղղված ծրագրում

	• Ջինիշյան հիշատակի հիմնադրամի հետ՝ Հայաստանի մարզերում գործող ֆերմերային տնտեսություններին աջակցելու նպատակով
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	- ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է հետևյալ մարմինների կողմից՝ ա) յուրաքանչյուր տրամադրված դրամաշնորհի ֆինանսական միջոցների և ծրագրի իրականացման վերահսկումը դրամաշնորհների ղեկավարի և ծրագրի պատասխանատուի, բ) ԲՀԻՕՀՀՄ-ի գործադիր տնօրենի, գ) ԲՀԻՕՀՀՄ-ի և Բաց հասարակության ինստիտուտի Տնօրենների խորհրդի, դ) ցանցային գլխամասային (Նյու Յորք, Բուդապեշտ) գրասենյակների: Վերահսկման եղանակներն են. - Բաց հասարակության ինստիտուտի գլխամասային ցանցային գրասենյակին (Նյու Յորք) և Բաց հասարակության ինստիտուտի կենտրոնացված ֆինանսա-վարչական միավորին (Բուդապեշտ) ամսեկան ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև տարեկան հաշվետվությունների տրամադրում; - Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի և տարածաշրջանային ֆինանսական տնօրենի կողմից իրականացվում է ամենամյա ներքին աուդիտ; - Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի պատվերով իրականացվում է ԲՀԻՕՀՀՄ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտ (2000թ.-ից այն իրականացվում է KPMG-ի կողմից); - ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ընդունված կարգի; - Ամենամյա տարեկան հաշվետվության տպագրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

20.04.10թ. № 3/3.8-1/2205-10

Ձեր №

ԺՐ 6/4

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ուսումնասիրելով «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի» կողմից իրականացվող 04.04.10.թ. N 174-104 գրությունը՝ և ի լրումն մեր 16.04.10թ. N 3/3.8-1/2124-10 գրության՝ հայտնում ենք որ «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման» ծրագրի լրամշակված տարբերակի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

Կատարող՝ Ն.Հարությունյան 595229

1422

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀ. ԲԱԺԻՆ 174-602
Մուտք թիվ
«21» 04 2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078 Երևան, Հալաբյան 41", հեռ. 380385
Էլ. փոստ malkhasyan@justice.am

1/71-10 12 04 2010

ԺՐ 6/4

15.04.10

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 2010թ. ապրիլի 8-ի 174-351 թվակիր նամակի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Բաց հասարակության ինստիտուտի» օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից ներկայացված «Բաց հասարակության ինստիտուտի» օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի 7-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ դրամաշնորհ ստացող կազմակերպությունների ցանկը հստակ պետք է սահմանվի սույն ծրագրով, այլ ոչ թե հետագայում տնօրենների խորհրդի կողմից:

Հարգանքով՝

Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

կատ՝ Իրավական ակտերի փորձաքննության վարչություն
Ա. Մարտիրոսյան հեռ.380.227

1380

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
174-575
«15» 04 10թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

16 Փետրվար 2010թ. No Ե2010-1338

Ձեր 04.02.2010
N 174-104

Հր. 6/4

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն
Ս. Տեր-Սիմոնյանին

18.02.10.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով <<<<Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող <<Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման>> ծրագրի մասին>> ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը հայտնում եմ, որ ծրագիրը բարեգործական որակելու վերաբերյալ դիտողություններ չունենք: Միաժամանակ առաջարկում եմ իրականացվող ծրագրերի շահառուների ընտրությունը կատարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ՝ օգտվելով ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայից:

Հարգանքներով՝ Ա. Ասատրյան

Կատ՝ Բարեգործական ծրագրերի համակարգման բաժին
010 52 58 93

0010, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Կառավարական շենք թիվ 3
հեռ. (374 10) 526831, ֆաքս (374 10) 563791
http://www.mss.am

174-233
18 02 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07.2/829-10 «15» 02 2010

Հր. 6/4

18.02.10.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 04.02.10, թիվ 174-104 գրության, հայտնում ենք, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմանդրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող՝ «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

Մ.ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777

174-319
16 02 10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարության շենք N3
Հեռ.՝ (+374 10) 58 24 13
Ֆաքս՝ (+374 10) 56 27 83
Էլ. փոստ՝ minister@moh.am

26.03.10 N 12/8-22-1797

Ձեր N ______

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն ՀՀ առողջապահության նախարարության 22.02.2010թ. N 12/8-22-749 գրության «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման» ծրագրի» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ, հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող՝ Գ.Մարտիկյան
հեռ. 52-27-21

ՀՀ ... 174-461 29.03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«18» 04 2010թ. N 115785/36

ՀՀ կառավարությանն առընթեր
բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. ապրիլի 8-ի թիվ 174-351 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ կից ներկայացված ծրագրի տարբերակը Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից 03.03.2010թ. արդեն իսկ ներկայացվել էր ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի քննարկմանը: Քանի որ ծրագրի լրամշակված տարբերակը նույնն է մնացել, ուստի դրա վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ 13.03.2010թ-ի թիվ 7438/3-6 գրությամբ ներկայացված կարծիքը մնում է անփոփոխ: Նպատակահարմար ենք գտնում ծրագրի բարեգործական որակելու հարցը քննարկել ՀՀ ԿԱ ՊԵԿ 04.02.2010թ. թիվ 4250/3-6 գրությամբ ներկայացված պահանջները կատարելուց հետո:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49, 53 61 22

...ՈՒԹՅԱՆ 174-584 04

0015, ք. Երևան, Խորենացի 7
7.M. Khorenatsu str., Yerevan, 0015
0015, Ереван, ул. М. Хоренаци 7
Հեռ.՝ /374-10/ 594 605
Fax: /374-10/ 537 125

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«13» 03 2010թ. N 7438/3-6

ՀՐ·6/4

15.03.10.

Բաց հասարակության ինստիտուտի
օժանդակության հիմնադրամի
գործադիր տնօրեն՝ Լ. ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

պատճենը՝ ՀՀ կառավարության
առընթեր բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի 03.03.2010թ. գրության՝ հայտնում ենք, որ գրության մեջ նշված հիմնավորումները բավարար չեն: Նպատակահարմար ենք գտնում ծրագրի բարեգործական որակելու հարցը քննարկել ՀՀ ՊԵԿ 04.02.10թ. թիվ 4250/3-6 գրությամբ ներկայացված պահանջները կատարելուց հետո:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀՀ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
Մուտք թիվ 174-392
«15» 03 10

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49, 53 61 22

0015, ք. Երևան, Խորենացի 7
7,M. Khorenatsu str., Yerevan, 0015
0015, Ереван, ул. М. Хоренаци 7
Հեռ.՝ /374-10/ 594 605
Fax: /374-10/ 537 125

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«17» 02 2010թ. N 4250/3-6

17.02.10.

**ՀՀ կառավարության առընթեր
բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

ՀՐ·6/4

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ա/թ փետրվարի 4-ի թիվ 174-104 գրությամբ կարծիքի ներկայացված «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք **հետևյալը.**

- ծրագրի բյուջեն կազմում է մոտ 2 000 000 **ԱՄՆ** դոլար, սակայն առանձին ոլորտների համար նախատեսված գումարների հանրագումարը այլ թիվ է կազմում,
- 10-րդ կետում նշված «ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը» բաժնում անհրաժեշտ է հստակ տարանջատել կազմակերպչական ծախսերը և ապրանքների ու ծառայությունների ձեռք բերման համար նախատեսվող ծախսերը,
- ծրագրի յուրաքանչյուր կետ կարիք ունի հստակեցման, քանի որ դրանցում ներկայացված տվյալները ընդհանրական են,
- ծրագիրը ունի լրամշակման կարիք:

Ելնելով վերը շարադրվածից՝ նման տեսքով ծրագրի բարեգործական որակման հարցը համարում ենք ոչ նպատակահարմար:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀՀ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
Մուտք թիվ 174-228
«17» 02 10

կատարող՝ Ս. Ավետիսյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49, 53 61 22

0015, ք. Երևան, Խորենացի 7
7,M. Khorenatsu str., Yerevan, 0015
0015, Ереван, ул. М. Хоренаци 7
Հեռ.՝ /374-10/ 594 605
Fax: /374-10/ 537 125

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Երևան 15, Արգիշտիի փողոց №1 Հեռ. 51 41 50

№ 02/50-1894Կ «11» 02 2010 թ.

Ձեր 01.02.2010թ. h.174-77,
03.02.2010թ. h.174-102,
04.02.2010թ. h.174-104
գրությունների վերաբերյալ

ՀՐ·6/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

12.02.10.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Երևանի քաղաքապետ Գ.Բեգլարյանին հասցեագրված Ձեր գրություններով ուղղարկված

- «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ռուսական ուղղափառ եկեղեցու կաթողիկե տաճարի կառուցման» ծրագրի մասին»
- «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Խանջյան փողոցի վերգետնյա հետիոտն անցումի կառուցման նախագծում» ծրագրի մասին»
- «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման»» ծրագրի մասին»

որոշման նախագծերի վերաբերյալ հայտնում ենք, որ դրանք քննարկվել են Երևանի քաղաքապետարանում, որոնց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ԻՐԱԳԱՆԵՐՈՎ Տ.ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Վ.Սերոբյան
Լ.Մկրտչյան
հեռ. 514-214 * 359

174-94
12.02.10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКИЙ МАРЗПЕТ

ք. Արտաշատ, Օգոստոսի 23 շ. 60
Հեռ. (0235) 2-52-16, (010) 28-60-23

№ 030/203

г. Арташат, ул. Огостоси 23, зд. 60

«16» 02 2010

ՀՐ·6/4.

18.02.10.

Ձեր N174-104
04.02.10թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Արարատի մարզպետարանը չի առարկում Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման» ծրագրի նախագիծը որակելու որպես բարեգործական:

ՄԱՐԶՊԵՏ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Կատ.՝ Հ.Հակոբյան
Հեռ.՝ /0235/ 2-23-69

6ԿՕ

174-238
18 02 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ		РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ		МАРЗПЕТ АРМАВИРА

«15» 02 2010 Թ. N 365

Աա/ 0163

ԶՐ.6/4

18.02.10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 04.02.2010թ.
N 174-104 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Տեղեկացվում է, որ «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման» ծրագրի մասին» որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանում և հավանության արժանացել:

Չենք առարկում այն որպես բարեգործական որակելու:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Կատ՝. Փ. Կարապետյան

638

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
174-241
13.02.10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ		РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ГУБЕРНАТОР ГЕГАРКУНИКА

REPUBLIC OF ARMENIA
MARZPET OF GEGHARKUNIK

ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36 E-mail-gegharkunik@mta.gov.am հեռ. (0264) 2-10-45 ֆաքս (0264) 2-45-71	г.Гавар, ул. Г. Лусаворича 36 E-mail-gegharkunik@mta.gov.am тел. (0264) 2-10-45 факс (0264) 2-45-71
Թիվ 01-1-137 «19» 02 2010 թ.	N______ «___» ______ 2010 г.

ԶՐ.6/4.

26.02.10.

Ձեր 04.12.2010
թիվ 174-104

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Պ-ՐՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը հավանություն է տալիս «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման» ծրագրի մասին» որոշման նախագծին:

Միաժամանակ առաջարկվում է ծրագրի իրականացման գործընթացին մասնակից դարձնել մարզպետարանի ներկայացուցչին:

Հարգանքով՝

Ն.ՊՈՂՈՍՅԱՆ

780

Վ.Մնացականյան
0264 2-38-75

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
174-302
26.02.10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Թ.Վանաձոր, Հայրի հրապարակ
Հեռ. 4-61-92
Fax 2-28-77

N. 004/387-01
«17» 02 2010 թ.

ԼՐ·6/4

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

18.02.10.

Ձեր 04.02.2010թ. թիվ 174-104 գրությանը.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Կարևորում եմ «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ»-ի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման» ծրագիրը: Չեմ առարկում ծրագրի շրջանակներում Լոռու մարզում իրականացվող ծրագրերը որակել որպես բարեգործական:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ԱՍՔՈՉԱՐՅԱՆ

639

174-235
19.02
2010

Կատ.՝ Ս.Լամբարյան
Հեռ. (0322) 2-33-99

REPUBLIC OF ARMENIA
GOVERNOR OF KOTAYK REGION

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГУБЕРНАТОР
КОТАЙКСКОЙ ОБЛАСТИ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

392

2301, ք.Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք. Հեռ./Ֆաքս (+374 223) 2 36 63 E-mail marzpetaran@Kotayk.region.am
2301, г. Раздан, Центр, Административное здание. Тел/Факс (+374 223) 2 36 63 E-mail marzpetaran@Kotayk.region.am
2301, Hrazdan city, Center, Administrative building. Tel/Fax (+374 223) 2 36 63 E-mail marzpetaran@Kotayk.region.am

16.02.2010թ. N 01/14.2/392-10
Ձեր

ԼՐ·6/4

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

19.02.10.

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան ՀՀ Կոտայքի մարզպետին հասցեագրված 04.02.2010թ. թիվ 174-104 գրության, մարզպետարանը տալիս է իր դրական եզրակացությունը՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման » ծրագիրը բարեգործական որակելու մասին:

Կ.ՇԱՀԳԱԼՈՅԱՆ

Կատարող Վ.Հունանյան
2-67-85

174-236
«19» 02 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

18.02.2010թ.
N: 01/433-10

3103, ԳՅՈՒՄՐԻ, Գ. ՆԺԴԵՀԻ 16
ՀԵՌ. (0312) 5-23-10, 3-26-10

ԼՐ·6/4

24.02.10.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 04.02.2010թ.
Թիվ՝ 174-104

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման » ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Ձենք առաջարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքներով՝

Լ.ՆԱՆՅԱՆ

կատ. Հ.Արշակյան
3-16-26

174-270
24 02 10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

3301, ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան, Նժդեհի 1, հեռ. ֆաքս 24-78-30, (0285) 5-20-10

«11» փետրվարի 2010 թ. № 09-201
Ձեր 04.02.2010թ. № 174-104

ԼՐ·6/4

17.02.10

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

ՀՀ Սյունիքի մարզպետարանում քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացրած «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Առաջարկվում է ՀՀ կառավարության 2003թվականի հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ սահմանված կարգով, նշված ծրագիրը որակել բարեգործական:

Ս. Խաչատրյան

Կատարող՝ Ս. Ավետիսյան
հեռ.(085) 6-73-97

174-226
17 02 10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5
Հեռ./37 42/ 2874 01,2 25 22
Ֆաքս 281832

N 01/07.3/243-10

«15» 02 2010 թ

19.02.10.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. -ի N 174-104 գրությունը քննարկվել է մարզպետարանում և հավանության արժանացել:

Հարգանքներով Վ. ՍԱԹԵՎՈՍՅԱՆ

Կատարող՝ Խ. Գևորգյան
Հեռ. /0281/ 2 40 69

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
174-245
18 02 10

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

377260, ՀՀ ք. Իջևան
377260, PA, г. Иджеван
Ijevan, RA, 377260

հեռ. /0263/ 4-00-45, 3-23-56
Ֆաքս /факс, fax / /0263/ 4-00-45
կայք http://tavush.region.am

N 174/18 «16» 02 2010թ.

18.02.10.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2010 թվականի փետրվարի 4-ի թիվ 174-104 գրության՝ հայտնում եմ Ձեզ, որ «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման» ծրագրի մասին» որոշման նախագիծը քննարկվել է Տավուշի մարզպետարանում: Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
174-232
18 02 10

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ արդարադատության նախարարության առաջարկությունների ու դիտողությունների վերաբերյալ	
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի կից ծրագրի 7-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ դրամաշնորհ ստացող կազմակերպությունների ցանկը հստակ պետք է սահմանվի սույն օրագրով, այլ ոչ թե հետագայում տնօրենների խորհրդի կողմից:	Կազմակերպությունը 2010 թվականի ապրիլի 21-ի գրությամբ ՀՀ արդարադատության նախարարությանը ներկայացրել է ծրագրի խմբագրված տարբերակը:
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առաջարկությունների ու դիտողությունների վերաբերյալ	
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ չունենք: Միաժամանակ առաջարկում ենք իրականացվող ծրագրերի շահառուների ընտրությունը կատարել՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ՝ օգտվելով ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայից:	Կազմակերպությունը տեղեկացված է:
ՀՀ Գեզարքունիքի մարզպետարանի առաջարկությունների ու դիտողությունների վերաբերյալ	
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ չունենք: Միաժամանակ Առաջարկում ենք ծրագրի իրականացման գործընթացին մասնակից դարձնել մարզպետարանի ներկայացուցչին:	Կազմակերպությունը տեղեկացված է:
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի առաջարկությունների ու դիտողությունների վերաբերյալ	
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ	Կազմակերպությունը 2010 թվականի ապրիլի 27-ի գրությամբ տվել է պարզաբանում:

կից ներկայացված ծրագրի տարբերակը Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից 03.03.2010 թ. արդեն իսկ ներկայացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի քննարկմանը: Քանի որ ծրագրի լրամշակված տարբերակը նույնն է մնացել, ուստի դրա վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 13.03.2010 թ. N 7438/3-6 գրությամբ ներկայացված կարծիքը մնում է անփոփոխ: Նպատահարմար ենք գտնում ծրագրի բարեգործական որակելու հարցը քննարկել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 17.02.2010 թ. N 4250/3-6 գրությամբ ներկայացված պահանջները կատարելուց հետո:	

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ - Հայաստան
Թումանյան փողոց 2-րդ փակուղի, տուն 7/1, Երևան, 375002 Հայաստան • Հեռ/Ֆաքս (374-10) 533862, 536758
• E-mail: info@osi.am • www.osi.am •

ԱՐ·6/4

Գործադիր տնօրեն
Լարիսա Մինասյան

Տնօրենների Խորհուրդ

Ամալյա Կոստանյան
Նախագահ

Ավետիք Իշխանյան
Դավիթ Խաչատուրյան
Հրայր Ղուկասյան
Յուրի Սարգսյան
Արմեն Փիրուզյան

21 ապրիլի 2010թ.

ՀՀ Արդարադատության փոխնախարար
Պրն. Գ. Մալխասյանին

Պատճեն՝
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պ-ն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Մալխասյան,

Ի պատասխան Ձեր 12 ապրիլի 2010թ. թիվ 471-10 գրության, կից ներկայացնում ենք Ծրագրի վերամշակված տարբերակը՝ համաձայն Ձեր առաջարկների:

Ինչպես նաև, որպես լրացուցիչ ինֆորմացիա, հայտնում ենք այս փուլում հայտնի կազմակերպությունների ցանկը՝

1. «Անարատ հղության հայ քույրերի միաբանության Տիրամայր Հայաստանի կուսաստան»
Գտնվելու վայրը՝ Չարենցի 6, Անի թաղամաս, ք. Գյումրի, Շիրակի մարզ
ՀՎՀՀ՝ 05513266
2. Սի.Օ.Էյ.Էֆ մանուկների բարեգործական հիմնադրամ
Գտնվելու վայրը՝ Փ. Բուզանդ 53-55, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 02569972
3. «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Գ. Նժդեհի 42, ք. Երևան 0061
ՀՎՀՀ՝ 02214646
4. «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ
Գտնվելու վայրը՝ Աբովյան 34, բն. 5, ք. Երևան 0009
ՀՎՀՀ՝ 00060436
5. ՄԱԿ-ի զարգացման ծրագիր Հայաստան
Գտնվելու վայրը՝ Պ. Ադամյան 14, ք. Երևան 0010

Հարգանքներով՝

Լարիսա Մինասյան
Գործադիր տնօրեն

174-607
21 04 10

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ - Հայաստան
Թումանյան փողոց 2-րդ փակուղի, տուն 7/1, Երևան, 375002 Հայաստան • Հեռ/Ֆաքս (374-10) 533862, 536758
• E-mail: info@osi.am • www.osi.am •

ԱՐ·6/4
28.04.10

Գործադիր տնօրեն
Լարիսա Մինասյան

Տնօրենների Խորհուրդ

Ամալյա Կոստանյան
Նախագահ

Ավետիք Իշխանյան
Դավիթ Խաչատուրյան
Հրայր Ղուկասյան
Յուրի Սարգսյան
Արմեն Փիրուզյան

27 ապրիլի 2010թ.

ՀՀ կառավարությանն առընթեր
Պետական եկամուտների կոմիտեի
նախագահի տեղակալ
պրն. Ա.Ալավերդյանին

պատճեն՝
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ
պ-ն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Ալավերդյան,

Ի պատասխան Ձեր 18.04.2010թ. թիվ 11585/36 ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պրն. Տեր-Սիմոնյանին ուղղված գրության, հայտնում ենք, որ ԲՀԻ օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից իրականացվող "Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման" ծրագիրը բարեգործական որակելու վերաբերյալ Ձեր կողմից ներկայացված դիտողությունների պատասխանները, ինչպես նաև լրամշակված Ծրագիրը ողջամիտ և իրատեսական փաստարկների հիման վրա ներկայացվել են Պետական եկամուտների կոմիտե:

Ցանկանում ենք հայտնել, որ որևէ այլ փոփոխություն կամ լրացում Ծրագրին, այս փուլում իրականացնել հնարավոր չէ:

Հարգանքով,

Լարիսա Մինասյան
Գործադիր տնօրեն

174-664
28 04

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
մարտի 2010 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

ՀԲ.6/5.1

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (5)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մարտի -ի N 3/3.8-2/-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մարտի -ի N/3-6 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով Լեռնային Ղարաբաղի հանրապետության Շուշի քաղաքի ասֆալտապատման համար գնված և «SEVAN ARAS FREE ZONE Co» կազմակերպության կողմից ուղարկված, բիտումի (8 տեղ, 70.060 կգ ընդհանուր քաշով, 32928.2 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից փոխադրման ծախսերը կազմել են 7006 ԱՄՆ-ի դոլար, Սիսիյանի Տ/Մ) ներմուծման ծրագիրը:

2. Առաջարկել «Հայաստան» համահայկական հիմնադրամին նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.04.10թ. № 3/3.8-2/2472-10

Ձեր № ____________

28.04.10.

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

ՀԲ.6/5.1

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 23.04.2010թ. N174-415 գրությամբ ներկայացված «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (5) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

1348

ՀՀ [illegible]ԱՐՈՒԹՅԱՆ
174-668
28 04 10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«28» 04 2010 թ. N 12835/3-6

Հr. 6/5.1

Vorif 29.04.10.

ՀՀ կառավարությանն առընթեր
բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. ապրիլի 23-ի թիվ 174-415 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (5)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

1376

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ... Մուտք թիվ 174-689 «28» 04 2010թ.

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49, 53 61 22

0015, ք. Երևան, Խորենացի 7
7,M. Khorenatsu str., Yerevan, 0015
0015, Ереван, ул. М. Хоренаци 7
Հեռ.՝ /374-10/ 594 605
Fax: /374-10/ 537 125

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

ապրիլի 2010 թվականի N Ս - -Ս Հr. 6/5.2
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՊՐՈՖ. Ռ. Հ. ՅՈԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 20-ի N 3/3.8-2/2206-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի ապրիլի 27-ի N 12/8-22-2801 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 21-ի N 11895/3-6 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել Հեմոֆիլիայի համաշխարհային ֆեդերացիայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված արյան մակարդման VIII գործոն պատրաստուկի (4 տեղ, 51.52 կգ ընդհանուր քաշով, 20 ԱՄՆ-ի դոլար արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 580 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծման ծրագիրը:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը նշված բեռի համապատասխան ձևակերպումներից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

20.04.10թ. №3/3-8-2/2206-10

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

ՀՐ.6/5.2

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 16.04.2010թ. N177-399 գրությամբ ներկայացված ՀՀ առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ -ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ս. Ջանջուղազյան

1423

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-229

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
177-356
21 04 2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարության շենք N3
Հեռ.՝ (+374 10) 58 24 13
Ֆաքս՝ (+374 10) 56 27 83
Էլ. փոստ՝ minister@moh.am

27.04.10 N 12/8-22-2801

Ձեր N ____________

ՀՐ.6/5.2

29.04.10.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 16.04.2010թ. թիվ 177-399 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ, հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

138

Կատարող՝ Գ.Մաթևոսյան
հեռ. 52-27-21

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
177-385
28 04 2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«21» 04 2010 թ. N 11885/3-6

21.6/5.2

ՀՀ կառավարությանն առընթեր
բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. ապրիլի 16-ի թիվ 177-399 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
177-363
22.04 2010 թ.

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային համագործակցության բաժին
հեռ. 59 43 49, 53 61 22

0015, ք. Երևան, Խորենացի 7
7,M. Khorenatsu str., Yerevan, 0015
0015, Ереван, ул. М. Хоренаци 7
Հեռ.՝ /374-10/ 594 605
Fax: /374-10/ 537 125

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ ապրիլի 2010 թվականի N Ս - - Ա
քաղ. Երևան

21.6/5.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N Ս-807-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի -ի N 3/3.8-2/-10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի ապրիլի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մարտի -ի N /3-6 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից ձեռք բերված լաբորատոր նյութերն ու քեսթերը (մեկ տեղ, 3.17 կգ ընդհանուր քաշով, 740 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 310 ԱՄՆ-ի դոլար փոխադրման և այլ ծախսերը ու մեկ տեղ, 2.2 կգ ընդհանուր քաշով, 565 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 150 ԱՄՆ-ի դոլար փոխադրման և այլ ծախսերը, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծվել են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 20-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2010 թվականի ընթացքում երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցություն» ծրագրի մասին» N Ս-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և անհատույց հանձնվելու է Հայաստանի Հանրապետության գիտությունների Ազգային ակադեմիայի «Կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.04.10թ. №3/3.8-2/2499-10

Ձեր №

29.04.10.

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն Ս. Տեր-Սիմոնյանին

ԱՐ·6/5.3

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 26.04.2010թ. N174-424 գրությամբ ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 20.11.2009թ. ՆՄ-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Ջանջուղազյան

1388

Կատարող՝ Ս. Այվազյան, Հեռ. 595-227

ՀՀ կառավարություն
մուտք 174-681
29 04 2010թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: micns@edu.am, www.edu.am

N 02/07.2/3240-10 27 04 2010

28.04.10.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

ԱՐ·6/5.3

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր՝ 26.04.2010, թիվ 174-424 գրության, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2009 թվականի նոյեմբերի 20-ի N Մ-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին /Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ/>> որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Մ.ՄԿՐՏՉՅԱՆ

1307

Կատ.՝ Ն.Մնացականյան
հեռ.՝ 524777

ՀՀ կառավարություն
մուտք 174-670
28 04 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«28» 04 2010թ. N 12833/3-6

ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր ս/թ. ապրիլի 26-ի թիվ 174-424 գրությամբ կարծիքի ներկայացված «ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009թ. նոյեմբերի 20-ի N Ս-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49, 53 61 22

0015, ք. Երևան, Խորենացի 7
7,M. Khorenatsu str., Yerevan, 0015
0015, Ереван, ул. М. Хоренаци 7
Հեռ.՝ /374-10/ 594 605
Fax: /374-10/ 537 125

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

____ մայիսի 2010 թվականի N Ս - - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Ս-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2010 թվականի մայիսի 4-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, ***ո ր ո շ ո ւ մ*** *է.*

1. Բարեգործական որակել Ուկրաինայի Հանրապետության Խարկով քաղաքի «Հայկական ազգային համայնք» մարզային հասարակական կազմակերպության կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության հասցեով ուղարկված փշալարի (428 տեղ, 8000 կգ ընդհանուր քաշով, 232146 ուկրաինական գրիվնիին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1407000 դրամ, «ՄՆՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությանը նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 ապրիլի 2010 թվականի N Ս-285-Ս
քաղ. Երևան

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 27-ի N 3/3.8-2/2465-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի ապրիլի 14-ի N 12/8-22-2404, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2010 թվականի ապրիլի 9-ի N 1/4843-10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 01/07.2/2384-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի ապրիլի 7-ի N Ե2010-3202, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 10-ի N 10611/3-6, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2010 թվականի ապրիլի 14-ի N 006/744-01 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2010 թվականի ապրիլի 12-ի N 17.1/553-10 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել Դանիայի «DANARMEN/INTERCOM» բարեգործական կազմակերպության կողմից աջակցության նպատակով Նոյեմբերյանի քաղաքապետարանի հասցեով ուղարկված բեռի (748 տեղ, 8832.2 կգ ընդհանուր քաշով, 31412 դանիական կրոն արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 28284.61 դանիական կրոն, «Գուգարքի» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը (բեռի և բաշխման ցանկերը կցվում են):

2. Առաջարկել Նոյեմբերյանի քաղաքապետարանին նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն :

2.1 Առաջարկել բեռի բաշխման ցանկում ընդգրկված կազմակերպություններին նշված բեռը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել բեռի օգտագործման նպատակի վերաբերյալ տեղեկատվություն :

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արարատի, Լոռու, Տավուշի մարզպետարաններ և Նոյեմբերյանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ

DANARMEN INTERCOM

DANSK - ARMENSK HUMANITÆR STØTTE FORENING

Mayor of Noyemberyan
Tavush Marz
4, Yerevanyan st, 4101 town Noyemberyan
Republic of Armenia

Copenhagen 22.12.2009
Container nr. TRIU 992.276-7
Registration no. 0612-2672

6/12.9

Packing list, 40 foot container, items of no commercial value for customs use only

հատ /արկղ	Քանակ	Անվանում	Միավորի արժեքը	Արժեքը, ընդամենը	Միավորի կշիռը, կգ	Զուտ կշիռը	Համախառն կշիռը
հատ	40	Դպրոցական մեծ սեղան, կարմիր ոտքերով, 2 հոգ.	90	3600	27	1080	1080
հատ	23	Դպրոցական մեծ սեղան, մոխրագույն ոտքերով, 2 հոգ.	90	2070	21	483	483
հատ	7	Դպրոցական մեծ սեղան, մոխրագույն ոտքերով, 1 հոգ.	60	420	15	105	105
հատ	15	Դպրոցական մեծ սեղան, 1 հոգանոց	60	900	13	195	195
հատ	12	Դպրոցական մեծ սեղան բորդո գույնի ոտքերով, 2 տեղանոց	90	1080	20	240	240
հատ	2	Դպրոցական մեծ սեղան, կարմիր ոտքերով, 1 տեղանոց	60	120	16	36	36
հատ	3	Դարակներով պահարան	100	300	38	114	114
հատ	1	2 ներքնակով մահճակալ	150	150	87	87	87
հատ	3	Ներքնակ 10 սմ	25	75	3,5	10,5	10,5
հատ	1	Պահարան ապակե դռներով	50	50	18	18	18
հատ	34	Մանկապարտեզի աթոռ "Esselte studium"	25	850	3,5	416,5	416,5
հատ	5	Մանկապարտեզի աթոռ կարմիր նստատեղով	25	125	3,5	17,5	17,5
հատ	34	Մանկապարտեզի աթոռ կարմիր, նարնջագույն, կանաչ, մոխրագույն	25	850	3	102	102
հատ	20	Մանկապարտեզի աթոռ կարմիր ոտքերով	25	500	5	100	100
հատ	6	Մանկապարտեզի աթոռ կիսակլոր հենակով	20	120	4	24	24
հատ	4	Մանկապարտեզի աթոռ կիսակլոր հենակով կարմիր ոտքերով	30	120	4,5	18	18
հատ	6	Մանկապարտեզի աթոռ (5-6 տարեկանի համար)	30	180	4,6	27,6	27,6
հատ	15	Դպրոցական աթոռ (փոքր) մոխրագույն ոտքերով	30	450	4	60	60
հատ	21	Դպրոցական աթոռ (մեծ)	35	735	5	105	105

DANARMEN INTERCOM
Telefon: 39565751/26 898
Fax: 39565751
E-mail: anna@danarmen.dk

KØBENHAVN
Emdrupgårdsvej 1, 1
2400 København NV
Danmark

WWW.DANARMEN.DK
Danske Bank: Nørreport, Nørre Voldgade 68
1190 København K
Bankkonto nr.:1551 10105420

		մոխրագույն և շագանակագույն ուղղերով					
հատ	2	Մահճասեղան	35	70	7	14	14
հատ	4	Գրապահարան	90	360	13,5	54	54
հատ	5	Թղթերի դույլ – մեծ	10	50	0,8	4	4
հատ	1	Թղթերի դույլ – փոքր	5	5	0,5	0,5	0,5
հատ	1	Արդուկի տախտակ	10	10	4,5	4,5	4,5
հատ	2	Խոհանոցի սեղան	35	70	16,5	33	33
հատ	6	Մետաղե պահարան կգ-27,42;25;38;35	40	240		167	167
հատ	1	Ճամպրուկ	10	10	3	3	3
հատ	1sæk	Հագուստի կախիչներ	5	5	5	5	5
հատ	1	Գրասեղան /ուսուցչի սեղան/	70	70	45	45	45
հատ	1	Գրասեղան /ուսուցչի սեղան/	70	70	47	47	47
հատ	1	Գրասեղան /ուսուցչի սեղան/	70	70	49,5	49,5	49,5
հատ	1	Բարձր պահարան խոհանոցի համար	100	100	60	60	60
հատ	1	Սառնարան "Gorenja"	150	150	40	40	40
հատ	1	Պահարան դռներով և ապակե դռներով (52+58 կգ)	250	250	110	110	110
հատ	1	Կարի մեքենա	50	50	10	10	10
հատ	45	Մանկապարտեզի փայտյա կարմիր աթոռ	30	1350	5	225	225
հատ	8	Մեքենայի անիվներ Հ.Ք. Կոֆոեդ բարեգործական հիմնադրամի ծառայողական մեքենաների համար	50	400	12,75	102	102
հատ	25	Դպրոցական աթոռ (փոքր)	30	750	4,5	112,5	112,5
հատ	17	Մանկապարտեզի աթոռ կարմիր ուղղերով	30	510	5,5	93,5	93,5
հատ	41	Դպրոցական աթոռ (մեծ)	35	1435	5	205	205
հատ	4	Գրատախտակ	25	100	21	84	84
հատ	2	Գրասենյակային սեղան (27; 30կգ)	100	200		57	57
հատ	1	Պահարան դռներով	50	50	25	25	25
հատ	3	Մանկապարտեզի կիսակլոր սեղան	50	150	16	48	48
հատ	10	Մանկապարտեզի սեղան կարմիր մակերեսով	45	450	24	240	240
հատ	3	Գրասենյակային սեղան (80+80+50կգ)	80	240		210	210
հատ	1	Փոքրիկ սեղան, սև գույնի	25	25	4	4	4
հատ	1	Աթոռ շագանակագույն կտորե մակերեսով	50	50	8	8	8
հատ	2	Աթոռ կանաչ կտորե ծածկով	50	50	9	18	18
հատ	2	Համակարգչի աթոռ	50	50	10	20	20
հատ	1	Համակարգչի փոքր սեղան	30	30	9	9	9
հատ	3	Բազկաթոռ կապույտ կտորե ծածկով	50	150	14	42	42

հատ	1	Գինեկոլոգիական հետազոտության աթոռ	250	250	130	130	130
հատ	19	Աթոռ առանց հենակի	40	760	6	114	114
հատ	3	Աթոռ հենակով	45	135	8	24	24
հատ	1	Բազմոց սև պաստառով	100	100	40	40	40
հատ	5	Աթոռ շագանակագույն ուղղերով	20	100	4	20	20
հատ	1	Սեղան (անհավասար կողմերով)	37	37	15	15	15
հատ	1	Հիվանդանոցի անվավոր սեղան	35	35	12	12	12
հատ	1	Պառկելաթախտ առանց ներքնակի	20	20	10	10	10
արկղ	26	Համակարգիչ (nr.1-26)	100	2600		720,4	745,9
արկղ	4	Մոնիտոր (nr.27-30)	35	140		81,4	84,9
արկղ	2	Տպիչ 1030,1031 – (nr.31;32)	50	100		16,8	18,3
արկղ	1	Համակարգչի պահեստամասեր (nr.33)	50	50		8	8,5
արկղ	12	Պատճենահանման թուղթ (nr.34-40;102;122;136;137;218)	40	480		152,8	158,2
արկղ	53	Խոհանոցային ապրանքներ (nr.41-49;53;55;81;85; 95; 97; 99;103-106; 108;112-115;117;118; 121;127-135; 138-141;146;161-163;165;173; 175; 188;197;217;227;228)	20	1060		337,2	366,4
արկղ	10	Հագուստ (nr.50;147;154;176;178; 187;189; 251,252;255)	20	200		109,8	117,5
արկղ	14	Խաղ մանկապարտեզի երեխաների համար (nr.51;52;54;56; 57;60-62; 65(փայտե T-26); 87;93-94; 213-214)	20	280		73,6	79,7
արկղ	26	Կանացի հագուստ (nr.58;90-92;155; 181-184; 190;201-204;216;257-265)	40	1040		293,4	311
արկղ	1	Տեսանվարգակիչ Samsung SV605X (nr.59)	50	50		5	5,2
արկղ	1	Հատակ մաքրելու փայտ իր շորով (nr.63)	5	5		2,5	3
արկղ	1	Միկրոալիքային վառարան T-24 (nr.64)	50	50		12,7	13,7
արկղ	1	Ատամի խոզանակներ 200հատ (nr.66)	100	100		3,2	3,5
արկղ	13	թղթապանակ (nr.67-72;123-125;156; 186; 205;215)	20	260		85	93,4
արկղ	1	Ստատիվ փաստաթղթեր տեղադրելու համար (nr.73)	10	10		4	4,3
արկղ	6	2 x տպիչ Lexmark E322+2 հատ compaq ստեղնաշար; տպիչ HP officejet T65, տպիչ /ֆաքս (nr.74;75; 82), տպիչ Canon I56(nr.86); տպիչ OptraS1855(225),տպիչ Lexmark(226)/	100	600		72,8	78,1
արկղ	5	Վիդեոկասետ. մուլտֆիլմ (nr.76-80)	10	50		9,3	9,9
արկղ	4	Անգլերեն գրքեր +ֆիլմ (nr.83;119;170;229)	10	40		34	35,3

DANARMEN INTERCOM

DANSK - ARMENSK HUMANITÆR STØTTE FORENING

6/12.9

արկղ	2	DVD/CD ֆիլմ (nr.88) Կասետ. /ֆիլմ (89)	25	50		22,5	24
արկղ	7	Գրասենյակային պիտույքներ (nr.96;100;101;111;112; 142;174)	50	350		54	55,7
արկղ	3	Աշխատանքային հագուստ (nr.98;180;256)	10	30		34,1	35,6
արկղ	7	Ծաղիկ աճեցնելու համար ծաղկման (nr.107;109;110;116; 152;153;212)	10	70		64,6	68
արկղ	2	Կտորներ (nr.126;127)	10	20		30,5	32
արկղ	5	Գլուխկոտրուկ երեխաների համար (nr.144;145); մանկական ինքնաշարժ հեծանիվ (230;231;253)	10	50		32,5	35,3
արկղ	6	Հիվանդանոցային սպիտակեղեն (nr.148;195) ; բարձ (177), վիրահատարանի ստերիլ հագուստ 266; շաքարը ստուգելու ապարատ 267; հիվանդի պալատի հեռախոս – ահազանգ 271	10	60		35	38
արկղ	10	Տաք հագուստ անօթևանների համար (nr.149-151;159; 196;198-200; 206;209)	20	200		125,1	132,6
արկղ	8	Տղամարդու հագուստ (157-158;160; 164;167-169; 185;)	25	200		93,4	106,4
արկղ	3	7-քնապարկ (166;254); մետաղե սպասք (179)	25	75		20,2	22,5
արկղ	9	Հագուստ միջին տարիքի երեխաների համար (nr.171;191-194; 207;208;210;211)	20	180		108,4	113,9
արկղ	1	Հագուստի կախիչներ (nr.172)	10	10		6	6,4
արկղ	1	Սկաներ color SNAPS1212 (nr. 219)	50	50		5	5,2
արկղ	5	Հեռուստացույց-United,B&O; Prosomic; Sony; Samsung (nr.220-224)	100	500		158	163
արկղ	10	Ներքնաշոր, բաճկոն –կույրերի համար (nr.232-250)	50	500		69	74,8
արկղ	1	Գրատախտակի կավիճներ (nr.268)	100	100		1,4	1,5
արկղ	2	Պրոյեկտոր (nr.269-270)	50	100		25,4	26,9
				31412		8665,3	8837,9

Մոտավոր արժեքը, ընդամենը DKK 31.412 զուտ: 8665,30 կգ բրուտտո: 8,837,90

Մոտավորապես ԱՄՆ դոլարով 5.917

DANARMEN / INTERCOM
Danish- Armenian Humanitarian
Support Association
Emdrupgaardsvej 1; DK-2400 Copenhagen NV
Tlf. 0045 39565751; 0045 20636898

Ստորագրությունը: Աննա Կարապետյան

DANARMEN INTERCOM
Telefon: 39565751/20636898
Fax: 39565751
E-mail: anna@danarmen.dk

KØBENHAVN
Emdrupgårdsvej 1, 1
2400 København NV
Danmark

WW ANARMEN.DK
Danske Bank: Nørreport, Nørre Voldgade 68
1190 København K
Bankkonto nr.:1551 10105420

6/12.9

1. Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքապետարան

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. Կշ. փաթեթ.
հատ	5	Թղթերի դույլ -մեծ	10	50	0.8	4	4
հատ	3	Դարակներով պահարան	100	300	38	114	114
հատ	1	Հագուստի կախիչներ	5	5		5	5
հատ	19	Աթոռ առանց հենակի	40	760	6	114	114
հատ	2	Գրապահարան	90	180	13.5	27	27
Արկղ	1	Ստատիվ փաստաթղթեր տեղադրելու համար (nr. 73)	10	10		4	4.3
Արկղ	6	Կնացի հագուստ (nr. 257-262)	40	240		44.7	47.7
Արկղ	7	Թղթապանակ (nr. 123-125;156;186;205;215)	20	140		57.2	63.6
Արկղ	7	Ծաղիկ աճեցնելու համար ծաղկման (nr. 107;109;110;116;152;153;212)	10	70		64.6	68
Արկղ	1	Հեռուստացույց Prosomic; (nr. ???)	100	100		31.5	33.5
Արկղ	9	Խոհանոցային ապրանքներ (nr. 127-135)	20	180		53.4	57.2
	3	Համակարգիչ 1001;1017;1018 (nr. 8;23;24)	100	300		84.8	87.8
հատ	5	Աթոռ շագանակագույն ոտքերով	20	100	4	20	20
հատ	2	Գրապահարան	90	180	13.5	27	27
հատ	1	Սեղան (անհավասար կողմերով)	37	37	15	15	15
	2	Հեռուստացույց B&O; Sony; (nr. 221;223)	100	200		87	89
				2852		*753.2*	*771.1*

2. Հաշմանդամային սպորտի հայկական ազգային ֆեդերացիա

Արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. Կշ. փաթեթ.
Արկղ	5	Ներքնաշոր, բաճկոն-կույրերի համար (nr.232-235; 237)	50	250		23.6	25.3
Արկղ	3	7 քնապարկ (166;254); մետաղե սպասք (179)	25	75		20.2	22.5
				325		*43.8*	*47.8*

3. Հ.Ք. Կոֆոեդ Բարեգործական հիմնադրամ

6/12.9

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. կշ. փաթեթ.
հատ	1	Բազմոց սև պաստառով	100	100	40	40	40
հատ	1	2 ներքնակով մահճակալ	150	150	87	87	87
հատ	2	Մահճասեղան	35	70	7	14	14
հատ	1	Պահարան ապակե դռներով	50	50	18	18	18
հատ	1	Փոքրիկ սեղան, սև գույնի	25	25	4	4	4
հատ	8	Մեքենայի անիվներ Հ.Ք. Կոֆոեդ բարեգործական հիմնադրամի ծառայողական մեքենաների համար	50	400	12.75	102	102
հատ	1	Սառնարան (Girenja)	150	150	60	60	60
	1	Բարձր պահարան խոհանոցի համար	100	100	60	60	60
հատ	1	Աթոռ շագանակագույն կտորե մակերեսով	50	50	8	8	8
հատ	3	Բազկաթոռ կապույտ կտորե ծածկով	50	150	14	42	42
հատ	1	Պառկելաթախտ առանց ներքնակի	20	20	10	10	10
հատ	2	Դպրոցական մեծ սեղան, կարմիր ոտքերով, 1 տեղանոց	60	120	18	36	36
հատ	2	Աթոռ կանաչ կտորե ծածկով	50	100	9	18	18
հատ	3	Գրասենյակային սեղան (80+80+50 կգ)	80	210		210	210
Արկղ	4	Անգլերեն գրքեր+ֆիլմ (nr. 83;119;170;229)	10	40		34	35.3
Արկղ	1	Հատակ մաքրելու փայտ իր շորով (nr. 63)	5	5		2.5	3
Արկղ	8	Տղամարդու հագուստ (157-158;160;164;167-169;185)	25	200		93.6	99.4
Արկղ	5	Ներքնաշոր, բաճկոն-կույրերի համար (nr. 236;238-240;250	50	250		45.4	49.5
Արկղ	10	Տաք հագուստ անօթևանների համար (nr.149;151;159;196;198-200;206;209)	20	200		125.1	132.6
Արկղ	7	Պատճենահանման թուղթ (nr. 34-40;) ԴԱՆԱՐՄԵՆԻ կաբին. համար	40	280		110.4	115.7
	1 2	տպիչ Lexmark E 322+2 հատ compak ստեղնաշար; nr. 74; ԴԱՆԱՐՄԵՆԻ կաբին. համար տպիչ HP officejet T65, տպ. ֆաքս (82), տպիչ Optra S 1855 (225)/	100	300		43.8	47.3
				3050		*1198.5*	*1227.5*

4. Հոգեբուժական բժշկական կենտրոն

6/12.9

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. Կշ. փաթեթ.
հատ	1	Գինեկոլոգիական հետազոտության աթոռ	250	250	130	130	130
հատ	3	Ներքնակ 10 սմ	25	75	3.5	10.5	10.5
հատ	1	Համակարգչի փոքր սեղան	30	30	9	9	9
հատ	1	Թղթերի դույլ-փոքր	5	5	0.5	0.5	0.5
հատ	2	Համակարգչի աթոռ	50	100	10	20	20
հատ	1	Հիվանդանոցի անվավոր սեղան	35	35	12	12	12
հատ	6	Մետաղե պահարան կգ-27,42;25;38;35	40	240		167	167
հատ	2	Գրասենյակային սեղան (27;30 կգ)	100	200		57	57
հատ	3	Աթոռ հենակով	45	135	8	24	24
հատ	6	Թղթապանակ (nr. 67-72)	20	120		27.8	29.8
Արկղ	1	Ատամի խոզանակներ 200 հատ (nr. 66)	100	100		3.2	3.5
Արկղ	6	Հիվանդանոցային սպիտակեղեն (nr. 148;195); բարձ (177), վիրահատարանի ստերիլ հագուստ 266; շաքարը ստուգելու ապարատ 267; հիվանդի պալատի հեռախոս –ահազանգ 271	10	60		35	38
Արկղ	7	Գրասենյակային պիտույքներ (nr. 96;100;101;111;120;142;174)	50	350		53.2	55.7
Արկղ	3	Կանացի հագուստ (nr. 263-265)	40	120		20.4	21.9
Արկղ	1	տպիչ Lexmark Optra (nr. 226)	100	200		18.5	19.5
	14	Խոհանոցային ապրանքներ (nr. 41-49;53;55;81;95;121)	20	280		65.2	68.8
Արկղ		Համակարգիչ 1000 (nr. 9)	100	100		28.3	29.3
				2400		*681.6*	*696.5*

5. Արարատի մարզ Հովտաշենի միջնակարգ դպրոց

6/12.9

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. կշ. փաթեթ.
հատ	1	Գրատախտ. կավիճ (nr. 268)	100	100		1.4	1.5
հատ	7	Դպրոցական մեծ սեղան, մոխրագույն ոտքերով, 1 հոգ.	60	420	15	105	105
հատ	6	Դպրոցական աթոռ (մեծ) մոխրագույն	35	210	5	30	30
հատ	1	Կարի մեքենա	50	50	10	10	10
Արկղ	3	Համակարգիչ 1004;1015;1028; (nr. 14;18;25)	100	300		94.8	97.8
				1080		*241.2*	*244.3*

6. Լոռու մարզի Մեծ-Պառնու Ակադեմիկոս Մ. Մելքոնյանի միջնակարգ դպրոց

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. կշ. փաթեթ.
հատ	15	Դպրոցական մեծ սեղան, 1 հոգանոց	60	900	13	195	195
	15	Դպրոցական աթոռ (մեծ) շագանակագույն ոտքերով	35	525	5	75	75
հատ	1	Ճամպրուկ	10	10	3	3	3
հատ	6	Մանկապարտեզի աթոռ (5-6 տարեկանի համար)	30	180	4.6	27.6	27.6
	2	Մանկապարտեզի սեղան կարմիր մակերեսով	45	90	24	48	48
հատ	1	Գրասեղան /ուսուցչի սեղան/	70	70	45	45	45
հատ	1	Գրասեղան /ուսուցչի սեղան/	70	70	47	47	47
հատ	1	Սկաներ color SNAPS 1212 (nr. 219)	50	50		5	5.2
հատ	1	Տեսանվակարգիչ Samsung SV 605X (nr.59)	50	50		5	5.2
Արկղ	11	Կանացի հագուստ (nr. 58;90-92;155;201-204)	40	440		161.8	170.7
Արկղ	3	Աշխատանքային հագուստ (nr. 98;180;256)	10	30		34.1	35.6
Արկղ	2	DVD/CD ֆիլմ (nr. 88) Կասետ /ֆիլմ (89)	25	50		22.5	[illegible]
Արկղ	5	Խաղ մանկապարտեզի երեխաների համար (nr. 87;93-94;213-214)	20	100		32.1	34.7
Արկղ	1	Հեռուստացույց Samsung (nr. 224)	100	100		20	21
Արկղ	6	Խոհանոցային ապրանքներ (nr. 85;97;99;108;117;118)	20	120		42.2	43.7
Արկղ	4	Համակարգիչ - 1016;1020;1006;1007 (nr. 1-3;15)	100	400		115	116.5
				3185		*878.3*	*899.2*

7. Լոռու մարզի Քարաձոր համայնքի Քարաձորի միջնակարգ դպրոց

6/12.9

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. Կշ. փաթեթ.
հատ	12	Դպրոցական մեծ սեղան բորդո գույնի ոտքերով, 2 տեղանոց	90	1080	20	240	240
	11	Դպրոցական աթոռ (մեծ)	35	385	5	55	55
հատ	1	Գրասեղան /ուսուցչի սեղան/	70	70	49.5	49.5	49.5
հատ	1	Պահարան դռներով	50	50	25	25	25
հատ	6	Մանկապարտեզի աթոռ կիսակլոր հենակով	20	120	4	24	24
	2	Մանկապարտեզի սեղան կարմիր մակերեսով	45	90	24	48	48
Արկղ	1	Հեռուստացույց United (220)	100	100		19.5	20.5
Արկղ	1	տպիչ Canon 156 (nr. 86)	100	100		5.2	5.5
Արկղ	6	Կանացի հագուստ (nr. 181-184;190;216)	40	240		67.5	72.7
Արկղ	5	Խոհանոցային ապրանքներ nr. 112-115;146)	20	100		33.9	35.1
Արկղ	2	Համակարգիչ 1002-3 (nr. 6;10)	100	200		56.4	58.4
Արկղ	1	Վիդեոկասետ . մուլտֆիլմ (nr. 80)	10	10		2	2.2
				2545		*626*	*635.9*

8. Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի գեղարվեստի դպրոց

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. Կշ. փաթեթ.
հատ	25	Դպրոցական աթոռ (փոքր)	30	750	4.5	112.5	112.5
հատ	20	Դպրոցական մեծ սեղան, կարմիր ոտքերով, 2 հոգ.	90	1800	27	540	540
				2550		*652.5*	*652.5*

9. Տավուշի մարզի Նոյեմբերյանի "Հույսի Կամուրջ" երեխայի զարգացման կենտրոն 6/12.9

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. կշ. փաթեթ.
հատ	4	Մանկապարտեզի աթոռ կիսակլոր հենակով կարմիր ոտքերով	30	120	4.5	18	18
Արկղ	9	Հագուստ միջին տարիքի երեխաների համար (nr. 171;191-194;207;208;210;211)	20	180		108.4	113.9
Արկղ	5	Գլուխկոտրուկ երեխաների համար (nr. 144;145); մանկական ինքնաշարժ հեծանիվ (230;231;253)	10	50		32.5	35.3
				350		*158.9*	*158.9*

10. Նոյեմբերյանի "ԼԵՆԱ" հասարակության զարգացմանն աջակցող ՀԿ

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. կշ. փաթեթ.
Արկղ	10	Հագուստ (nr. 50;147;154;176;178;187;189;251; 252;255	20	200		109.8	117.5
Արկղ	1	տպիչ Lexmark Z 55 (nr. 75)	100	100		5.3	6.3
	5	Խոհանոցային ապրանքներ (nr.103-106;217)	20	100		29.4	30.6
	1	Համակարգիչ 1019 (nr. 19)	100	100		26.5	27.5
				500		*171*	*181.9*

11. Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի թիվ 1 մանկապարտեզ

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. կշ. փաթեթ.
հատ	3	Մանկապարտեզի սեղան կարմիր մակերեսով	45	135	24	72	72
Արկղ	5	Մանկապարտեզի աթոռ կարմիր նստատեղով	25	125	3.5	17.5	17.5
հատ	1	Պահարան դռներով և ապակե դռներով (52+58կգ)	250	250	110	110	130
հատ	34	Մանկապարտեզի աթոռ կարմիր, նարնջագույն, կանաչ, մոխրագույն	25	850	3	102	102
հատ	1	Արդուկի տախտակ	10	10	4.5	4.5	4.5
Արկղ	2	Կտորներ (nr. 126;143)	10	20		30.5	32.5
Արկղ	1	Պատճենահանման թուղթ (nr. 122)	40	40		9.5	9.9
				1430		*346*	*368.4*

12. Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոց 6/12.9

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. կշ. փաթեթ.
հատ	2	Տպիչ 1030,1031 –(nr. 31;32)	50	100		16.8	18.3
Արկղ	4	Պատճենահանման թուղթ (nr. 102;136;137;218)	40	160		31.9	32.6
Արկղ	2	Պրոյեկտոր (nr. 269-270)	50	100		25.4	26.9
Արկղ	1	Համակարգչի պահեստամասեր (nr.33)	50	50		8	8.5
Արկղ	4	Մոնիտոր 1009x2;1010;1027;1025 (nr. 17;27-30)	35	140		121.8	126.8
6	Համակարգիչ 1026;1023;1029;1008;1011 (nr. 12;13;5;16;22)	100	500			104.2	109.2
2	Գրատախտակ	25	50	21		42	42
			785			*350.1*	*364.3*

13. Տավուշի մարզի գյուղ Դովեղ համայնքի մանկապարտեզ

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. կշ. փաթեթ.
հատ	2	Խոհանոցի սեղան	35	70	16.5	33	33
	3	Մանկապարտեզի սեղան կարմիր մակերեսով	45	135	24	72	72
հատ	20	Մանկապարտեզի աթոռ կարմիր ոտքերով	25	500	5.5	110	110
հատ	[illegible]	Հագուստի կախիչներ (nr. 172)	10	10		6	6.7
Արկղ	[illegible]	Խաղ մանկապարտեզի երեխաների համար (nr. 60-62;65 (փայտե T -26)	20	80		19.2	20.5
Արկղ	2	Վիդեոկասետ. մուլտֆիլմ (nr. 78.;79)	10	20		3.8	4
	4	Խոհանոցային ապրանքներ (nr. 188;197;227;228)	20	80		41.5	43.4
				895		*285.5*	*289.6*

14. Տավուշի մարզի Դովեղի գյուղական համայնքի միջնակարգ դպրոց 6/12.9

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. կշ. փաթեթ.
հատ	15	Դպրոցական աթոռ (փոքր) մոխրագույն ոտքերով	30	450	4	60	60
հատ	20	Դպրոցական մեծ սեղան, կարմիր ոտքերով, 2 հոգ	90	1800	27	540	540
Արկղ	5	Խոհանոցային ապրանքներ 161-163;173;175;	20	100		61.1	64.8
Արկղ	6	Համակարգիչ 1005;1014;1013;1022;1012;1021;(nr. 4;7;11;20;21;26)	100	600		184.7	190.7
				2950		*845.8*	*855.5*

15. Տավուշի մարզի Կոթիի գյուղական համայնքի մանկապարտեզ

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. կշ. փաթեթ.
հատ	45	Մանկապարտեզի փայտյա կարմիր աթոռ	30	1350	5	225	225
հատ	3	Մանկապարտեզի կիսակլոր սեղան	50	150	16	48	48
հատ	17	Մանկապարտեզի աթոռ կարմիր ոտքերով	30	510	5.5	93.5	93.5
հատ	34	Մանկապարտեզի աթոռ "Esselte studium"	25	850	3.5	416.5	416.5
Արկղ	2	Վիդեոկասետ. մուլտֆիլմ (nr. 76;77)	10	20		3.5	3.7
Արկղ	1	Միկրոալիքային վառարան T-24 (nr. 64)	50	50		12.7	13.7
Արկղ	5	Խաղ մանկապարտեզի երեխաների համար (nr. 51;52;54;56;57)	20	100		22.3	25.5
	5	Խոհանոցային ապրանքներ (nr. 138-141;165)	20	100		20.4	21.6
				3130		*841.9*	*847.5*

16. Տավուշի մարզի Կողբի գյուղական համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոց 6/12.9

Հատ/ արկղ	Քանակ	Ապրանքի անվանումը	Ապր. 1 արժեքը	Ընդհ. արժեքը	Հատի կշիռը	Իրական կշ. ըստ	Ընդհ. կշ. փաթեթ.
հատ	23	Դպրոցական մեծ սեղան, մոխրագույն ոտքերով, 2 հոգ.	90	2070	21	483	483
հատ	30	Դպրոցական աթոռ (մեծ)	35	1050	5	150	150
	2	Գրատախտակ	25	50	21	42	42
				3170		*675*	*675*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2010 թվականի N Ս284
քաղ. Երևան

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԼՈԲԱԼ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 20-ի N 3/3.8-1/2205-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի 12-ի N 471-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի փետրվարի 16-ի N Ե2010-1338, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի փետրվարի 15-ի N 03/07.2/829-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի մարտի 26-ի N 12/8-22-1797, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 19-ի N 11585/3-6, Երևանի քաղաքապետարանի 2010 թվականի փետրվարի 11-ի N 02/50-1894h, ՀՀ Արարատի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 16-ի N 030/203, ՀՀ Արմավիրի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 15-ի N 365, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 19-ի N Ս-1-137, ՀՀ Լոռու մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 17-ի N 004/387-01, ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 16-ի N 01/14.2/392-10, ՀՀ Շիրակի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 18-ի N 01/433-10, ՀՀ Սյունիքի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 11-ի N 09-201, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 15-ի N 01/07.3/243-10 և ՀՀ Տավուշի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 16-ի N 17.4/18910 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Թումանյան 2-րդ փակ., տուն 7/1, ՀՎՀՀ՝ 02535097) իրականացվող՝ մոտ 2000000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային արտոնությունները կարող են տրամադրվել՝

1) ծրագրի կազմակերպչական ծախսերի շրջանակներում իրականացված գործարքների կապակցությամբ՝ դրանք որպես հարակից գործարք որակելու դեպքում:

2) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրով նախատեսվող ծրագրերի շրջանակներում գործարքների կապակցությամբ այդ ծրագրերը բարեգործական որակելու դեպքում:

3. Առաջարկել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարան, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարան և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի
գործադիր տնօրեն Լարիսա Միքայանի կողմից

«3» մայիսի 2010թ.

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի
կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման»

ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	«Բաց հասարակության ինստիտուտ»-ը նախաձեռնել և իրականացնում է «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման ծրագիր» նախկին Խորհրդային Միության, Արևելյան Եվրոպայի և Բալկանյան մի շարք երկրներում: Այս ծրագրի համար հատկացվել է 100 մլն. ԱՄՆ դոլար, որն ուղղված է աջակցելու 20 երկրում, այդ թվում և Հայաստանում, գլոբալ ֆինանսական ճգնաժամի արդյունքում սոցիալական ոլորտում, ինչպես նաև խոցելի խավերի մոտ առաջացած հրատապ խնդիրների հաղթահարմանը: Երկրներում ֆինանսավորումը կատարվելու է «Բաց հասարակության ինստիտուտ»-ի տեղական հիմնադրամների միջոցով՝ հատուկ ընթացակարգի համաձայն: Հայաստանին նախատեսվում է տրամադրել մինչև 2 մլն ԱՄՆ դոլար՝ երկու տարվա ընթացքում – 2010 – 2012թթ: Ծրագրի նպատակն է տրամադրել մարդասիրական օգնություն հասարակության սոցիալապես անապահով և խոցելի անդամներին և նրանց համար ապահովել կենսական նշանակության հիմնական ծառայությունների մատչելիությունը: Ծրագիրն աշխատում է ճկուն մեխանիզմով: Այն կարող է ֆինանսավորել ամենատարբեր նախաձեռնություններ, ինչպես օրինակ՝ օժանդակություն միայնակ ծերերին ձմռան ամիսներին բնակարանների ջեռուցման ապահովման խնդրում, աջակցություն դպրոցներում սննդի կազմակերպման հարցում, իրավաբանական աջակցություն և վերապատրաստման դասընթացներ նոր գործազուրկների համար, և այլն: Ֆինանսավորման պարտադիր պայման է հանդիսանում համաֆինանսավորման առկայությունը՝ պահանջվող գումարի 30-50% չափով:
2. Ծրագրի բարեգործական որակյալ նպատակը	Ակնկալվում է՝ հարկային արտոնությունների ստացում՝ սննդամթերքի, վառելիքի, էլեկտրաէներգիայի, ուղղակնական միջոցների, տրանսպորտային ծախսերի վճարման ԱԱՀ-ից ազատում: Ապրանքների, սարքավորումների ներմուծման և ձեռքբերման դեպքում մաքսային վճարներից և ԱԱՀ-ից ազատում, հեռահաղորդակցման կապի ծառայությունների վարձավճարների ԱԱՀ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱԱՀ-ից ազատում, ավտոմեքենայի և պահեստամասերի ձեռքբերման հետ կապված՝ մաքսավճարների և ԱԱՀ-ից ազատում:
3. Բարեգործը	Ֆինանսավորումը կատարվում է Բուդապեշտի (Հունգարիա) Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի կողմից տրամադրած միջոցների հաշվին:
4. Ծրագիրը կատարողը	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ Գործող հասցե՝ Թումանյան 2-րդ փակուղի, տ. 7/1, Երևան 0002, հեռ. 533862, 536758 Իրավաբանական հասցե՝ Արամի 44 ՀՎՀՀ՝ 02535097
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրագործվում է Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում՝ կրթության, առողջապահության, սոցիալական ոլորտներում:
6. Ծրագրի բյուջեն	ԲՀԻՕՀՀՄ-ի «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի գումարը կազմում է մոտ 2,000,000 ԱՄՆ դոլար՝ երկու տարվա կտրվածքով: Ֆինանսավորումը կատարվում է Բուդապեշտի (Հունգարիա) Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով: Գումարների տրամադրումը ԲՀԻՕՀՀՄ-ին կատարվելու է ըստ ծրագրերի նպատակայնության և կարիքի հիմնավորվածության:
7. Բարեգործություն ստացողը	Երևանի և Հայաստանի բոլոր մարզերի խոցելի խմբերի ներկայացուցիչներ՝ սոցիալապես անապահով երեխաներ, ծերեր, հաշմանդամներ, գործազուրկներ, փախստականներ, անապահով բազմազավակ ընտանիքներ, սոցիալապես խոցելի ուսանողներ, սահմանամերձ համայնքի բնակիչներ, սոցիալապես խոցելի վիճակում գտնվող ընտանիքներ, դպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաներ: Շահառուների ցուցակները կտրամադրվեն տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոլորտում ծրագրեր իրականացնող միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից: Բարեգործություն ստացողներ են նաև հետևյալ կազմակերպությունները՝ «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Սարյան 22, ք. Երևան 0002 ՀՎՀՀ՝ 01512224 Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ դպրոց

	Գտնվելու վայրը՝ Հ. Ներսիսյան 3, ք. Երևան ՀՎՀՀ՝ 00008415 Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն Գտնվելու վայրը՝ Քաջազնունի 12, ք. Երևան ՀՎՀՀ՝ 01518806 Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր Գտնվելու վայրը՝ Նորքի այգիներ 193, ք. Երևան ՀՎՀՀ՝ 01504672 «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Եկմալյան 1-ին փող., տ. 6, ք. Երևան 0002 ՀՎՀՀ՝ 02552842 «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Հ. Սարգսյան փող., նրբ. 3, տուն 8, ք. Գյումրի 3118 ՀՎՀՀ՝ 05514397 Թուֆենկյան բարեգործական հիմնադրամ Գտնվելու վայրը՝ Մ. Խորենացի 2, բն. 10, ք. Երևան 0015 ՀՎՀՀ՝ 02570903 Սի.Օ.Էյ.Էֆ մանուկների բարեգործական հիմնադրամ Գտնվելու վայրը՝ Փ. Բուզանդ 53-55, ք. Երևան 0010 ՀՎՀՀ՝ 02569972 «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ Գտնվելու վայրը՝ Աբովյան 34, բն. 5, ք. Երևան 0009 ՀՎՀՀ՝ 00060436 «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Գ. Նժդեհի 42, ք. Երևան 0061 ՀՎՀՀ՝ 02214646 «Անարատ հղության հայ քույրերի միաբանության Տիրամայր Հայաստանի կուսաստան» Գտնվելու վայրը՝ Չարենցի 6, Անի թաղամաս, ք. Գյումրի, Շիրակի մարզ ՀՎՀՀ՝ 05513266 ՄԱԿ-ի Զարգացման ծրագրեր Հայաստան Գտնվելու վայրը՝ Պ. Ադամյան 14, ք. Երևան 0010 «Ինթրահելթ Ինթերնեյշնլ Ինք» Ընկերության Հայաստանյան ներկայացուցչություն Գտնվելու վայրը՝ Զարոբյան 28, ք. Երևան ՀՎՀՀ՝ 02558676

	Արմավիրի թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց Գտնվելու վայրը՝ Գորկու փ., V նրբ. 14շ., ք. Արմավիր ՀՎՀՀ՝ 04407681
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը կիրականացվի 2010 թվականի հունվարի 1-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	**1. «Օրրան» բարեգործական հասարակական** կազմակերպության ծրագրի նպատակն է Վանաձորում ստեղծել երեխաների ցերեկային խնամքի կենտրոն: Կենտրոնը 50 թափառող և կարիքավոր դպրոցահասակ երեխայի դպրոցից անմիջապես հետո տրամադրում է օրական տաք և առողջարար սնունդ, օգնում է տնային աշխատանքները կատարելիս, բժշկական, ատամնաբուժական, հոգեբանական ծառայություններ է մատուցում և կազմակերպում է արտաժամյա միջոցառումներ, ներառյալ մշակութային միջոցառումներ և պարապմունքներ փայտագործության, մաքրամեի, ասեղնագործության և կավագործության խմբակներում: Ծրագրի գումարը կազմում է 74,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2009թ. հոկտեմբեր – 2010թ. հոկտեմբեր: **2. Երևանի** լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի, Խոսքի խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 դպրոցի և Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի ծրագրի նպատակն է փոխհատուցել տրանսպորտային ծախսերը ապահովելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 90 երեխայի հաճախումը կրթական հաստատություններ 2009-2010 ուսումնական տարվա ընթացքում: Ծրագրի գումարը կազմում է 12,870 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2009թ. հոկտեմբեր - 2010թ. հունիս: **3.** Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի ծրագրի նպատակն է աջակցել մարզերի սոցիալապես անապահով ընտանիքներին, որոնք ունեն նորածիններ: Տավուշի մարզի 120 ընտանիք ստացել է մեկական փաթեթ, որը պարունակում է մինչև 1 տարեկան երեխաների համար նախատեսված հագուստի և հիգիենայի առաջին անհրաժեշտության պարագաներ: Նախաճեռնության մասին կպատրաստվի և հանրային հեռուստատեսությամբ կհեռարձակվի ֆիլմ: Ծրագրի գումարը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2009թ. հոկտեմբեր - 2010թ. հունիս: **4.** Հայկական Կարիտաս, բարեսիրական հասարակական կազմակերպության ծրագրի նպատակն է միայնակ ծերերի շրջանում նվազեցնել մահացության աստիճանը, որը ձմռան ամիսներին միտում ունի աճելու՝ կապված ցրտից բխող հիվանդությունների աճի հետ: Ծրագիրը նախատեսում է ապահովել Գյումրիի, Վանաձորի, Գավառի և Տաշիրի 560 միայնակ և հաշմանդամ ծերերի բնակարանների ջեռուցումը՝ փոխհատուցելով ջեռուցման (գազ, էլեկտրաէներգիա,

հազվադեպ՝ փայտ) ծախսերը: Փոխհատուցվելու է 770 ծերերի ջեռուցման ծախսերը: Ծրագրի գումարը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը՝ դեկտեմբեր 2009 - ապրիլ 2010թ.

5. Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի «Զանգակատուն» ծրագրի նպատակն է աջակցել աղքատության մեջ հայտնված, մարգինալացված կամ այլ կերպ խոցելի դարձած ընտանիքներին՝ մասնավորապես հոգալով երեխաների կարիքները և ընտանիքներին տրամադրելով բազմակողմանի վերականգնողական ծառայություններ: Երևանի և Վանաձորի սոցիալ-հոգեբանական, կրթական աջակցության կենտրոնները ընդլայնում են իրենց շահառուների շրջանակը՝ յուրաքանչյուրը մատուցելով ծառայություններ 75 ընտանիքի (ընդամենը 150 ընտանիք, նախկին 92 ընտանիքի փոխարեն): «Զանգակատուն»-ն աջակցում է համայնքների զարգացմանը՝ հզորացնելով ընտանիքը և հատկապես հոգալով երեխաների կարիքները: Ծրագրի գումարը կազմում է 90,478 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը՝ հունվար 2010թ. – հունվար 2011թ.

6. Սի.Օ.էյ.էֆ մանուկների բարեգործական հիմնադրամի ծրագրի նպատակն է անմիջական աջակցության տրամադրումը Արմավիրի և Արագածոտնի մարզերի Արգինա, Շենիկ, Քարակերտ, Դալարիկ, Մյասնիկյան, Լեռնագոգ, Հուշակերտ և Արդենի գյուղերի 104 սոցիալապես անապահով ընտանիքների (566 անձ): Ծրագիրը տրամադրելու է առաջին անհրաժեշտության սնունդ և հիմնական դեղամիջոցներ՝ կանխելու ծմեռվա ամիսներին հատուկ հիվանդացության և մահացության դեպքերի աճը: Ծրագրի գումարը կազմում է 24,500 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը՝ հունվար 2010 թ. – մայիս 2010թ.

7. Ջինիշյան հիշատակի հիմնադրամի ծրագրի նպատակն է բարելավել ֆերմերների տնտեսական վիճակը՝ աջակցելով Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Վայոց Ձորի և Լոռու մարզերում գործող տաս գյուղատնտեսական ֆերմերային միավորումներին՝ հաղթահարելու գլոբալ ֆինանսական ճգնաժամի բացասական հետևանքները իրենց գործունեության վրա: Մինչև 5000 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհներ են տրամադրվելու տաս ֆերմերային կոոպերատիվների, որոնցից յուրաքանչյուրը կազմված է 45-50 ֆերմերներից, այսինքն՝ ծրագրի անմիջական շահառուների թիվը կազմում է 450-500 ֆերմեր: Ծրագրեր են ֆինանսավորվելու ուղղված գյուղատնտեսական սարքավորումների համալրմանը, պարարտանյութերի ձեռքբերմանը, բարձրարժեք մշակաբույսերի արտադրության և օրգանական գյուղատնտեսության զարգացմանը, ագրոտեխնոլոգիայի ուսուցմանը, և այլն: Ծրագրի գումարը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը մարտ 2010 թ - դեկտեմբեր 2010 թ:

8. «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպության ծրագրի նպատակն է տրամադրել տաք կերակուր սոցիալապես անապահով 3,000 շահառուի շաբաթական 5 օր գրաֆիկով 7 մարզում՝ Կոտայք, Արարատ, Շիրակ, Գեղարքունիք, Սյունիք, Լոռի, Տավուշ և

Երևանում գործող 25 ճաշարանների և ցերեկային խնամքի կենտրոնների միջոցով, ինչպես նաև տրամադրել սոցիալական և առողջապահական ծառայություններ 6,000 շահառուի: Դրամաշնորհի օգնությամբ մի շարք գործող ճաշարաններ, որոնք կանգնած էին փակվելու վտանգի առջև, այժմ շարունակում են ծառայություններ մատուցել իրենց շահառուներին: Ծրագրի գումարն է 199,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. ապրիլ – 2011թ. ապրիլ:

9. «Անարատ հղության հայ քույրերի միաբանության Տիրամայր Հայաստանի կուսաստան» ծրագրի նպատակն է ամառային ճամբար հաճախող տարեկան ավելի քան 800 կարիքավոր երեխայի համար ապահովել հանգստի առավել լավ պայմաններ, հնարավոր դարձնել ճամբարի հարմարությունների օգտագործումը ամբողջ տարվա ընթացքում՝ տեղային ջեռուցման համակարգի տեղադրման միջոցով: Այն հնարավոր կդարձնի ճամբարի գործունեությունը ողջ տարվա ընթացքում՝ ավելացնելով ճամբար հաճախող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների թիվը, ինչպես նաև խնայել էլեկտրաէներգիան և զգալիորեն նվազեցնել համապատասխան ծախսերը: Ծրագրի գումարը կազմում է 66,824 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. մարտ – 2010թ. մայիս:

10. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրեր Հայաստանի ծրագրի նպատակն է ապահովել կրթության հավասար պայմանների մատչելիություն կարիքավոր ուսանողների համար, ովքեր ուզում են ձեռք բերել միջին մասնագիտական կրթություն: Ծրագիրը կհոգա Տավուշի բարձր առաջադիմություն ցուցաբերող 50 կարիքավոր ուսանողների ուսման հետ կապված ծախսերը (ուսման վարձ, ուսումնական նյութեր և տրանսպորտ): Շահառու ուսանողները կընդգրկվեն Տավուշի մարզում գործող 6 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից: Ծրագրի գումարը կազմում է 13,108 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. ապրիլ – 2011թ. դեկտեմբեր:

11. «Ինքրահելք Ինքերնեյշնլ Ինք» Ընկերության Հայաստանյան Ներկայացուցչության ծրագրի նպատակն է բարելավել մայրերի և երեխաների առողջությունը Հայաստանի գյուղական հեռավոր համայնքներում: Ծրագրի ընթացքում առաջին անհրաժեշտության պարագաներ պարունակող թվով 4000 մանկաբարձական փաթեթ կտրամադրվի 11 մարզային ծննդատների: Փաթեթները կօգտագործվեն ծննդօգնության նպատակով: Ծրագրի գումարը կազմում է 14,400 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. մայիս – 2010թ. դեկտեմբեր:

12. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի ծրագրի նպատակն է կազմակերպել 20-օրյա ամառային հանգիստ Երևան քաղաքի չորս հատուկ դպրոցների 7-13 տարեկան 120 երեխայի համար: Ծրագիրը նպաստում է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրմանը հասարակություն՝ նրանց շփման կարողությունների զարգացման և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնդիրների և կարողությունների վերաբերյալ հանրակրթական

	դպրոցների սաների իրազեկվածության բարձրացման միջոցով: Ամառային հանգիստը կազմակերպվելու է Հանքավանի "Լուսաբաց" ճամբարում՝ 2010 թ. օգոստոս ամսին: Ծրագրի գումարը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. մայիս – 2010թ. սեպտեմբեր: 13. Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի ծրագրի նպատակն է կազմակերպել ամառային ճամբար 45 օր տևողությամբ 120 մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար Ստեփանավանում: Ճամբարը ապահովելու է 40 երեխայի հանգիստ 15 օր տևողությամբ՝ 3 հերթով: Երեխաները ընտրվելու են Հանրապետության բոլոր մարզերի հատուկ կարիքներով երեխաների համար դպրոցներից: Ճամբարի շահառու երեխաները լինելու են սոցիալապես առավել անապահով ընտանիքներից, որոնք ի վիճակի են որոշ ժամանակ մնալ առանց ծնողների ներկայության: Ծրագիրը նպաստելու է նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնմանը: Ծրագրի գումարը կազմում է 21,472 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. մայիս – 2010թ. սեպտեմբեր: 14. Արմավիրի թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցի ծրագրի նպատակն է նպաստել Արմավիրի մարզում ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների կրթական պրոցես լիարժեք ինտեգրվելուն: Ծրագրով նախատեսվում է միկրոավտոբուսի ձեռքբերում, որը կապահովի մտավոր և ֆիզիկական որոշ անկարողություններ ունեցող երեխաների դպրոց հաճախելը՝ տեղափոխելով նրանց տնից դպրոց և դպրոցից տուն: Այդ երեխաների սոցիալական և հոգեբանական առավել լիարժեք զարգացվածությունը ապահովելու համար Ծրագրով նախատեսվում է նաև կավագործության խմբակի հիմնում դպրոցում, որը ներառում է կավաթրծման սարքի ձեռքբերում և համապատասխան տարածքի վերականգնում: Ծրագրի գումարը կազմում է 20,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. մայիս – 2010թ. դեկտեմբեր:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք են բերվելու վառելիք և տրանսպորտային միջոցներ, սննդամթերք, տարածքի վարձակալում, հաղորդակցման միջոցներ՝ հեռախոս, ինտերնետ, ուսումնական միջոցներ, առաջին անհրաժեշտության կենցաղային պարագաներ սոցիալապես անապահով ընտանիքներին, ծերերին, նորածին երեխաներին:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական	2010 – 2012 թթ. ԲՀԻՕՀՀՄ-ն «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ձեռք բերել ավտոմեքենա և պահեստամասեր, որոնց գինը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Կազմակերպությունը և երկիրը, որտեղից կներմուծվի ավտոմեքենան պարզ կդառնա անցկացված մրցույթի և ստացված հայտերի

ծախսերը	արդյունքում: Մեքենայի անհրաժեշտությունը պայմանավորված է «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի հատկացված միջոցների բաշխման, մոնիտորինգի համար կատարվող աշխատանքների, ինչպես նաև Երևան և մարզեր շրջայցեր կատարելու համար: «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի ավարտից հետո ձեռք բերված ավտոմեքենան կծառայի ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագրային նպատակների իրականացման համար: Ակնկալվում է միջազգային, տեղական, բջջային հեռախոսակապի ծախսեր մոտ 8,800 ԱՄՆ դոլար (մեկ տարվա համար), որից 2,800 ԱՄՆ դոլարը միջազգային և տեղական հեռախոսակապի ծախսերն են, իսկ 2,000 ԱՄՆ դոլարը կազմում են բջջային հեռախոսակապի ծախսերը՝ կնքված են պայմանագրեր «Արմենտել» ՀՁ ՓԲԸ-ի հետ: Ինտերնետ կապի ապահովման համար կնքվել է պայմանագիր ԲՀԻՕՀՀՄ-ի և «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի միջև՝ 4,000 ԱՄՆ դոլար գումարի: Այսպիսով, երկու տարվա կտրվածքով ԲՀԻՕՀՀՄ-ի Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական ծախսերը կազմում են 42,600 ԱՄՆ դոլար, որը կազմում է «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի ընդհանուր գումարի 2,1%:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ԲՀԻՕՀՀՄ-ն ծրագրի իրականացման շրջանակներում համագործակցում է՝ • ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ՝ հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներին տրանսպորտի/վառելիքի տրամադրման ծրագրում • ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, տեղական իշխանությունների և ԱՄՆ-ի Միջազգային զարգացման կազմակերպության հետ, «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի՝ «Սննդի, սոցիալական և առողջապահական ծառայությունների տրամադրում ք. Երևանի և Հայաստանի 7 մարզերի 6,000 շահառուներին» ծրագրի շրջանակներում • Սի. Օ. էյ. էֆ. Մանուկների բարեգործական հիմնադրամի հետ, «Սնունդ և հիմնական դեղամիջոցներ Արմավիր մարզի սոցիալապես խոցելի գյուղացիներին» ծրագրի շրջանակներում • Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի հետ՝ «Ձանգակատուն» ծրագրի իրականացման շրջանակներում • ԱՄՆ-ի Միջազգային զարգացման կազմակերպության հետ՝ «Ամառային ճամբար-Ձեռուցման համակարգի տեղադրում» ծրագրի շրջանակներում, ինչպես նաև Հայաստանի գյուղական հեռավոր համայնքներում մայրերի և երեխաների առողջության բարելավմանն

	ուղղված ծրագրում • ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ՝ կրթության մատչելիությունը կարիքավոր ուսանողների համար ապահովելուն ուղղված ծրագրում • Չինիշյան հիշատակի հիմնադրամի հետ՝ Հայաստանի մարզերում գործող ֆերմերային տնտեսություններին աջակցելու նպատակով
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	- ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է հետևյալ մարմինների կողմից՝ ա) յուրաքանչյուր տրամադրված դրամաշնորհի ֆինանսական միջոցների և ծրագրի իրականացման վերահսկումը դրամաշնորհների ղեկավարի և ծրագրի պատասխանատուի, բ) ԲՀԻՕՀՀՄ-ի գործադիր տնօրենի, գ) ԲՀԻՕՀՀՄ-ի և Բաց հասարակության ինստիտուտի Տնօրենների խորհրդի, դ) ցանցային գլխամասային (Նյու Յորք, Բուդապեշտ) գրասենյակների: Վերահսկման եղանակներն են. - Բաց հասարակության ինստիտուտի գլխամասային ցանցային գրասենյակին (Նյու Յորք) և Բաց հասարակության ինստիտուտի կենտրոնացված ֆինանսա-վարչական միավորին (Բուդապեշտ) ամսեկան ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև տարեկան հաշվետվությունների տրամադրում; - Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի և տարածաշրջանային ֆինանսական տնօրենի կողմից իրականացվում է ամենամյա ներքին աուդիտ; - Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի պատվերով իրականացվում է ԲՀԻՕՀՀՄ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտ (2000թ.-ից այն իրականացվում է KPMG-ի կողմից); - ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ընդունված կարգի; - Ամենամյա տարեկան հաշվետվության տպագրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2010 թվականի ՆՄ- 283 -Ա
քաղ. Երևան

«ԱՌԱՋԻՆԸ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆՀՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի փետրվարի 26-ի N 3/3.8-1/775-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի հունվարի 26-ի N Ե281, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի փետրվարի 26-ի N Ե2010-1875, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի հունվարի 22-ի N 04/07.2/292-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի փետրվարի 3-ի N 12/8-22-345, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2010 թվականի փետրվարի 11-ի N ՊՆ/510-ԱԴ-69, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մարտի 2-ի N 5917/3-4, Երևանի քաղաքապետի 2010 թվականի հունվարի 27-ի N02/34-720h ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի փետրվարի 4-ի N19/122-10 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Բարեգործական որակել «Առաջինը՝ երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2010 թվականին իրականացվող՝ 17000000 դրամ ընդհանուր արժողությամբ «Անհոգ մանկություն» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Առաջինը՝ երեխաներին» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված

ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին ու Դիլիջանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

«ԱՌԱՋԻՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
2010թ. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆՀՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1.	*Ծրագրի նպատակը*	Օժանդակություն աղքատ, բազմազավակ երեխաներին և ծերերին: Աջակցություն աղքատության մեջ գտնվող սոցիալապես անապահով ընտանիքներին, միայնակ և կարիքավոր ծերերին, Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքներին և երեխաներին:
2.	*Ծրագրի բարեգործական ուղղման նպատակը.*	ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը:
3.	*Բարեգործը.*	Ծրագիրը ֆինանսավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների «Հայրենիք» միության, Պոլսահայ բարերար Ա. Էոյանի, անհատ բարերարներ Պերճ Քարքալ-օղլու և Ժիլբեր Մոմջյանի կողմից:
4.	*Ծրագիրը կատարողը*	Ծրագիրն իրականացնում է «ԱՌԱՋԻՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» բարեգործական հասարակական կազմակերպությունը ՀՎՀՀ՝ 02560514: ՀՀ ք. Երևան Հանրապետության հրապարակ, կառավարական տուն N2
5.	*Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը.*	Ծրագիրն առընչվում է սոցիալական, առողջապահական և կրթական բնագավառին ընդգրկելով է Հայաստանի Հանրապետության ք.Երևանը, Տավուշի մարզի ք. Դիլիջանը, Արագածոտնի և Կոտայքի մարզերը, Լոռի մարզի Վանաձորի քաղաքապետարանը, Լոռու մարզի Սպիտակի մանկատունը, Գեղարքունիքի մարզի Վարդենիսի հիվանդանոցը:
6.	*Ծրագրի բյուջեն.*	Ծրագրի կողմնորոշիչ արժեքն է 17000000դրամ
7.	*Բարեգործությունն ստացողը.*	Ծրագրում ընդգրկված են Դիլիջան քաղաքի Կաղնի Խաչի բաղամասի, թիվ 1 մանկապարտեզի, ինչպես նաև Երևան քաղաքի / Արետ և Մոնիկ Երկանյանների / թիվ 53 դպրոցի մի մասնաշենքի 3 րդ հարկը 6-16 տարեկան երեխաներ, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, ընտանիքներում: Երեխաների մեծ մասը հաշմանդամ ծնողներ ունեն, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ են: Ծրագրում ընդգրկված են նաև Երեխաների զարգացման կենտրոնը /որտեղ հաճախում են աուտիզմով հիվանդ երեխաներ/: Շահառուների ցուցակները կազմվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին՝ ընտանիքների սոցիալական ենթարագիրների մանրամասն ուսումնասիրությունների հիման վրա: Ծրագրի շահառուները են հանդիսանում 300-ից ավելի ընտանիքներ Ծրագրի շահառուներն են նաև բեռների մանվագ ներմուծման դեպքում՝ Սպիտակի մանկատունը, Արագածոտնի, Կոտայքի մարզերը, Վարդենիսի հիվանդանոցը, Նորքի տուն ինտերնատը, Վանաձորի մանկատունը և ըստ դիմումների բարեգործական հասարակական կազմակերպությունները:
8.	*Ծրագրի իրականացման տևողությունը*	Ծրագիրն սկսել է 2004 թվականի ապրիլին NՄ-161-Բ-ԱԾ այն շարունակական է:Սույն ծրագիրը իրականացվելու է 2010 թվականի ընթացքում:
9.	*Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը.*	• Դիլիջանի /50 երեխաներ/ և Երևանի /50 երեխաներ/ • / կենտրոններ հաճախող երեխաներին վիտամիններով և հանքային նյութերով հարուստ /շաբաթը 5օր/ տաք սննդի մատուցում կողմնորոշիչ արժեքը 5000000 դրամ • առաջին եռամսյակ՝ 1250000 դրամ • երկրորդ եռամսյակ 1250000 դրամ • երրորդ եռամսյակ 1250000 դրամ • չորրորդ եռամսյակ 1250000 դրամ, • դպրոցահասակ երեխաների դպրոցական առաջին պարագաների կազմակերպում դպրոցից հետո /շաբաթը 5օր/ Երեխաներին գրենական պիտույքների, ուսումնական նյութերի պայուսակների ապահովում կողմնորոշիչ արժեքը .2000000դրամ • առաջին եռամսյակ 500000դրամ • երկրորդ եռամսյակ 500000դրամ • երրորդ եռամսյակ 500000 դրամ • չորրորդ եռամսյակ 500000դրամ • բժշկական ծառայություններ / ակնաբուժի, ատամնաբուժի/ բժշկական վերահսկողություն /շաբաթը 5օր/ Ծառայությունները իրականացվում են անհատույց: • հոգեբանական ծառայություններ՝ հոգեբանական աջակցության կազմակերպում , անհատական և խմբային թերապիաներ Ծառայությունները իրականացվում են անհատույց: • սոցիալական ծառայություններ՝ Ծառայությունները իրականացվում են անհատույց: • կրթական ծառայություններ՝ կենտրոնի երեխաների համար անվճար մաթեմատիկայի, հայոց լեզվի, ռուսաց լեզվի, օտար լեզվի, համակարգչի, պարի, ասեղնագործության, հայ եկեղեցու պատմության /կրոնի/ անվճար դասընթացների կազմակերպում Ծառայությունները իրականացվում են անհատույց: • 6-16 տարեկան երեխաների ամառային հանգստի կազմակերպում բակային և ամառային ճամբարներում Ճամբար հաճախելու են Երևան քաղաքի / Արետ և Մոնիկ Երկանյանների / թիվ 53 դպրոցի 6-16 տարեկան երեխաները նաև թիվ 162 մանկապարտեզի երեխաներ: • պատմա - մշակութային արժեքների հետ շփում ամիսը 1 անգամ սպորտային և մշակութային ծրագրերի կազմակերպում Ծառայությունները իրականացվում են անհատույց: • արտասահմանից բեռների ներմուծում կողմնորոշիչ արժեքը 10 000000 դրամ • առաջին եռամսյակ 2500000դրամ • երկրորդ եռամսյակ 2500000 • երրորդ եռամսյակ 2500000 • չորրորդ եռամսյակ 2500000 Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 17000000 դրամ
10	*Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, , ծավալները, նախատեսվող գինը*	Ներմուծումներ բարերարների կողմից /հագուստ, կենցաղային տեխնիկա, հիգիենիկ և բժշկական պարագաներ, գրենական պիտույքներ, կահույք սննդամթերք, կողմորոշիչ արժեքը 10000000դրամ
11	*Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը*	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում
12	*Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ .*	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ շահառուների ցուցակների ճշտման կապակցությամբ: Ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի. ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության , ՀՀ պաշտպանության նախարարությունների հետ:

13.	*Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը,*	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ▪ Ամերիկայի Միացյալ Նահանգների բարերարների ▪ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից:

«ԱՌԱՋԻՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԲՀԿ
Նախագահ՝ Ն. ՕՍԿԱՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

ՀՀ առողջապահության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Գ. Սայադյանի կողմից
«27» Apr.h.t.h. 2010թ.

«Առողջապահական համակարգի հզորացում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Առողջապահական համակարգի հզորացում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է, ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» համաձայն օգտվել ԱԱՀ-ի և մաքսային արտոնություններից
3.	Բարեգործը	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամ 1214 Վերներ – ժնև, Շվեցարիա
4.	Ծրագիրը կատարողը	ՀՀ առողջապահության նախարարության, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերը համակրգող խումբ Կառավարության 3 շենք ՀԿՀՀ 02507171
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրով նախատեսվում է կազմակերպել միջոցառումներ ք. Երևանում և ՀՀ բոլոր մարզերում: Ծրագրի հիմնական բնագավառը Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգն է:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 1 174 082.2 Եվրո:
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներ են հանդիսանում ՀՀ-ում պալիատիվ խնամք ստացող ՄԻԱՎ-ով ապրող հիվանդները, դոնորական արյուն ստացողները, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժմամբ և կանխարգելմամբ զբաղվող բժշկական հաստատությունները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի իրականացման տևողությունն է 2010 թվականի ապրիլի 1-ից մինչև 2012 թվականի մարտի 31-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ
«ՌԻՍԿՈՒՄ» ՀԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ

ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ

30 ապրիլի 2010 թվականի ՆՈՒ-28

Ա

Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի հաստատման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 15-ի N 312-Ն որոշման 2-ի N12/8-SÖ-20027 գրությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 15-ի N33.8-1/2099-10, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 15-ի N 542-10, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 16-ի N 11408/3-6, եզրակացությունը, **որոշում է.**

1. Բարեգործական ծրագրերի հաստատման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 16-ի N 11408/3-6 եզրակացությամբ հաստատված առողջապահական ոլորտում ՀՀ կառավարության ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի «Առողջապահական համակարգի հզորացում» ծրագրի կոդի (ծածկագրի) տակ գրանցված բարեգործական ծրագրի հետ կապված ներմուծվող ապրանքներին ՀՀ-ում ներմուծման մաքսային հարկերի, մաքսատուրքերի, ավելացված արժեքի հարկի, ինչպես նաև ՀՀ-ում ներմուծվող ապրանքներին ներմուծման հետ կապված մաքսային ընթացակարգերի կիրառման մասին:

2. Առողջապահության նախարարությանը՝ ապրանքների ներմուծման դեպքում ՀՀ-ում ներմուծվող ապրանքներին ներմուծման հետ կապված մաքսային ընթացակարգերի կիրառման մասին տեղեկացնել ՀՀ մաքսային ծառայությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման օրվանից:

ՆԻՍՏԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ Ս. ՏԱՐՍԱՄՅԱՆ

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Համաձայն 2009 թվականի հոկտեմբերի 29-ին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի և ՀՀ առողջապահության նախարարության միջև կնքված պայմանագրի, նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.	
		Նպատակ 1	Մշակել Ազգային առողջապահական համակարգի աշխատուժի ռազմավարություն
		Նկարագրությունը	Քարտեզավորել ներկայիս առողջապահական աշխատուժի տեղակայումը, հայտնաբերել առողջապահական համակարգի կարիքները բուժ.աշխատողների քանակի, մասնագիտության և հմտությունների վերաբերյալ, նորացնել տեղեկատվական համակարգը բուժաշխատուժի հոսքի վերաբերյալ, մշակել գումարային և ոչգումարային խրախուսման մեթոդներ հեռավոր տարածքներում բուժաշխատողներին գրավելու ու պահելու նպատակով, մշակել շարունակական մասնագիտական զարգացման քաղաքականություն բոլոր տեսակի բուժաշխատողների համար, վերանայել Պետական բժշկական կրթական հաստատություններում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի առկա ուսուցողական ծրագրերը և մշակել նոր ծրագիր բուժքույրերի ու բժիշկների համար:
		Եռամսյակ II	18 365 Եվրո
		Եռամսյակ III	7 705 Եվրո
		Եռամսյակ IV	20 930 Եվրո
		Ընդհանուր 1 Տարի	**47 000 Եվրո**
		Եռամսյակ V	15 950 Եվրո
		Եռամսյակ VI	9 010 Եվրո
		Եռամսյակ VII	14 781.3Եվրո
		Եռամսյակ VIII	53 799.6 Եվրո
		Ընդհանուր 2 Տարի	**93 541 Եվրո**
		Ընդամենը 1 և 2 Տարիներ	**140 541 Եվրո**
		Նպատակ 2	Մշակել Պալիատիվ խնամքի ծեռնարկները և ներդնել ազգային առողջապահական համակարգում
		Նկարագրությունը	Վերանայել պալիատիվ խնամքի ներկայիս ծառայությունները, վերլուծել օպիոիդների ներկայիս քաղաքականությունը, փորձարկել պալիատիվ խնամքի տարբեր մոդելները, ուսումնասիրել հնարավոր ֆինանսական մեխանիզմները և մշակել հաստատման առաջարկություններ, վերանայել պալիատիվ խնամքի առկա կրթական ծրագրերը և մշակել նոր ուսուցողական մոդուլներ:
		Եռամսյակ II	15 322.5 Եվրո
		Եռամսյակ III	3 292.5 Եվրո
		Եռամսյակ IV	20 522.5 Եվրո
		Ընդհանուր 1 Տարի	**39 147.5 Եվրո**
		Եռամսյակ V	19 622.5 Եվրո
		Եռամսյակ VI	33 232.5 Եվրո
		Եռամսյակ VII	17 792.5 Եվրո
		Եռամսյակ VIII	68 075 Եվրո
		Ընդհանուր 2 Տարի	**138 722.5 Եվրո**
		Ընդամենը 1 և 2 Տարիներ	**177 870 Եվրո**
		Նպատակ 3	Հզորացնել Ազգային առողջապահական տեղեկատվական համակարգը և ազգային առողջապահական տեղեկատվական համակարգում ներդնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ, ՏԲ և մալարիա ծրագրերի տեղեկատվական համակարգերը
		Նկարագրությունը	Վերանայել տվյալների աղբյուրները, տեղեկատվության ներկայիս հոսքը և մշակել առաջարկություններ նոր ինտեգրված համակարգի համար, մշակել ազգային ցուցանիշներ և տվյալների հաշվետվական ձևեր, մշակել և նորացնել տվյալների հավաքագրման ու կառավարման ծեռնարկները, գործիքները և ձևերը, հարմարեցնել Միջազգայնորեն ընդունված հիվանդությունների դասակարգումը, նորացնել առողջապահական վիճակագրությանը վերաբերվող օրենսդրությունը, հզորացնել առողջապահական տեղեկատվության կենտրոնական եւ մարզային կարողությունները:
		Եռամսյակ II	2 960 Եվրո
		Եռամսյակ III	17 305 Եվրո
		Եռամսյակ IV	6 410 Եվրո
		Ընդհանուր 1 Տարի	**26 675 Եվրո**
		Եռամսյակ V	44 895 Եվրո
		Եռամսյակ VI	28 820 Եվրո
		Եռամսյակ VII	3 300 Եվրո
		Եռամսյակ VIII	19 780 Եվրո
		Ընդհանուր 2 Տարի	**96 795 Եվրո**
		Ընդամենը 1 և 2 Տարիներ	**123 470 Եվրո**
		Նպատակ 4	Մշակել և իրականացնել Արյան անվտանգության ազգային ռազմավարություն
		Նկարագրությունը	Մշակել և վերահսկել արյան անվտանգության ռազմավարության իրականացումը, մշակել ու բաժանել արյան չվճարվող դոնորությունը խրախուսող նյութեր, վերակառուցել արյան անվտանգության կենտրոնները, ապահովել արյան փոխներարկման կայանները բուժ. սարքավորումներով եւ համապատասխան ախտորոշիչ թեսթերի հավաքածուներով, կրթել աշխատիկցներին, հիմնել արկա արյան դոնորների միասնական գրանցամատյան:
		Եռամսյակ II	3 770 Եվրո
		Եռամսյակ III	8 770 Եվրո
		Եռամսյակ IV	445 215.7 Եվրո
		Ընդհանուր 1 Տարի	**457 755.7 Եվրո**
		Եռամսյակ V	19 243 Եվրո
		Եռամսյակ VI	96 045.5 Եվրո
		Եռամսյակ VII	9 575 Եվրո
		Եռամսյակ VIII	10 365 Եվրո

		Ընդհանուր 2 Տարի	135 228.5 Եվրո
		Ընդամենը 1 և 2 Տարիներ	592 984.2 Եվրո
		Նպատակ 5	Զարգացնել գերակայող հիվանդությունների համար դեղորայքի և պարագաների գնման ու մատակարարման ներուժը
		Նկարագրությունը	Վերանայել դեղորայքի գնման ներկայիս մեխանիզմները և մշակել մեխանիզմներ շահառուների միջև գնման և մատակարարման գործընթացը լավ համակարգելու նպատակով, մշակել բուժման ուղեցույցներին համապատասխան դեղորայքի նոր ցանկ, գրանցել դեղորայքը «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ում, մշակել բուժհաստատություններում դեղորայքի օգտագործման մոնիթորինգի համար ստանդարտ ձև, օգտագործել հավաքված տվյալները հետագա գնումները պլանավորելիս:
		Եռամսյակ II	2 720 Եվրո
		Եռամսյակ III	8 060 Եվրո
		Եռամսյակ IV	8 098 Եվրո
		Ընդհանուր 1 Տարի	**18 878 Եվրո**
		Եռամսյակ V	33 680 Եվրո
		Եռամսյակ VI	6003 Եվրո
		Եռամսյակ VII	1 430 Եվրո
		Եռամսյակ VIII	10 630 Եվրո
		Ընդհանուր 2 Տարի	**51 743 Եվրո**
		Ընդամենը 1 և 2 Տարիներ	**70 621 Եվրո**
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել (ներմուծել) հետևյալ ապրանքները ու ծառայությունները (տվյալ գործարքների շրջանակներում ակընկալվում է հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարումից ազատում). 1. Արյան փոխներարկման կայանների հզորացում (բժշկական սարքավորումներ, պահպանման ծախսեր, ախտորոշիչ թեստեր և այլն) – 517 966.2 Եվրո, որից ախտորոշիչ թեսթ հավաքածուների ներմուծման համար նախատեսվում է - 112 459.2 Եվրո (առաջին տարին – 46 330.6 Եվրո, երկրորդ տարին – 66 128.6 Եվրո): 2. Ռազմավարությունների և կրթական նյութերի մշակում, փորձարարական ծրագրի մշակում և փորձարկում – 169 100 Եվրո: 3. Դասընթացների կազմակերպում, հանդիպումներ, թարգմանություն, տեխնիկական աջակցություն – 293 370 Եվրո: 4. Հետազոտություններ, մոնիթորինգային այցեր – 69 570 Եվրո: 5. Համակարգիչների ձեռք բերում, պահպանման ծախսեր, գրենական պարագաներ – 9 180 Եվրո: 6. Տեղեկատվական նյութերի մշակում, տպագրություն, համակարգչային ծրագրի մշակում և ներդնում – 46 300 Եվրո:	
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր, որոնք ներառում են համակարգող խմբի աշխատավարձերը, հարկերը և այլ վճարները, համակարգող խմբի գրենական պիտույքներ, կապի և սուրհանդակային ծառայություններ, ադմինիստրատիվ պահպանման ծախսեր – 68 596.6 Եվրո:	

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Խ.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ»-ի, ՀՀ ԱՆ «Պրոֆեսոր Ռ.Օ.Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն»-ի, ՀՀ ԱՆ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն»-ի, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի և այլ կազմակերպությունների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության գնահատման վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամին, Հիմանդրամի տեղային գործակալին, ՀՀ առողջապահության նախարարությանը, ՀՀ ֆինանսների նախարարությանը, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ապրիլի 2010 թվականի N Մ - 281 - Ա
քաղ. Երևան

«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԱԲԱԹՈՒՄ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 11 ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԳԵՂԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 22-ի N 3/3.8-1/2309-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի 20-ի N 658-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 23-ի N 12236/3-4 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի ապրիլի 23-ի N 01/05/776-10 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող՝ 3439200 դրամ ընդհանուր արժողությամբ «Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թիվ 11 նախակրթարանի մասնակի վերանորոգում և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երիցվանք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09405726) 2010 թվականի մարտի 22-ին կնքված՝ N WVA/KAP ADP/CW-10/002 պայմանագրերում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնակի վերանորոգման և խաղահրապարակի կառուցման աշխատանքների իրականացում՝ 3439200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպությանը ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ   Տ. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Գրետեն Սերոնգ
29 ապրիլի, 2010թ

Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թիվ 11 նախակրթարանի մասնակի վերանորոգում և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցում

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԺՐ. 6/3

1	Ծրագրի նպատակը	Բարելավել երեխաների զարգացման նպաստող պայմանները՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թ. 11 նախակրթարանի մասնակի վերանորոգման և Գեղանուշ համայնքում մանկական խաղահրապարակի կառուցման միջոցով:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ազատել Ավելացված արժեքի հարկից՝ ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքների իրականացնող «Երիցվանք» ՍՊԸ-ին, համաձայն ՍՊԸ-ի հետ կնքված՝ WVA/KAP ADP/CW-10/002 պայմանագրի *(պատճենը կցվում է):*
3	Բարեգործը	Ծրագիրը ֆինանսավորվում է «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի գրասենյակի կողմից:
4	Ծրագիրը կատարողը	Ծրագրի անմիջական կազմակերպողը, իրականացնողը և պատվիրատուն հանդիսանում է Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը՝ այսուհետ Վորլդ Վիժն Հայաստան *(հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755):*
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բարաբաթում թաղամասի թ. 11 նախակրթարան և Գեղանուշ համայնք: Բնագավառը՝ սոցիալական:
6	Ծրագրի բյուջեն	Խաղահրապարակի կառուցման և նախակրթարանի մասնակի վերանորոգման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 3,439,200 ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Սյունիքի մարզի Կապանի քաղաքապետարանը և Գեղանուշ համայնքի գյուղապետարանը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	փետրվար, 2010 թ. – հունիս, 2010թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	(see table below)

Միջոցառումների նկարագրությունը	ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ
բաց մրցույթի կազմակերպում, շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուի ընտրություն	փետրվար-մարտ, 2010թ.	չի պահանջվում
Կապալառու կազմակերպության հետ պայմանագրի կնքում՝	մարտ, 2010թ.	չի պահանջվում
Կապանի (Բարաբաթում թաղամասի) թ.11 նախակրթարանի մասնակի վերանորոգում	ապրիլ-հունիս	1,738,412 ՀՀ դրամ
Գեղանուշ համայնքի խաղահրապարակի կառուցում	ապրիլ-մայիս	1,700,788 ՀՀ դրամ

<table>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Նախատեսված աշխատանքների մանրամասն նկարագիրը, ծավալները և գինը ներկայացված են կցված պայմանագրի նախահաշվի մեջ:

<table>
<tr><th>ծառայությունների նկարագրությունը</th><th>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ ՀՀ դրամ</th></tr>
<tr><td>թ.11 նախակրթարանի ապամոնտաժման աշխատանքներ և խոհանոցի վերանորոգում</td><td>1,461,764</td></tr>
<tr><td>թ.11 նախակրթարանի պահեստամասի վերանորոգում</td><td>226,015</td></tr>
<tr><td>թ.11 նախակրթարանում չնախատեսված աշխատանքներ</td><td>50,633</td></tr>
<tr><td>խաղահրապարակի հողային աշխատանքներ և խճի նախապատրաստական շերտ</td><td>209,850</td></tr>
<tr><td>խաղահրապարակի երկաթբետոնե կոնստրուկցիաներ և բետոնապատման աշխատանքներ</td><td>1,141,500</td></tr>
<tr><td>խաղահրապարակի մոնտաժման աշխատանքները</td><td>299,900</td></tr>
<tr><td>խաղահրապարակի չնախատեսված աշխատանքներ</td><td>49,538</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ</td><td>Վորլդ Վիժն Հայաստանը այս ծրագիրն իրականացնելու է տեղական իշխանության /համայնքի ղեկավարի/, մանկապարտեզի տնօրինության և համայնքի բնակիչների հետ համագործակցությամբ: Համայնքը կաջակցի կապալառու կազմակերպությանը շինանյութերի պահեստի տրամադրմամբ և հնարավոր չնախատեսված աշխատանքների իրականացման գործում:
Վորլդ Վիժն Հայաստանը կկատարի վերանորոգման ընթացքի կանոնավոր մոնիտորինգ: Գեղանուշ համայնքի ղեկավարի և Բարաբաթումի մանկապարտեզի տնօրենի հետ կկնքվեն գրավոր համաձայնագրեր, որտեղ կորոշվեն ծրագրի իրականացման հետ կապված կողմերի ներդրումները և պարտավորությունները ծրագրի ավարտից հետո:</td></tr>
<tr><td>13</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Իրականացման ընթացքի վերահսկողությունը կիրականացվի համայնքի ղեկավարի, մանկապարտեզի տնօրինության և Կապանի Տարածքային Զարգացման ծրագրի (Կապանի ՏԶԾ) շրջանակներում ստեղծված Համայնքային Ակտիվ Խմբի կողմից: Կանոնավոր մոնիտորինգ կիրականացվի նաև Վորլդ Վիժն Հայաստանի տեխնիկական պատասխանատու անձանց կողմից: Ծրագրի ընթացքը կներկայացվի Կապանի ՏԶԾ-ի ծրագրային հաշվետվություններում: Աշխատանքների համար վճարումը կկատարվի փաստացի կատարած աշխատանքի դիմաց՝ համաձայն կատարողական ակտերի՝ բոլոր շահագրգիռ կողմերի ստորագրությամբ:
Վորլդ Վիժն Ինթերնեշնլ ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:
Հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:</td></tr>
</table>

Ձ.6/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 ապրիլի 2010 թվականի N Մ - 280 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ԵՎ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 29-ի N3./3.8-2/2556-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 27-ի N12693/3-6 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «678224000 դրամ» բառերի փոխարեն կարդալ «6291984000 դրամ»բառերը

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված բարեգործական բեռը (15 տեղ, 4091 կգ քաշով, 363031.48 ԱՄՆ-ի դոլար արժեքով, որից փոխադրման ծախսը կազմում է 7370 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության

Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բեռի ցանկը կցվում է):

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Նիկոլ Դումանի 22, ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեծ Անիվ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01225738) 2010 թվականի մարտի 22-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոդողերի և պահեստամասերի տրամադրում՝ 1500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է՝
Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի Մասնաճյուղի
Տեսչության Լեռնյանի կողմից
26 ապրիլի, 2010թվ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ 2009 - 2016թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԿԵՑԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ» ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Բարեկեցիկ և հիգենիկ պայմաններ ստեղծել Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կենտրոնի շահառուների համար:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Ծրագրի շրջանակներում ակնկալում ենք օգտվել հարկային արտոնություններից:
3	Բարեգործը	Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն, ԱՄՆ, Նյու Ջերսի, Փարամուս, 31 Ուեսթ Սենտուրի Բոուդ:
4	Ծրագիրը կատարող	Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ ՀՎՀՀ 00032803, հասցե: Նիկոլ Դուման 22
5	Ծրագրի իրականացման վայրը, բնագավառը	ՀՀ, Երևան, Բաղրամյան 18 Ծրագիրը առնչվում է սոցիալական և կրթական բնագավառներին:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 6291984000 վեց միլիարդ երկու հարյուր ինսունմեկ միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար դրամ 7 տարվա կտրվածքով: Ծրագրի բյուջեն 01.01. 2009 -01.01.2010 թվականների համար կազմում է - 1472204000 մեկ միլիարդ չորս հարյուր յոթանասուներկու միլիոն երկու հարյուր չորս հազար դրամ: Ծրագրի բյուջեն0 01.01.2010-01.01.2011 թվականների համար կազմում է - 912880000 ինը հարյուր տասներկու միլիոն ութ հարյուր ութսուն հազար դրամ: Ծրագրի բյուջեն 01.01. 2011-01.010.2012 թվականների համար կազմում է 781380000 յոթ հարյուր ութսունմեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար դրամ: Ծրագրի բյուջեն 01.01.2012-01.01. 2013 թվականների համար կազմում է - 781380000 յոթ հարյուր ութսունմեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար դրամ: Ծրագրի բյուջեն 01.01.2013-01.01.2014 թվականների համար կազմում է - 781380000 յոթ հարյուր ութսունմեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար դրամ: Ծրագրի բյուջեն 01.01.2014 -01.01.2015 թվականների համար կազմում է - 781380000 յոթ հարյուր ութսունմեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար դրամ: Ծրագրի բյուջեն 01.01.2015 -01.01.2016 թվականների համար կազմում է - 781380000 յոթ հարյուր ութսունմեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Ծրագրի բարեգործություն ստացողներ են հանդիսանում՝ • անապահով ընտանիքները, թափառաշրջիկ երեխաները, զոհված կամ վիարավոր ազատամարտիկների ընտանիքների, հաշմանդամները, բազմազավակ ընտանիքները, միայնակ և կարիքավոր ծերերը, անապահով ընտանիքները, որոնք այցելում են ԱՀԱԸ-ի Հայաստանի մասնաճյուղի սոցիալական բաժին օգնություններ ստանալու, անապահով ընտանիքների երեխաները, որոնք հաճախում են տարբեր խմբակներ – լեզուների խմբակներ, համակարգչային խմբակներ, մաթեմատիկայի, հայոց լեզվի, նկարչության, թատերախմբի, երգչախմբի, տարբեր ձեռային աշխատանքների խմբակներ: • Հասարակական բարեգործական կազմակերպությունները, հիմնադրամները • Դպրոցները, մանկապարտեզները, մանկատները, ծերանոցները, հիվանդանոցները: Ընդհանուր թվով մոտ 15.000 շահառու:
8	Ծրագրի իրականացման ժամկետը	Ծրագրի սկիզբ - 01.01.2009 – 01.01.2016 Շինարարական աշխատանքների սկիզբ 01.01.2009թվ ավարտ՝ 31.12.2009 (I-ին փուլ) Շինարարական աշխատանքների սկիզբ 25.01.2010թվ ավարտ՝ 31.12.2010 (II-րդ փուլ)
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ստորև նշված ծրագրերը իրականացվելու են են 2009 - 2016 թվականներին Դրամական օգնության ծրագրեր երեխաների և միայնակ և կարիքավոր ծերերի համար՝ 1. Եռամսյակային դրամական օգնություն մոտ 2800 երեխաների: Ծրագրում ընդգրկված երեխաները եռամսյակը մեկ անգամ 50 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի օգնություն են ստանում: Երևան – 538 երեխա, Արարատ – 17 , Արևշատ – 21,Արմավիր – 11, Արտաշատ – 113, Սևան – 6, Վարդենիս– 13, Սպիտակ – 78, Նալբանդ - 27, Ստեփանավան – 85, Վանաձոր- 334, Գյումրի – 383, Մարալիկ – 46, Ամասիա - 19, Արթիկ – 45, Արագածավան – 31,Թալին – 65, Աշտարակ – 63,Գավառ– 20, Ապարան – 40, Արտենի - 14, Իջևան – 101,Դիլիջան – 31, Բերդ - 33, Նոյեմբերյան – 35, Սիսիան – 29,Կապան – 48, Եղեգնաձոր – 24, Գորիս – 48, Ալավերդի – 54, Օձուն - 11 Տաշիր – 48, Ստեփանակերտ –161, Շուշի – 66, Ազկերան – 48, Մարտունի – 36,Մարտակերտ – 20, Հադրութ – 20, Ախալքալակ - 18: Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է 184800000 հարյուր ութսունչորս միլիոն ութ հարյուր հազար դրամ: Տարվա կտրվածքով ծրագրում ընդգրկված երեխաները ստանում են կենցաղային, առողջապահական, կրթական ծախսերը հոգալու համար դրամական օժանդակություն: Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է 148000000 հարյուր քառասունութ միլիոն դրամ: 2. Եռամսյակային դրամական օժանդակություն 250 միայնակ կարիքավոր ծերերի - Երևան, Գյումրի, Վանաձոր, Թբիլիսի, Ալավերդի, Սպիտակ, Գորիս, Հրազդան, Թալին, Արագածոտն, Ստեփանավան, Տաշիր: Ծրագրում ընդգրկված ծերերը եռամսյակը մեկ անգամ 30ԱՄՆ դոլարին համարժեք դրամի օգնություն են ստանում: Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է 9900000 ինը միլիոն ինը հարյուր հազար դրամ: 3. Ամենամյա սննդային և կենցաղային պարագաների տրամադրում 135 կարիքավոր ծերերի - Գորիս, Իջևան, Տաշիր և Բերդ : Ծրագրում ընդգրկված ծերերը եռամսյակը մեկ անգամ 33 եվրոյին համարժեք դրամի սննդային և կենցաղային անհրաժեշտ պարագաների օգնություն են ստանում:

Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է 19125000 տասնինը միլիոն հարյուր քսանհինգ հազար դրամ:

4. 1997 թ. դեկտեմբերից Ստեփանավանում գործում է բարեգործական ճաշարան՝ 55 կարիքավոր մեծահասակների համար: Ճաշարանը գործում է տարեկան 6 ամիս (Դեկտեմբերից – մայիս), շաբաթական 6 օր:

Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է 6750000 վեց միլիոն յոթ հարյուր հիսուն հազար դրամ:

Առողջապահական ծրագրեր

- Դրամական օգնության ծրագրերում ընդգրկված երեխաները տարվա ընթացքում անցնում են բժշկական ստուգումներ, օգտվում են ատամնաբուժական ծառայություններից:

Վանաձորում գործում է մանկական բարեգործական անվճար բժշկական կենտրոն, արտեղ տարվա կտրվածքով անվճար սպասարկվում են շուրջ 1500 մարդ:
Նմանատիպ կենտրոն՝ Ֆրանսիայի «Հայ բժիշկների միության» (U.M.A.F.) համագործակցությամբ, ստեղծվեց նաեւ Սպիտակում, որտեղ անվճար սպասարկվում են շուրջ 3800 մարդ:
Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 21500000 քսանմեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ:

Կրթական ծրագրեր

- երեխաները անհատույց հաճախում են ՀԱԸ-ի Բարեսիրական կենտրոնները, որտեղ անվճար գործում են տարբեր խմբակներ՝ երգչախումբ, թատերախումբ, խեցեգործության, նկարչության, անգլերեն, հայերեն լեզուների, մաթեմատիկայի, համակարգչային դասընթացներ, Ձեռքի աշխատանքի, սպորտային խմբակներ:
- Թալինում և Վանաձորում գործում են մանկապարտեզներ

Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 3.550.000 երեք միլիոն հինգ հարյուր հիսուն հազար դրամ:

- Տարին մեկ անգամ իրականացվում է ԲՈՒՀ սովորող երեխաների ուսման վարձերի դրամական օգնության ծրագիրը: Ծրագրում ընդգրկվում են անապահով և առաջադեմ ուսանողներ և ՀԱԸ-ն վճարում է ծրագրով հաստատված ուսանողների վարձի որոշ մասը:

Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 3.500.000 երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ:

Գործում է նաև " Մասնագիտական ուսուցման" ծրագիրը:
Դրամական աջակցություն 18 – 30 տարեկան գործազուրկ և կարիքավոր երիտասարդներին ձեռք բերելու Հայաստանում պահանջարկ ունեցող մասնագիտություն, որը նրանց կապահովի աշխատանքով: Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 10,000,000 տաս միլիոն դրամ:

Մանկապարտեզներ
Թալինում և Վանաձորում գործում են ԱՀԱԸ-ին պատկանող 2 մանկապարտեզներ , որտեղ անվճար հաճախում են մոտ 100 երեխա:
Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 13,125,000 տասերեք միլիոն հարյուր քսանհինգհազար դրամ:

Նոր տարվա և Սուրբ Ծնունդի միջոցառումների կազմակերպում
Ամեն տարի, Նոր տարվա եւ Սուրբ Ծնունդի առիթով, ՀՀ տարբեր շրջաններում, գյուղերում, Լ[illegible] շրջաններում ու գյուղերում, տեղական իշխանությունների համաձայնությամբ եւ համագործակցությամբ [illegible] ընտանիքների ավելի քան տասնյակ հազարավոր երեխաների համար կազմակերպվում են տոնական հանդեսներ, որտեղ Պապի, Ձյունանուշի, թատերական կոլեկտիվների, երաժշտախմբերի մասնակցությամբ: Երեխաներին բաժանվում են նվերներ: Քաղցրավենիքների ձեռքբերում – 3930000 (երեք միլիոն ինը հարյուր երեսուն հազար) դրամ առանց ԱԱՀ-ի:

Հյուրասիրությունների կազմակերպում - մոտ 2850000 երկու միլիոն ութ հարյուր հիսուն հազար դրամ առանց ԱԱՀ-ի:
Տարբեր նյութերի ձեռքբերում միջոցառման կազմակերպման համար (Տոնածառեր, խաղալիքներ, դեկորատիվ ապրանքներ և այլն) – մոտ 950000 (ինը հարյուր հիսուն հազար) դրամ:
թատրոնների կամ այլ սրահների վարձակալություններ – 2500000 երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ:
Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 10230000 տաս միլիոն երկու հարյուր երեսուն հազար դրամ:

Ճամբարների կազմակերպում
Ամեն տարի երեխաները ընդգրկվում են ՀԱԸ-ի կողմից կազմակերպված բակային և Հանքավանի " Շողիկ" և Շուշիի " Պետրոսյանների անվան ճամբարում":
Երեխաները օրական 4 անգամ բարձրորակ սնունդ են ստանում, ներգրավվում են տարբեր միջոցառումներում, խաղերում, ձեռային աշխատանքների խմբակներում:
Տարեկան մոտ 8000 երեխաներ հանգստանում են ՀԱԸ-ի կազմակերպած Բակային և Մեծ ճամբարներում

- Մեծ ճամբար

Սնունդ - մոտ 22500000 (քսաներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ :
տրանսպորտ - 5400000 (հինգ միլիոն չորս հարյուր հազար) դրամ :
Բակային ճամբարներ
Երեխաների համար հյուրասիրությունների կազմակերպման համար սնունդի ձեռքբերում – մոտ 5000000 հինգ միլիոն դրամ:
Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 32900000 (երեսուներկու միլիոն ինը հարյուր հազար) դրամ:

Մանկական սնունդի ծրագիր
1992 թ-ից ՀԱԸ-ն համագործակցում է «Հայ մանուկներին՝ կաթ» հիմնադրամի (ԱՄՆ) հետ, որի միջոցով մինչեւ մեկ տարեկան հարյուրավոր երեխաներ անվճար ստանում են ԻԶՈՄԻԼ և Սիմիլակ կերակրատեսակները :
Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 88000000 (ութսունութ միլիոն) դրամ:

Հագուստի, սննդի, գրենական պիտույքների, հիգիենայի պարագաների և այլ ապրանքների ներմուծում, և անհատույց տրամադրում անապահովներին
ՀԱԸ-ի Սոցիալական բաժինների միջոցով անապահովներին բաժանվում է սնունդ, հագուստ, հիգիենայի պարագաներ, գրենական պիտույքներ, դեղակներ և այ տարբեր ապրանքներ :
Ծրագրի բյուջեն տարվա կտրվածքով կազմում է մոտ 198000000 (հարյուր ինսուն ութ միլիոն) դրամ:

Բարեկեցիկ և հիգիենիկ պայմանների ստեղծում կենտրոն հաճախող անձանց համար

- Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի Գլխամասային գրասենյակի, Բարեսիրական Կենտրոնի Հիմնանորոգման աշխատանքները (Գլխավոր և 2 մասնաշենքեր), Ձեռուցման, Օդափոխման համակարգերի մոնտաժման, էլեկտրոմոնտաժման, Ջրագծերի և կոյուղագծերի անցկացման աշխատանքներ ըստ աշխատանքների կատարման պայմանագիր առ 01 Ապրիլի 2008թվ Հորիզոն 95 շինարարական ընկերության հետ- ՀՎՀՀ 00801721 - 678224000 վեց հարյուր յոթանասունութ միլիոն երկու հարյուր քսանչորս հազար դրամ առանց ԱԱՀ-ի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ): Շինարարությունը ավարտվել է 2009 թվականին:
- Բաղրամյան 18 հասցեում գտնվող Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի Բարեսիրական Կենտրոնի գլխավոր մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ - 121600000 հարյուր քսանմեկ միլիոն վեց հարյուր հազար դրամ առանց ԱԱՀ-ի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ):
- Ավտոմեքենաների ներմուծում – 22500000 քսաներկու միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով: (2008 թվականի ընթացքում ներմուծվել է մոտ 12600000 դրամի չափով, մոտ 9900000 դրամի կներմուծվի 2010-2011 թվականների ընթացքում) :

		• Կահույքի , գրասենյակային պարագաների, սարքավորումների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերում, հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծառայություններ և դրանց նորոգման համար անհրաժեշտ մասերի ձեռքբերում մեկ տարվա կտրվածքով - մոտ 5.000.000 հինգ միլիոն դրամի չափով: (ակնկալում ենք հարկային արտոնություններ) - Անիվների և ավտոպահեստամասերի ձեռքբերում ըստ «Մեծ անիվ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝01224192)հետ 22.03.2010 թվականին կնքված պայմանագրի 1500.000 մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով առանց ԱԱՀ-ի : • Միջոցառումների կազմակերպման համար սրահների, դահլիճների վարձակալում, մաքսային պահեստների վարձավճարներ մեկ տարվա կտրվածքով – մոտ 2500000 երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ) • էլեկտրոէներգիա - մոտ 9000000 ինը միլիոն դրամ մեկ տարվա կտրվածքով (ակնկալում ենք հարկային արտոնություններ) • « Հայռուսգազարդ» ՓԲԸ Լոռու ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Վանաձոր, Տարոն 3 , ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N Ա -0411779 պայմանագիր, « Հայռուսգազարդ» ՓԲԸ Լոռու ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Վանաձոր, Չուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ՝ 00046317) 2007 թվականի հուլիսի 07-ին կնքված N Ա -0445266 պայմանագիր, «Հայռուսգազարդ» ՓԲԸ Երևանի ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Երևան, Չարենցի 141ա , ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի հունվարի 10-ին կնքված N Ա -012.01.08.1200 պայմանագիր, «Հայռուսգազարդ» ՓԲԸ Գյումրու ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Գյումրի , ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N 02104061468 պայմանագիր - 6000000 վեց միլիոն դրամ մեկ տարվա կտրվածքով: (ակնկալում ենք հարկային արտոնություններ) • Ջուր - 2000000 երկու միլիոն դրամ մեկ տարվա կտրվածքով : (ակնկալում ենք հարկային արտոնություններ) • Հեռախոսավարձ - 7500000 յոթ միլիոն հինգ հարյուր հազար դրամ մեկ տարվա կտրվածքով: (ակնկալում ենք հարկային արտոնություններ)
10	Ձեռք բերվող ներմուծվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	<u>Բարեկեցիկ և հիգիենիկ պայմանների ստեղծում կենտրոն հաճախող անձանց համար</u> 1. Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի Գլխամասային գրասենյակի, Բարեսիրական Կենտրոնի Հիմնանորոգման աշխատանքները (Գլխավոր և 2 մասնաշենքեր), Ջեռուցման, Օդափոխման համակարգերի մոնտաժման, էլեկտրոմոնտաժման, Ջրագծերի և կոյուղագծերի անցկացման աշխատանքներ ըստ աշխատանքների կատարման պայմանագիր առ 01 Ապրիլի 2008թվ Հորիզոն 95 շինարարական ընկերության հետ- ՀՎՀՀ 00801721 - 678224000 վեց հարյուր յոթանասունութ միլիոն երկու հարյուր քսանչորս հազար դրամ առանց ԱԱՀ-ի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ): - Կատարված է 2. Բաղրամյան 18 հասցեում գտնվող Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի Բարեսիրական Կենտրոնի գլխավոր մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ - 121600000 հարյուր քսանմեկ միլիոն վեց հարյուր հազար դրամ առանց ԱԱՀ-ի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ): - հաշվարկված է 7 տարվա կտրվածքով 3. Ավտոմեքենաների ներմուծում – 22500000 քսաներկու հազար հինգ հարյուր հազար դրամի չափով հաշվարկված է 7 տարվա կտրվածքով 4. Կահույքի , գրասենյակային պարագաների, սարքավորումների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերում, հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծառայություններ և դրանց նորոգման համար անհրաժեշտ մասերի ձեռքբերում մեկ տարվա կտրվածքով - մոտ 5.000.000 հինգ միլիոն դրամի չափով: (ակնկալում ենք հարկային արտոնություններ) • Անիվների և ավտոպահեստամասերի ձեռքբերում ըստ «Մեծ անիվ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝01224192)հետ 22.03.2010

		թվականին կնքված պայմանագրի 1.500.000 մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով առանց ԱԱՀ-ի : 5. Միջոցառումների կազմակերպման համար սրահների, դահլիճների վարձակալում, մաքսային պահեստների վարձավճարներ մեկ տարվա կտրվածքով – մոտ 2500000 երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ) 6. էլեկտրոէներգիա - մոտ 9000000 ինը միլիոն դրամ մեկ տարվա կտրվածքով (ակնկալում ենք հարկային արտոնություններ) 7. « Հայռուսգազարդ» ՓԲԸ Լոռու ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Վանաձոր, Տարոն 3 , ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N Ա -0411779 պայմանագիր, « Հայռուսգազարդ» ՓԲԸ Լոռու ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Վանաձոր, Չուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ՝ 00046317) 2007 թվականի հուլիսի 07-ին կնքված N Ա -0445266 պայմանագիր, «Հայռուսգազարդ» ՓԲԸ Երևանի ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Երևան, Չարենցի 141ա , ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի հունվարի 10-ին կնքված N Ա -012.01.08.1200 պայմանագիր, «Հայռուսգազարդ» ՓԲԸ Գյումրու ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Գյումրի , ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N 02104061468 պայմանագիր - 6000000 վեց միլիոն դրամ մեկ տարվա կտրվածքով: (ակնկալում ենք հարկային արտոնություններ) 8. Ջուր - 2000000 երկու միլիոն դրամ մեկ տարվա կտրվածքով : (ակնկալում ենք հարկային արտոնություններ) 9. Հեռախոսավարձ - 7500000 յոթ միլիոն հինգ հարյուր հազար դրամ մեկ տարվա կտրվածքով: (ակնկալում ենք հարկային արտոնություններ) 10. Բեռների Ներմուծումներ - 198000000 (հարյուր ինսուն ութ միլիոն) դրամի և: Այդ թվում՝ 15 տեղ, 4091 կգ քաշով, 363031.48 ԱՄՆ դոլար արժեքով, որից 7370 ԱՄՆ դոլար ճանապարհածախս բեռի ներմուծում : Ներմուծումները շարունակական են :
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսերը կազմում են ծրագրի բյուջեի 20 % - ի չափով: 11. Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի Գլխամասային գրասենյակի, Բարեսիրական Կենտրոնի Հիմնանորոգման աշխատանքները (Գլխավոր և 2 մասնաշենքեր), Ջեռուցման, Օդափոխման համակարգերի մոնտաժման, էլեկտրոմոնտաժման, Ջրագծերի և կոյուղագծերի անցկացման աշխատանքներ ըստ աշխատանքների կատարման պայմանագիր առ 01 Ապրիլի 2008թվ Հորիզոն 95 շինարարական ընկերության հետ- ՀՎՀՀ 00801721 - 678224000 վեց հարյուր յոթանասունութ միլիոն երկու հարյուր քսանչորս հազար դրամ առանց ԱԱՀ-ի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ): Ավարտված է 12. Ավտոմեքենաների ներմուծում – 22500000 քսաներկու միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով- հաշվարկված է 7 տարվա կտրվածքով 13. Բաղրամյան 18 հասցեում գտնվող Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի Բարեսիրական Կենտրոնի գլխավոր մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ- 121600000 հարյուր քսանմեկ միլիոն վեց հարյուր հազար դրամ առանց ԱԱՀ-ի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ)- հաշվարկված է 7 տարվա կտրվածքով 14. Կահույքի , գրասենյակային պարագաների, սարքավորումների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերում, հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծառայություններ և դրանց նորոգման համար անհրաժեշտ մասերի ձեռքբերում 1 տարվա կտրվածքով - մոտ 5.000.000 հինգ միլիոն դրամի չափով: (ակնկալում ենք հարկային արտոնություններ) - Անիվների և ավտոպահեստամասերի ձեռքբերում ըստ «Մեծ անիվ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝01224192)հետ 22.03.2010 թվականին կնքված պայմանագրի 1500.000 մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամի չափով առանց ԱԱՀ-ի : 15. Միջոցառումների կազմակերպման համար սրահների, դահլիճների վարձակալում, մաքսային պահեստների

		վարձավճարներ 1 տարվա կտրվածքով – մոտ 2500000 երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ) 16. Էլեկտրոէներգիա 1 տարվա կտրվածքով - մոտ 9000000 ինը միլիոն դրամ : ակնկալում ենք հարկային արտոնություններ 17. « Հայռուսգազարդ» ՓԲԸ Լոռու ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Վանաձոր, Տարոն 3 , ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N Ա -0411779 պայմանագիր, « Հայռուսգազարդ» ՓԲԸ Լոռու ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Վանաձոր, Զոփաչյան 2/2ա, ՀՎՀՀ՝ 00046317) 2007 թվականի հուլիսի 07-ին կնքված N Ա -0445266 պայմանագիր, «Հայռուսգազարդ» ՓԲԸ Երևանի ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Երևան, Չարենցի 141ա , ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի հունվարի 10-ին կնքված N Ա -012.01.08.1200 պայմանագիր, «Հայռուսգազարդ» ՓԲԸ Գյումրու ԳԳՄ –ի հետ (ՀՀ, քաղաք Գյումրի , ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N 02104061468 պայմանագիր 1 տարվա կտրվածքով- մոտ 6000000 վեց միլիոն դրամ: (ակնկալում ենք հարկային արտոնություններ) 18. Ջուր 1 տարվա կտրվածքով - մոտ 2000000 երկու միլիոն դրամ: (ակնկալում ենք հարկային արտոնություններ) 19. Հեռախոսավարձ 1 տարվա կտրվածքով - մոտ 7500000 յոթ միլիոն հինգ հարյուր հազար դրամ: (ակնկալում ենք հարկային արտոնություններ)
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցությունը նախատեսվում է • ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունն իրականացվում է Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Մայր գրասենյակի կողմից, ՀԱԸ-ի դոնորներին և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով և ներկայացվում համապատասխան հաշվետվություններ:

1/9.07

ԱՄ 0/5.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2010 թվականի N Մ - 279 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-807-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 28-ի N 3/3.8-2/2499-10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի ապրիլի 27-ի N 02/07.2/3240-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 28-ի N 12833/3-6 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից ձեռք բերված լաբորատոր նյութերն ու թեսթերը (մեկ տեղ, 3.17 կգ ընդհանուր քաշով, 740 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 310 ԱՄՆ-ի դոլար փոխադրման և այլ ծախսերը ու մեկ տեղ, 2.2 կգ ընդհանուր քաշով, 565 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 150 ԱՄՆ-ի դոլար փոխադրման և այլ ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվել են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 20-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2010 թվականի ընթացքում երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցություն» ծրագրի մասին» N Մ-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում և անհատույց հանձնվելու է Հայաստանի Հանրապետության գիտությունների Ազգային ակադեմիայի «Կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2010 թվականի N Մ - 278 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-851-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ Մ Ա Ս Ի Ն

(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 22-ի N 3/3.8-1/2308-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 23-ի N 12242/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ձեյթուն - բարեկարգում» ծրագրի մասին» N Մ-851-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում «ասֆալտապատում» բառը փոխարինել «բետոնապատում» բառով:

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00057312) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միկա-ցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03012933) 2010 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N 41 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 100 տոննա ցեմենտի մատակարարում՝ 4500000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՐ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ապրիլի 2010 թվականի N Մ - 277 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-40-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 28-ի N3/3.8-2/2473-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 28-ի N12836/3-6 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 12-ի «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ռուսական ուղղափառ եկեղեցու կաթողիկե տաճարի կառուցման» ծրագրի մասին» N Մ-40-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի նախավերջի պարբերության «77515750 դրամ» բառերը փոխարինել «79529075.78 դրամ» և վերջի պարբերության «75000000 դրամ» բառերը՝ «72986675 դրամ» բառերով.

2) ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետը:

2. Սահմանել, որ «Միկմետալ» ՓԲԸ-ի պատվերով Ուկրաինայից «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված ամրաններն և ամրալարերը (99 տեղ, 322700 կգ ընդհանուր քաշով, 79529075.78 դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 13062896 դրամ փոխադրման և այլ ծախսեր, «Սյունիքի» ՏՄ) ներմուծվել են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2010 թվականի N Մ -276- Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N N Մ-489-Ա, Մ-490-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («ՓԱՐՈՍ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 13-ի N 3/3.8-2/2009-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի ապրիլի 12-ի N Ե2010-3363 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 ապրիլի 26-ի N 12464/3-6, եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«ՀՀ Լոռու մարզի Ամրակից համայնքի մանկապարտեզի համար խաղահրապարակի ձեռքբերում» ծրագրով նախատեսված են ստորև նշված միջոցառումները՝ Ամրակից համայնքի մանկապարտեզի համար խաղահրապարակի տեղադրում և հանձնում մանկապարտեզին և Տեղական Ինքնակառավարման Մարմիններին: *Ժամկետը*՝ 2010 թվականի մարտ – ապրիլ *Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը*՝ 1. Ամրակից համայնքի մանկապարտեզի խաղահրապարակի ձեռքբերում Ընդամենը՝ 850.000 ՀՀ դրամ
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրով նախատեսված է ձեռք բերել հետևյալ խաղասարքերը՝ *Խաղասարքի անվանումը* — *Քանակը* — *Գինը* 1. Փոքր Տարզան խաղասարք — 1 — 300 000 2. Շղթաներով փոքր ճոճանակ — 1 — 140 000 3. Զսպանակներով ճոճանակ (2 տեղ) — 1 — 133 000

		4. Ճոճանակ (2 տեղ) 1 45 000 5. Տաղավար 1 232 000 Ընդամենը 850.000 ՀՀ դրամ Նշված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով "Վորլդ Վիժն Ինթերնեշնլ" ՄԲԿ Հայաստանյան Մասնաճյուղը բաց մրցույթի արդյունքում ընտրել է "Մագնոն" ՍՊԸ-ին՝ որպես մատակարար և կնքել է պայմանագիր նրա հետ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» մբկ հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Լոռու մարզի Ամրակից համայնքի Տեղական Ինքնակառավարման Մարմինների և մանկապարտեզի տնօրինության հետ: Ծրագրով նախատեսված է նաև խաղահրապարակները հանձնել Ամրակից համայնքի Տեղական Ինքնակառավարման Մարմիններին: Խաղահրապարակի մատակարարումը և տեղադրման աշխատանքները իրականցվելու են «Մագնոն» ՍՊԸ-ի միջոցով, որը ընտրվել է բաց մրցույթի արդյունքում:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագիրը ենթակա է բազմակողմանի շարունակական վերահսկողության: Վերահսկողության սկզբնական օղակ են հանդիսանում Լոռու մարզի Ամրակից համայնքի Տեղական Ինքնակառավարման Մարմինները, որոնք տեղում հետևելու են ծրագրի իրականացմանը: Անմիջական վարչական և ծրագրային վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» մբկ հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» մբկ հայաստանյան մասնաճյուղը իր գործունեությունը վերահսկվում է միջազգային աուդիտի և ՀՀ Հարկային մարմինների կողմից:

Քրիստինե Միխաիլիդի

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ, Հայաստանյան մասնաճյուղի,
Տարածքային զարգացման ծրագրերի գործառնությունների ղեկավար

6/8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 ապրիլի 2010 թվականի N Մ - 266 - Ա
քաղ. Երևան

«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐԻ «ՏԱՐՈՆ - 3» ԹԱՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՋԵՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 22-ի N 3/3.8-1/2343-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի 20-ի N 657-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 23-ի N 12239/3-4 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2010 թվականի ապրիլի 27-ի N 108.3.4/280-10 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 2000000 դրամ ընդհանուր արժեքով «Վանաձորի «Տարոն - 3» թաղամասի համայնքային կենտրոնի ջեռուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Եվրոթերմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02541434) 2010 թվականի ապրիլի 8-ին կնքված՝ N 3Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման սարքավորումների և նյութերի ձեռքբերում՝ 1000000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱՌԴԱ կոնստրակշն, թրեյդ ընդ թեքնոլոջի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2010 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ N Պ-15/04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի մոնտաժում՝ 1000000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Վանաձորի քաղաքապետին:

ՆԱԽԱՐԱՐ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից
2010 թվականի մարտի 13-ին

Գործադիր տնօրեն Հ. Ստեփանյան

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
«Վանաձորի «Տարոն-3» թաղամասի համայնքային կենտրոնի ջեռուցում»

6/8

1. Ծրագրի նպատակը	Վանաձորի «Տարոն-3» թաղամասի բանակիչների համար կյանքի ավելի հարմար պայմանների ստեղծում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Հարկային արտոնությունների տրամադրում:
3.Բարեգործը	ԱՄՆ-ի «Հայ ավետարանի առաքելություն» շահույթ չհետապնդող կազմակերպություն:
4. Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ, Երևան, Պարույր Սևակի փող. 9, ՀՎՀՀ՝ 00057312:
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր: Սոցիալական:
6. Ծրագրի բյուջեն	2 000 000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
7. Բարեգործություն ստացողը	Վանաձորի քաղաքապետարան:
8.Ծրագրի իրականացման տևողությունը	Մայիս 2010 թ. - հուլիս 2010 թվական:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական ֆինանսական միջոցների ծավալը	Ջեռուցման և տաք ջրի համակարգերի մոնտաժում - 2 000 000 դրամ:
10.Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագրագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Ջեռուցման և տաք ջրի սարքավորումներ, նյութեր - 1 000 000 դրամ մոնտաժային աշխատանքներ – 1 000 000 դրամ
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր	Ծրագրի համար կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: Ծրագիրն իրականացվելու է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի սահմաններում:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ	ՀՀ ԿԲԾՀՀ, Վանաձորի քաղաքապետարան:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ ԿԲԾՀՀ ներկայացվող հաշվետվությունների և «ԱՌԴԱ» բ/հ հոգաբարձուների խորհրդի անդամների պարբերական այցելությունների միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 ապրիլի 2010 թվականի N Մ -265-Ա
քաղ. Երևան

«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ N 99 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԽՈՀԱՆՈՑԻ ՆՈՐՈԳՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 9-ի N 3/3.8-1/1839-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի 12-ի N 472-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 9-ի N 10561/3-4 և Երևանի քաղաքապետարանի 2010 թվականի ապրիլի 8-ի N 02/34-6785h եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 2320000 դրամ ընդհանուր արժեքով «Երևանի N 99 մանկապարտեզի խոհանոցի նորոգման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՌԴԱ կոնստրակշն, թրեյդ ընդ թեքնոլոջի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2010 թվականի մարտի 30-ին կնքված՝ N Պ-30/03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նորոգման աշխատանքների իրականացում՝ 2320000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից
2010 թվականի մարտի 6-ին

Գործադիր տնօրեն Հ. Ստեփանյան

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
Երևանի թիվ 99 մանկապարտեզի խոհանոցի նորոգման մասին

1. Ծրագրի նպատակը	Երևանի թիվ 99 մանկապարտեզի 130 սաների կենցաղային պայմանների բարելավում: Մանկապարտեզի խոհանոցի հիմնանորոգում:
2. Ծրագրի բարեգործական բրակման նպատակները	Հարկային և մաքսային արտոնությունների տրամադրում:
3. Բարեգործը	Ամերիկյան «Հայ ավետարանի առաքելություն» ոչառևտրային կազմակերպություն, ԱՄՆ, ք. Փասադենա:
4. Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ, Երևան, Պարույր Սևակի փող. 9, ՀՎՀՀ՝ 00057312:
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք Երևան, Նոր Նորքի վարչական շրջան: Սոցիալ-կրթական ոլորտ:
6. Ծրագրի բյուջեն	2 320 000 դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Երևանի քաղաքապետարան:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	ապրիլ - հունիս 2010 թ.:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մանկապարտեզի խոհանոցի հիմնանորոգում, ապրիլ - հունիս 2010 թվական, 2 320 000 դրամ:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Շինարարական աշխատանքներ և նյութեր – 2 320 000 դրամ,
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր	Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր չեն նախատեսում, ծրագիրն իրականացվում է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի սահմանում:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ	ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, Երևանի քաղաքապետարան:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ ԿԲԾ-ն ներկայացվող հաշվետվությունների և «ԱՌԴԱ» բ/հ հոգաբարձուների խորհրդի անդամների պարբերական այցելությունների միջոցով:

6/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2010 թվականի N Մ264 Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԶԱՆԳԵԶՈՒՐ» ՍՐՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ 2-ՐԴ ՓՈՒԼ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 14-ի N 3/3.8-2050-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի 12-ի N473-10, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2010 թվականի ապրիլի 13-ի N01/142/1132-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 16-ի N11409/3-4 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի ապրիլի 13-ի N01/661-10 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 122270000 դրամ ընդհանուր արժողությամբ՝ «Զանգեզուր» սրտաբանական կենտրոնի կառուցում 2-րդ փուլ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Կարալանս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03308605) 2010 թվականի մարտի 1-ին կնքված N ՀՀ/ԳՀ-01/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնի կառուցման 2-րդ փուլի շինարարական աշխատանքների իրականացում՝ 120350000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նորաշեն» ՆՏԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01203702) 2010 թվականի մարտի 1-ին կնքված N ՀՀ-05/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնի կառուցման 2-րդ փուլի հեղինակային հսկողության իրականացում՝ 720000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի Հանրապետության նախագծերի Պետական Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2010 թվականի մարտի 1-ին կնքված N ՀՀՏՀ-05/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնի կառուցման 2-րդ փուլի տեխնիկական հսկողության իրականացում՝ 1200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

« 01» ապրիլի 2010.թ.

«Զանգեզուր» սրտաբանական կենտրոնի կառուցում»
II փուլ
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Կառուցել «Հայ-Ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» ՀԿ-ի Սյունիքի մարզի «Զանգեզուր» տարածաշրջանային սրտաբանական կենտրոնը
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Սյունիքի մարզ, առողջապահության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 122.270.000,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	«Հայ-Ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» ՀԿ-ի Սյունիքի մարզի «Զանգեզուր» տարածաշրջանային սրտաբանական կենտրոնը և ՀՀ, ԼՂՀ ազգաբնակչությունը
7.	Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2010թ մարտի 01 -ից մինչեւ 2010թ. դեկտեմբերի 01-ը:

8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Կարալանս» ՍՊԸ-ի կողմից կառուցման աշխատանքներ՝ 120.350.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: «Նորաշեն» ՆԿՏ-ի կողմից հեղինակային հսկողություն՝ 720.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: «Հայաստանի Հանրապետության նախագծերի Պետական Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից տեխնիկկան հսկողություն՝ 1.200.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Առողջապահության նախարարության և Սյունիքի մարզպետարանի հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2010 թվականի N Ս 263-Ս
քաղ. Երևան

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 9-ի N 3/3.8-1/1846-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 398-10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի ապրիլի 10-ի N 01/07.2/2415-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 9-ի N 10560/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Բարեգործական որակել Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) իրականացվող՝ 35 մլն դրամ ընդհանուր արժեքով «Աջակցություն Հայաստանի Հանրապետության միջնակարգ դպրոցներին և աշակերտներին» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային
Հիմնադրամի նախագահ Հ. Մաթևոսյանի կողմից
«15» ապրիլի 2010թ.

Աջակցություն Հայաստանի Հանրապետության միջնակարգ դպրոցներին և աշակերտներին

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի անմիջական նպատակն է՝ աջակցություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետության սահմանամերձ, հեռավոր, ինչպես նաև փախստականներով բնակեցված գյուղերի միջնակարգ դպրոցներին և դրանց աշակերտներին, կանխելով բնակչության արտահոսքը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի բարեգործական որակման նպատակն է աջակցություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետության սահմանամերձ, հեռավոր, ինչպես նաև փախստականներով բնակեցված գյուղերի միջնակարգ դպրոցներին և դրանց աշակերտներին:
3.	Բարեգործը	Նշված ծրագրի բարեգործն է Ծոմ Հայաստանի Համար Կոմիտեն (**Fast For Armenia Expense Account, P.O. Box 655, Menlo Park, CA 94026, Phone 1-650-326-6634, Fax 1-650-926-5368**), որը հատկացնելու է դրամական միջոցներ, նյութեր և սարքավորումներ՝ տրամադրված Ամերիկայի հայ ճարտարագետների և գիտնականների ընկերության (**AESA – Armenian Engineers and Scientists of America**), ԱՄՆ–ի Ստանֆորդի, Հարվարդի և այլ համալսարանների հայ ուսանողների միությունների կողմից:
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրը իրականացնում է Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ), քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող սահմանամերձ, հեռավոր, ինչպես նաև փախստականներով բնակեցված որոշ գյուղերի միջնակարգ դպրոցներում:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 35.000.000 (երեսունհինգ միլիոն) դրամ: Ֆինանսավորման աղբյուր է հանդիսանում Ծոմ Հայաստանի Համար Կոմիտեն (**Fast For Armenia Expense Account, P.O. Box 655, Menlo Park, CA 94026, Phone 1-650-326-6634, Fax 1-650-926-5368**), որը հատկացնելու է դրամական միջոցներ, նյութեր և սարքավորումներ՝ տրամադրված

6/6

		Ամերիկայի հայ ճարտարագետների և գիտնականների ընկերության **(AESA – Armenian Engineers and Scientists of America)**, ԱՄՆ–ի Ստանֆորդի, Հարվարդի և այլ համալսարանների հայ ուսանողների միությունների կողմից: Գումարների բաշխվածությունը ըստ տարիների հետևյալն է՝ 2010 թ. նախատեսվում է ստանալ 5.000.000 (հինգ միլիոն) դրամ, 2011 թ. նախատեսվում է ստանալ 12.000.000 (տասներկու միլիոն) դրամ, 2012 թ. նախատեսվում է ստանալ 12.000.000 (տասներկու միլիոն) դրամ, 2013 թ. նախատեսվում է ստանալ 6.000.000 (վեց միլիոն) դրամ: Ընդհանուր գումարի 93%–ը, որը կազմում է 32.550.000 (երեսուներկու միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) դրամ, նախատեսվում է օգտագործել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող սահմանամերձ, հեռավոր, ինչպես նաև փախստականներով բնակեցված որոշ գյուղերի միջնակարգ դպրոցների և նրանց աշակերտների համար դպրոցական կահույք և անհրաժեշտ այլ նյութեր և սարքավորումներ, գրադարաններին գրքեր գրքեր գնելու համար, անապահով և ծնողազուրկ երեխաների համար դասագրքերի տարեկան վարձատրությունը կատարելու, ինչպես նաև այդ դպրոցներում վերանորոգման աշխատանքների կատարելու համար: Ընդհանուր գումարի մնացած 7%–ը, որը կազմում է 2.450.000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) դրամ՝ ԳԱՏԱՀ–ի կազմակերպչական ծախսերն են, որից մոտ 90% աշխատակիցների աշխատավարձ է, իսկ մնացած գումարը գրասենյակային ծախսերն են:: Ծրագրի ընդհանուր ֆինանսական աջակցության ծավալները բաշխվելու են ըստ հետևյալ ուղղությունների՝ –աջակցություն Հայաստանի Հանրապետության միջնակարգ դպրոցներին և աշակերտներին – 32.550.000 (երեսուներկու միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) դրամ, որից՝ ա) աշակերտների համար դպրոցական սեղաններ և նստարաններ գնելու համար – 15.000.000 (տասնհինգ միլիոն) դրամ, այդ թվում 2.000.000 (երկու միլիոն) դրամի – 2010 թ. ընթացքում: բ) անապահով և ծնողազուրկ երեխաների համար կատարել դասագրքերի տարեկան վարձատրությունը – 4.700.000 (չորս միլիոն յոթ

		հարյուր հազար) դրամ, այդ թվում 670.000 (վեց հարյուր յոթանասուն հազար) դրամի – 2010 թ. ընթացքում: գ) ուսումնական պրոցեսը ապահովելու նպատակով դպրոցների համար գնել համակարգչային տեխնիկա և օժանդակ նյութեր, սարքավորումներ, անհրաժեշտ այլ նյութեր, գրենական պիտույքներ, կահույք, կատարել որոշ ծառայություններ – 12.850.000 (տասներկու միլիոն ութ հարյուր հիսուն հազար) դրամ, այդ թվում 1.980.000 (մեկ միլիոն ինը հարյուր ութսուն հազար) դրամի – 2010 թ. ընթացքում: – ԳԱՏԱՀ–ի կազմակերպչական ծախսեր – 2.450.000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) դրամ, որից՝ – աշխատավարձ – 2.200.000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) դրամ, տևողությունը՝ 36 ամիս, սկսած ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ընդունված դրական որոշման օրվանից, այդ թվում 400.000 (չորս հարյուր հազար) դրամի – 2010 թ. ընթացքում: – գրասենյակային ծախսեր – 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ, տևողությունը՝ 36 ամիս, սկսած ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ընդունված դրական որոշման օրվանից, այդ թվում 40.000 (քառասուն հազար) դրամի – 2010 թ. ընթացքում:
7.	Բարեգործություն ստացողը	Նշված ծրագրով բարեգործություն ստացողներ են հանդիսանում Սյունիքի մարզի Վաղատինի միջնակարգ դպրոցը, Սյունիքի մարզի Վաղատուրի միջնակարգ դպրոցը, Սյունիքի մարզի Շվանիձորի միջնակարգ դպրոցը, Գեղարքունիքի մարզի Ախպրաձորի միջնակարգ դպրոցը, Գեղարքունիքի մարզի Վանանի միջնակարգ դպրոցը, Գեղարքունիքի մարզի Մաղինայի միջնակարգ դպրոցը, Արագածոտնի մարզի Անտառուտի միջնակարգ դպրոցը և Սյունիքի մարզի Սիսիանի Արվեստի դպրոցը, որոնց ցուցակը հաստատվել է «Բարեգործի» կողմից:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ներկայացվող ծրագրի տևողությունը կազմում է 36 ամիս, սկսած Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ընդունված դրական որոշման օրվանից (2010-2013 թթ):

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ընդհանուր 36 ամիս տևողությամբ Ծրագրի իրականացման համար ֆինանսական աջակցության ծավալը կազմում է 35.000.000 (երեսունհինգ միլիոն) դրամ: Նշված ծրագրի իրականացման նպատակով նախատեսվող միջոցառումները հանդիսանում են. ա. դրամաշնորհի ֆինանսական և նյութական միջոցների ստացումն և, «Բարեգործի» պայմաններին համապատասխան, սարքերի, նյութերի և այլ անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերումն ու դրանց անհատույց տրամադրումը Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող սահմանամերձ, հեռավոր, ինչպես նաև փախստականներով բնակեցված որոշ գյուղերի միջնակարգ դպրոցներին և նրանց աշակերտներին – տևողությունը՝ 36 ամիս, սկսած ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ընդունված դրական որոշման օրվանից, բ. սահմանված կարգով համապատասխան հաշվետվությունների ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, ինչպես նաև դոնոր կազմակերպությանը – եռամսյակը մեկ, 36 ամսվա ընթացքում, սկսած ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ընդունված դրական որոշման օրվանից: Ընդհանուր 36 ամիս տևողության Ծրագրի իրականացման համար ֆինանսական աջակցության ծավալը կազմում է 35.000.000 (երեսունհինգ միլիոն) դրամ, որը բաշխվելու է՝ 32.550.000 (երեսուներկու միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) դրամ (93%) – Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող սահմանամերձ, հեռավոր, ինչպես նաև փախստականներով բնակեցված որոշ գյուղերի միջնակարգ դպրոցների և նրանց աշակերտների համար, 2.450.000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) դրամ (7%)– ԳԱՏԱՀ-ի ծառայությունների փախհատուցում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել (ինչպես Հանրապետության ներսում, այնպես էլ Հանրապետությունից դուրս) համակարգչային տեխնիկա և օժանդակ նյութեր, լաբորատոր սարքավորում և կահույք, գրենական պիտույքներ, ինչպես նաև տարբեր

		ծառայություններ՝ ընդամենը 27.850.000 (քսանյոթ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) դրամի (այդ գումարի չափով ակնկալվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ հարկային և մաքսային արտոնություններ):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Նշված ծրագրից, որպես կազմակերպչական ծախսեր, «Բարեգործի» կողմից ԳԱՏԱՀ–ին տրամադրվելու է գումարի 7%, ինչը կազմում է 2.450.000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) դրամ: Այդ գումարից 2.200.000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) դրամ նախատեսվում է ծախսել որպես աշխատակիցների աշխատավարձ, իսկ 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ՝ որպես գրասենյակային ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ	ՀՀ «Բարեգործության մասին» օրենքի դրույթներին համապատասխան՝ Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման արդյունավետությունը, հիմնականում, վերահսկվելու է դոնոր կազմակերպության կողմից՝ ներկայացվող ընթացիկ հաշվետվությունների հիման վրա: Միևնույն ժամանակ, ԳԱՏԱՀ–ի կողմից, սահմանված կարգով, համապատասխան հաշվետվություններ են ներկայացվելու ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:

Ծրագրի ղեկավար Գ.Մանասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2010 թվականի N Մ -262- Ա
քաղ. Երևան

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (4-ՐԴ ՓՈՒԼ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 10-ի N 3/3.8-1/1905-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի 7-ի N 415-10, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 01/14.2/1055-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 21-ի N 11896/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հյուսիսային պողոտա 10/2, ՀՎՀՀ՝ 02705657) իրականացվող՝ 3623192040 դրամ ընդհանուր արժեքով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Մատենադարան» հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Մատենադարան» հիմնադրամի
Գործադիր տնօրեն
Ռ. Չիբչյան
10 «մարտի» 2010 թ.

ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Մատենադարան" Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ ՊՈԱԿ նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների ծրագիր (4-րդ փուլ)

1	Ծրագրի նպատակը	Մատենադարանի նոր մասնաշենքի կառուցման 4-րդ փուլի աշխատանքների իրականացում
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում նախատեսում են օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենքով սահմանված արտոնություններից
3	Բարեգործը	ՌԴ քաղաքացի բարերար Ս. Համբարձումյան՝ բնակվող ՌԴ ք.Մոսկվա, Տրուբնիկովսկի նրբ., տուն 30, բն. 1 (անձնագիր N 45 01 241836, տրված 13.07.2001թ. ք. Մոսկվա "Սոժայսկի" ՆԳԲ-ի 2-րդ անձնագրային բաժնի կողմից), այլ ֆիզիկական անձիք
4	Ծրագրի կատարողը	"Մատենադարան " հիմնադրամ (ք. Երևան, Հյուսիսային պողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ՀՎՀՀ 02705657
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 53, ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ ՊՈԱԿ
6	Ծրագրի բյուջեն	3 623 192 040 / երեք միլիարդ վեց հարյուր քսաներեք միլիոն հարյուր իննսուներկու հազար քառասուն դրամ/
7	Բարեգործություն ստացողը	ՀՀ Կրթության և գիտության նախարարության "Մատենադարան" Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ ՊՈԱԿ
8	Ծրագրի իրականացման տևողությունը	10.03.2010 թ. -հոկտեմբեր 2011 թ.

		ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/	ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Նախագծերի փոփոխման և հեղինակային հսկողության աշխատանքներ (տող 1+տող2)	15,413,580	
		2. Շինարարական և ինժեներական համակարգերի աշխատանքներ (տող 3+տող 4)	1,165,043,490	
		3. Շինարարական ապրանքների և սարքավորումների ներմուծում	1,477,910,070	
		4. Շինարարական և այլ ապրանքների ձեռք բերում	928,980,000	
		5. Կազմակերպչական ծախսեր	35,844,900	
		ԸՆԴԱՄԵՆԸ	3,623,192,040	
		ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/	ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
10	Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Նախագծերի փոփոխման աշխատանքներ	5,850,000	«Մեսչյան արքիտեքտ» ՍՊԸ
		2. Հեղինակային հսկողություն	9,563,580	«Մեսչյան արքիտեքտ» ՍՊԸ
		3. Շինարարական աշխատանքներ, այդ թվում՝	908,033,490	
		3.1 հողային և քանդման աշխատանքներ	11,864,580	
		3.2 երկաթբետոն, երեսպատ սալիկներ, հատակի, առաստաղի, պատերի, միջնահարկերի և աստիճանավանդակների աշխատանքներ	457,833,870	
		3.3 մետաղական իրերի տեղադրում, պատերի ջրամեկուսացում, հակահրդեհային, սեյսմիկ շրջերի աշխատանքներ	15,185,040	
		3.4 դռներ և պատուհաններ	117,000,000	
		3.5 տանիքի և այլ աշխատանքներ	70,200,000	
		3.6 կաթսայատան, բարեկարգման և ժամանակավոր կառույցների աշխատանքներ	103,350,000	
		3.7 արտաքին էլ. սնուցում, ջրամատակարարում, կոյուղու, ստորգետնյա կոյուղու, օպտիկական մալուխի աշխատանքներ	132,600,000	
		4. Ինժեներական համակարգերի աշխատանքներ, այդ թվում՝	257,010,000	
		4.1 հովացման, ջեռուցման, օդի կարգավորման համակարգեր և կաթսայատան տեղադրում	98,280,000	
		4.2 էլեկտրատեխնիկական աշխատանքներ	63,180,000	
		4.3 անվտանգության, հեռահաղորդակցման, հրդեհամարման համակարգ.-ի աշխատանքներ	52,650,000	
		4.4 սառը և տաք ջրամատակարարման, ներքին ջրահեռացման աշխատանքներ	6,630,000	
		4.5 գազային հրդեհամարման աշխատանքներ	26,130,000	
		4.6 վերելակների մոնտաժման աշխատանքներ	10,140,000	
		5. Ներմուծում, այդ թվում՝	1,477,910,070	
		5.1 մարմարե, կերամոգրանիտե, գիպսաստվարաթղթե սալիկներ, տանիքի ապրանքներ	296,600,070	
		5.2 հովացման, ջեռուցման, օդափոխության համակարգեր	622,050,000	
		5.3 էլեկտրական ապրանքներ	241,800,000	
		5.4 անվտանգության, հեռահաղորդակցման, հրդեհամարման համակարգեր	164,970,000	
		5.5 սառը և տաք ջրամատակարարման, գազային հրդեհամարման համակարգեր	68,250,000	
		5.6 վերելակներ	84,240,000	
		6. Ձեռք բերում, այդ թվում՝	928,980,000	
		6.1 շին ապրանքներ. բազալտ, տրավերտին, տուֆ,ցեմենտ, ավազ, պեմզաբլոկ, դռներ և այլն	885,300,000	
		6.2 ջեռուցման, հովացման, էլեկտրական անվտանգության, հրդեհամարման, սառը և տաք ջրամատակարարման, գազային հրդեհամարման ապրանքներ	43,680,000	
		7. Կազմակերպչական ծախսեր	35,844,900	
		ԸՆԴԱՄԵՆԸ	3,623,192,040	
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	1. աշխատավարձ և սոց. վճարումներ	22,837,500	«Մատենադարան» Հիմնադրամ
		2. գրասենյակային ծախսեր	8,565,340	
		3. այլ ծախսեր	4,442,060	
		ԸՆԴԱՄԵՆԸ՝	35,844,900	
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Կրթության և գիտության նախարարություն		
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի կատարման արդյունքների հանձման-ընդունման միջոցով, սահմանված կարգով տեղեկատվություն ներկայացում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին		

Գլխ. հաշվապահ Ղ.Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ապրիլի 2010 թվականի N Մ - 261 - Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ N 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ» ՊՈՒԱԿ-Ի ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 22-ի N3/3.8-1/2339-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի 21-ի N655-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 24-ի N12233/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1925000 դրամ արժողությամբ «Շիրակի մարզի Արթիկ քաղաքի N 1 հատուկ դպրոց» ՊՈՒԱԿ-ի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2010 թվականի ապրիլի 14-ին կնքված N ՀՀ-Կ-07/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահավորման աշխատանքների իրականացում՝ 1925000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Կարդաշյան
«16» ապրիլի 2010թ.

6/4

ԾՐԱԳԻՐ
«ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոցի կահավորում»

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոցը անհրաժեշտ կահույքով
2.	Ծրագրի բարեգործական որակումը նպատակը	Ծրագրով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Շիրակի մարզ Արթիկ քաղ. կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 1.925.000,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոց
7.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2010թ ապրիլի 14-ից մինչեւ 2010թ. հուլիսի 14-ը:

8.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոցի համար 12 հագուստի պահարանների և 15 մահճակալների պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 1.925.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության եւ կրթության նախարարության հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

6/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2010 թվականի N Մ -260- Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻԻ ՋՐԱՆՑԻ ԵՎ ԿՈՅՈՒՂՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 22-ի N 3/3.8-1/2311-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի 20-ի N656-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 23-ի N12238/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 700000 դրամ արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի ջրանցի և կոյուղու վերակառուցման նախագծման փորձաքննություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտաքերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2010 թվականի ապրիլի 7-ին կնքված N 28 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծման փորձաքննության իրականացում՝ 700000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Վ Ա Ծ է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Վրա Վարդանյան

«15» ապրիլի 2010թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
«ԼՂՀ Շուշիի ջրանցքի և կոյուղու վերակառուցման
նախագծման փորձաքննության ծրագրի մասին
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ»-ի

1.	Ծրագրի նպատակը	Միտառիս ոռոգման ցանցերի բարեգործական վերականգնում
2.	Ծրագրի կարճաժամկետ գնահատականը	Օրենքով սահմանված արտոնություններից օգտվել խորհրդակցելով
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՎՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման կայքը և բնագավառը	ԼՂՀ Շուշի, ջրանցքային համակարգի բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 700.000,00 դրամ:
6.	Բարեգործությունն ստացողը	ԼՂՀ Շուշիի քաղաքապետարանը

6/3

7.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2010թ ապրիլի 07 -ից մինչեւ 2010թ.հուլիսի 07-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից Շուշիի խմելու ջրի ներքին ցանցի, կենցաղային և հեղեղատար կոյուղու համակարգերի վերակառուցման նախագծման փորձաքննություն՝ 700.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ապրիլի 2010 թվականի N Մ-259-Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻԻ ՄԱՐԻԱՄՅԱՆԻ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 9-ի N 3/3.8-1/1840-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 9-ի N10556/3-4 եզրակացությունները ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 450000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի Մարիամյանի օրիորդաց դպրոցի նախագծման փորձաքննություն» օժանդակ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Արտագերատեսչական փորձաքննություն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02524943) 2010 թվականի մարտի 23-ին կնքված N Փ-01/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի Մարիամյանի օրիորդաց դպրոցի վերակառուցման-վերականգնման նախագծման փորձաքննություն՝ 450000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Հայաստան» համահայկական հիմնադրամին նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում շահագործվող կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն և Հայաստանի Հանրապետությանն կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Հարությունյան
«29» մարտի 2010թ.

«ԼՂՀ Շուշիի Մարիամյանի օրիորդաց դպրոցի նախագծման փորձաքննություն» օժանդակ ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Վերակառուցել ԼՂՀ Շուշիի Մարիամյանի օրիորդաց դպրոցը
2.	Ծրագրի բարեգործական որակմամբ նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ԼՂՀ Շուշի, կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 450.000,00 դրամ:
6.	Բարեգործությունն ստացողը	ԼՂՀ Շուշիի Մարիամյանի օրիորդաց դպրոցը

7.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2010թ մարտի 23 -ից մինչեւ 2010թ.հունիսի 23-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	«Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից ԼՂՀ Շուշիի Մարիամյանի օրիորդաց դպրոցի վերակառուցման-վերականգման նախագծման փորձաքննություն՝ 450.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

6/13.9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2010 թվականի N Մ-258-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-39-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«ՍՕՍ - մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 14-ի N 3/3.8-1/2030-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 16-ի N 11406/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.

1. Սահմանել, որ «ՍՕՍ - մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 03517269) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 12-ի «ՍՕՍ - մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-39-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման՝ հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված՝ N 114198702 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2010 թվականի ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 480000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Դ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2009 թվականի հուլիսի 23-ին կնքված՝ N 10541396 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2010 թվականի ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում շարժական հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ ամսական 550000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլ 2010 թվականի N Մ -257- Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ- 642-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիր»)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի մարտի 30-ի N12/8-11-1902 գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 3/3. 8-1/1759-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 9-ի N 10564/3-4 եզրակացությունները, ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի մասին (երկրորդ փուլ) N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

